


ՄԻՈՆ



Ս. ՅԱԿՈԲՅԱՆԻ ՎԱՆԻ ԵԱՅՈՅ ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

«سیون» مجله ارمنیه شهریه ، دینیة ، ادبیه ، ثقافیه ، لغة والبیان
"SION" an Armenian Monthly of Religion, Literature and Philology

ԲՈՎԼԱՆԻԿՈՒԹԻՒՆ

	ԾԵՄ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	
— Հայց. Եկեղեցւոյ լոյս հաւասօր	ՄԱՂԱՔԻԱ ՊԱՏՐԻԱՐԿ ՕՐՄԱՆԵԱՆ 289
ԿՐՕՆԱԿԱՆ	
— Դաւիթի կեանքին մէջ մեծութեան արարքներ ԳՐ. Ա. ՍԱՐԱՅՅԱՆ	296
ԲԱՆԱՍՏԵՂՇԱԿԱՆ	
— Մեղքի շուտաներէն	ԵՂԻՎԱՐԳ 300
— Հրածնէս հոգեւան	ՀՄԱՅԵԱԿ ԳՐԱՆԵԱՆ 304
— Այս ծառերը, Տէ՛ր ...	" " 304
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
— ԺԳ. դարու հայերէն ձեռագիր մը	ԶԱԻԷՆ ՎՐԻ. ԿՐԶՈՒՄԱՆԵԱՆ 305
— Հայերէն ձեռագիրներ Պոսրքնի մէջ	" " " 308
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ	
— Առաջին բուրբ Պեսոսի առ Ակակ	Ն. ԵՊՍ. ՇՈՎԱԿԱՆ 309
ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ	
— Ս. Կարապետ	" " " 311
ԿԱՆՈՆԱԳԻՏԱԿԱՆ	
— Վարդապետութեան ասիմանները Հայ Եկեղեցւոյ մէջ (ՎԷՐՂ՝ 18)	«ԼՈՑՍ» 312
Ակամայ անգրագարձութիւններ	ԽՄԲ. 316
Նօթ եւ նիւթ	324
Պատճառական Ձեկոյց Հ. Բ. Ը. Միութեան Կեդր. Վարչութեան	327
Գնահատան	329
Վերնրատարակում «Revue des Études Arméniennes» հանդէսին	330
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ	
— Եկեղեցականք-Բեմականք	331
— Պատճառականք	332
Բարեպաշտական նուէրներ	333
Քանկ նիւթը 1962 տարւոյ	334

ՍԻՈՆ-ի Տարեկան Բաժնեգիրն է,
բոլոր երկիրներու համար, Անգլ. Շրիին 20
Redaction of the Armenian Monthly SION
Armenian Patriarchate,
P. O. B. 4001
Old City - Jerusalem (Jordan)

—≡ Ս Ի Ո Ն ≡—

Լ.Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1962

« Նոյեմբեր - Դեկտեմբեր »

Թիւ 11-12

ԻՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԼՈՅՍ ՀԱՒԱՏՔԸ

Նախնեաց գիրքերէն յետոյ Եկեղեցւոյ երգերուն ալ ձեռք կը գարնէ հակառակորդը, և իբր փաստ կը յիշէ Եկեղեցւոյ տօնական շարականը «Կեցո գորդի ծառայի քո, գոր ի Հոովմայ գահիցն վերապատուեցեր, ուր եղին զվէմն հաւատոյ հիման Սուրբ Եկեղեցւոյ»։ Այս շարականի հեղինակութիւնը Ս. Սահակ Պարթևի կ'ընծայէ և կամ անոր աշակերտներէն մէկուն, Հոովմայ գահը Պապութեան աթոռ կը հասկնայ, որդի ծառայի քո Լուսաւորիչ կ'ընէ, և վերապատուեցերը Կաթողիկոսական իրաւասութիւն, և կը գտնէ կատարեալ Լատինականութիւն։ Սակայն Ս. Սահակ Պարթևը կը շփոթէ Սահակ Զորափորեցի Կաթողիկոսին հետ, որ կրնայ զայն շարադրած ըլլալ, թէև ոչ իւր բերնէն։ Շարականին սկիզբը կը յիշուի նորոգ շինուած Եկեղեցի մը, «Զնորոգեալս ի մէնջ տաճարս ընկա՛լ քեզ ի բնակութիւն»։ Ապա Քրիստոսի պատկերի յիշատակութիւն կը լինի, «Զկենդանադիր քո ծառայական կերպի»։ Արդ Ղևոնդ պատմիչ կը գրէ որ՝ Աշոտ պատրիկ շինէր զԵկեղեցին Գարունից յիւրում ոստանին, և զկենդանադրեալ զպատկեր մարդեղութեան Քրիստոսի օծեալ ի մտիցն արև մեծաքանջ զօրութեամբ հանգուցանէր ի նմա, և նորա անուամբ զԵկեղեցին անուանեաց» (Ղևոնդ էջ 16)։ Ասողիկ նոյնը կը կրկնէ, իսկ Վարդան կրկնելէն ետք կը յաւելու թէ «ի նաւակատրան երգեաց Զորս ըսա պատկերին» (էջ 71, Տպ. Վեներտ)։ Ահա շարականը և շարականին իմաստը։ Աշոտ Բագրատունին, շուրջ՝ 685 թուին Կ. Պոլիսէն պատրիկութեան պատիւ կը ստանայ և միանգամայն Փրկչական պատկեր մը իբր նուէր, զոր Աշոտի որդին կը բերէ իրեն, որդին ալ պատուեալ պատկերով և աստիճանով, իսկ պատկերը կը դնէ Աշոտ՝ Գարունից նորաշէն Եկեղեցւոյն մէջ, և այս առթիւ Աշոտ է որ կ'երգէ այն նոր շարականը, զոր հաւանականաբար շարադրեց Սահակ Զորափորեցի ժամանակին Կաթողիկոսն։ Աշոտ իրեն որդւոյն համար կ'ըսէ՝ «Զոր ի Հոովմայ գահիցն վերապատուեցեր», ակնարկելով պատրիկութեան պաշտօնին և պատկերին։ Հոովմայ գահն Կ. Պոլիսն է, որ իբրև նոր-Հոովմ ծանօթ է ամենուն, «Ուր եղին զվէմն հաւատոյ»։ Կ. Պոլսոյ տիեզերական Ս. Ժողովոյ հաւատոյ դաւանութիւնն է՝ Լամբրոնացին երբ «Զորս ըսա պատկերի» շարականը կը յիշէ չնայած անու-

նով Յոյնը կ'իմանայ և ոչ Հռովմայեցիք: Եւ այս ամէնը այնչափ անգամ գրուած է, բայց Հայ Եկեղեցւոյ հակառակորդք կը համարձակին նորէն ըսել, որ այդ շարականին մէջ Լատինականութիւն կայ:

Այս շարականէն յետոյ յառաջ կը բերէ մի քանի շարականներ ևս, որոց մէջ տեսած է Գլուխ, Հիմն, Սիւն, Վէմ ևն. բառերը և կոչումները և այդ բառերէն Հռովմայ ի նպաստ հետևութիւններ կը հանէ: Սոյն սքանչելի երգերէն զոր մեր Հայրերը յօրինեցին իրենց բանաստեղծական գրչով և ճարտասանական սճով և գարգարուն ձևերով, ի գուր է դաւանական փաստեր քայել: Պետրոսի տրուած՝ Վէմ, Գլուխ, Փակող արքայութեան կոչումները միայն Պետրոսի համար տրուած չեն, այլ բոլոր Առաքելոց: Սակոբ Տեսնեղբայր ալ կոչուած է «Գլուխ Առաքելոց Սրբոց», Պօղոս հրեշտակներէն իսկ վեր դասուած է, «Անմարմնոց դասուց հրեղինաց հողեղէն բնութեամբ գերազանցեալ և բարձրացեալ յերկնային խորանան»: Շարականին հեղինակը Յովհանն Օձնեցի Հայրապետն է հաւանաբար, շատ զեղեցիկ կերպով կը սկսի հաստատելով թէ՛ Եկեղեցին Քրիստոսի վրայ շինուած է, որ հաւատքի վէմն է, որ և կը ցնծայ Ս. Առաքելաներուն յիշատակովը: Շարականներու մէջ Առաքելներուն ամէնքն ալ կոչուած են «Սիւնք հաւատոյ Կաթողիկէ Եկեղեցւոյ», «Բարեկամք Քրիստոսին». «Եւտաւորք անեղ ատենին»: Իսկ հողեղէնչ բանաստեղծ Վարդան Արևելցիի գրչին տակ ամէնքն ալ իրենց նկարագրով կը ներկայանան: Պետրոսն ու Անդրէասը հաւասարապէս հիմունք են՝ աշխարհակիր բազկին ձեռքովը գրուած անշարժ լեռներ և հաւատքի հարազատ վէմեր: Յովհաննէան ու Յակոբոսը բարեբուն հողոյն վտակներն են, աիեգբրի որոտմունք, լուսափայլ աստղեր, Յիսուսի լանջքին վակասները: Բարթողիէոսն ու Թադէոսը հայրատունկ ուղոյն հրեղէն պարիսպներն և բարձր աշտարակներն են, Հայաստանեայց Եկեղեցւոյ Հայրեր: Թովմասն ու Փիլիպպոսը Քրիստոնէական հօտին անմահ արօտն ու հանգստեան լուրն են: Յակոբոս Ալփեայ և Յուդա Յակոբեան մաքրագործ հողիէն ընտրեալ և ձիւնափայլ անօթներ են, աշխարհի իշխաններ: Շմաւոն և Մատթիա Ս. Երրորդութեան Խորհուրդին հազարապետներն են: Մատթէոս կենաց Բանին կանուխ քարոզիչն է և աւետարանիչը, փրկութեան երզը, մարդկային ազգի պարծանքը: Պօղոս անճառելի զբախտին և երրորդ երկկնքին տեսնողն է, վերջապէս համատարած հայր է: Այս խօսքերը բաւական են ցուցնելու թէ մեր Սրբազան Հայրերը և Հայրապետները ի՞նչ հողով և ի՞նչ երանգով կը գրեն: Ինչպէս ամենուն համար խորհրդաւոր զովեստներ կ'առատացնեն, ինչպէս ամէն Առաքելները հաւասար կը նկատեն փառօք և իշխանութեամբ:

Շարականներէն յետոյ կը յիշէ Անձևացեաց Եպիսկոպոս Խոսրովը, նորա որդին Գրիգոր Նարեկացին, Մազիսարոսը, Ներսէս Շնորհալին, և Ներսէս Լամբրոնացին, որոց գրուածոց մէջ գտած է դարձեալ՝ առաջին, վէմ հաստատեալ, զլուխ Առաքելոց, զլուխ հօտին, Կեփայեան վէմ, կոչումները և բառերը: Այս բառերու և կոչումներու զործածութեան մասին դարձեալ կը կրկնեմք թէ աւելորդ է այդ բառերէն հաւատոյ դաւանութիւններ ստեղծել: Եթէ այդ կոչումներէն դաւանական կէտեր ի մէջ պիտի բերենք և Առաքելական դասուն մէջ խորութիւն պիտի դնենք, այն ատեն թիրևս համատարած հայրը, և անճառելի

դրախտը տեսնող Պօլոսը, վերկուժեան երզը և մարդկային ազդի պալժանք Մատթէոսը, Քրիստոնէական հօտին արօտն ու հանգստեան շուր թովմասը, թերես աւելի բարձր լինին իրենց այդ յատկութիւններով քան զՊետրոս: Յակոբ Տեառնեղբայր ալ Առաքելոց գլուխ կոչուած է, ուրեմն միայն Պետրոս չէ գլուխը: Մէկուն տրուած զովեսաը կամ բարձրութիւնը չնուազէր: Պետրոս հաւատոյ հիմ է վասնզի ամէն Առաքեալներ ալ հիմեր են (Յայտ. ԻԱ. 14): Պետրոս Եկեղեցւոյ հաստատութիւն է, վասնզի ամէն Առաքեալներ ալ Եկեղեցւոյ հաստատութիւն են, իսկ անուններէ, մականուններէ կամ յատկութիւններէ առնուած նմանութիւններ, ձայնով կը տարբերին, այլ ոչ իմաստով: Դարձեալ Առաքեալները ձրից և կրից, կարգի և արդեանց տարբերութիւններ կ'ունենան և ունեցան, այլ այսու ո՛չ տարբեր դասակարգ կազմեցին և ո՛չ իբրաբու վրայ իշխանութեան կամ ճոխութեան առաւելութիւն ստացան: Եկեղեցին ամէնքը հաւասարապատիւ ճանչցած է: Ամէնքը միևնոյն իշխանութիւնը առին Քրիստոսէ, միևնոյն Ս. Հոլին ընդունեցան Քրիստոսի փշմամբը, միևնոյն Ս. Հոգով լեցուեցան վերնատան մէջ, և Քրիստոնէութեան դատին համար ամէնքը աշխատեցան և ամէնքը Եկեղեցւոյ սրէներ եղան: Այս է ահա Եկեղեցւոյ Հարց ողջամիտ վարդապետութիւնը:

Խոսքով Անձևացին իր Ժամազրոց մեկնութեան մէջ (էջ 224-225), կը յորդորէ ժողովուրդը՝ որ ազքատասէր, հեզ և համբերող լինին, և իւրաքանչիւր առաքինութեան իբրև օրինակներ կը ներկայացնէ Հին և Նոր Աւիստէն նշանաւոր անձեր. Աբրահամ, Յուր, Մովսէս, Դաւիթ, Պօղոս և Պետրոս: Ասոնցմէ վերջ կը գրէ. «Սոցին նմանեցուք և մեք, սոցին հազորդեցուք»: Գրուածին նպատակին չնայելով՝ լոկ գլուխ Առաքելոց և փակող արքայութեան բառերէն և կոչումներէն սխալ հետևութիւններ հանել ներեալ չէ: Անձևացեաց Եպիսկոպոսն իր մարող զործոյն մէջ կը հետևի Ս. Հարց վարդապետութեան, և Առաքելական թուղթերը իր մեկնութեանց հիմ ըրած է և անոր համար կը գրէ (էջ 68), «Քրիստոսի զուով անդամք ամենեքեան ի գլուխն մեր յօղեցուք սիրով»: Քրիստոսէ գատ ուրիշ գլուխ չընդունի նա:

Անձևացեաց Եպիսկոպոսի որդին Նարեկացի Գրիգորն ալ կ'ամբաստանուի իբրև Լատինադաւան՝ որովհետև զեր է, «Իսկ լծակից կցորդակից (Պօլոսի) և առաջին և սկզբնաթիւ և նախամեծարն, վէմն հաստատեալ և արձանն հիմնացեալ, քարն անուանի եօթնաթիւ դաւանութեամբ, յարմարագրեցեալ ըստ չափոյ խորհրդական ամանակի սկսման և յրման ընտրեալն և փառաւորեալն կեփաս»: Նարեկացին այս սողերով Հռովմէադաւաններուն կարծիքը ո՛չ թէ կը հաստատէ, այլ կը հերքէ: Առաջին բառին քով սկզբնաթիւ գնելով կը հասկննէ որ Պետրոսի Առաջին լինելը Առաքելոց մէջ սկզբնաթիւ լինելն է, և ո՛չ թէ Առաքելոց Պետրոս: Իսկ վէմ բառին քով գրուած են քառ և արձան բառերն ալ, որ պարզապէս անուան ստուգաբանութեամբ կազմուած գոհաբանութիւն լինելը ցուցուի, ինչպէս և «եօթնաթիւ դաւանութեամբ յարմարագրեալ» բացատրութիւնը Քրիստոս անուան եօթը տառերը կը ցուցնէ միայն: Նարեկացի մեծ վարդապետը Առաքելոց ներքող հիանալի կերպով զրած է, տասներկու Առաքելներէն չգատելով եօթանասուն և երկու աշակերտներն ալ և իր չնաշխարհիկ

բանաստեղծի թռիչով կ'ազդէ ամէն մարդու վրայ, և ով որ կարդայ, անոր մէջ կը տեսնէ Առաքելական դասուն հոգին, պաշտօնը, զործը որ Վարդապետիս զրչին տակ նոր փայլ մը առած են: Առաքեալները համապատիւ, համահուսար իշխանութեամբ կը ներկայացնէ Աւետարանի վրայ հիմնուած (էջ 149, 151) և կը զրէ, «Սուրբ և երջանկազունդ դու մար դասու Առաքելոյ . . . զբնակու. թիւն վեհին բարձրութեան զփականս վերընկալայք և ճողոցայք և փարթամացայք փառօք տիրուպէս Աստուածացեալք շնորհօք բանին, իշխանք պսնծացայք, պետք զլիաւորք . . . Քահանայք քաւութեան, այցելուք երևելիք»: Երանի՛ թէ Հայ Եկեղեցւոյ նախատղները անկեղծ սրտով կարդային այդ հոգեշունչ գրուածները:

Այսչափ Եկեղեցականներէն յետոյ աշխարհական մատենադիր մըն ալ կը ներկայացնէ տեսարակին հեղինակը իբրև Լատինադասուն: Այս անգամ Փրիզոր Մազիստրոսի տո Աբրահամ ամիրայ գրած Հատարովական նամակէն յառաջ կը բերէ իր վկայութիւնը, «Խաչի զլիւիվայր Սուրբն Պետրոս, և համբուրէ զխաչն և ի խաչին գնոյն քարոզէ, զայն որ վէճն է հաւատոյ հիման Առաքելոյ և Մարգարէից, և Անդէաս խաչի, զիրկա առեալ զխաչուն համբուրէ և ասէ, Վայ բեզ խաչ, և Պօղոս զլիաւոր և գնոյն քարոզէ, «Ինձ քա՛ւ լիցի պարծիլ, բայց միայն ի խաչն Տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Այս ձևով ըստած է նաև Մարկոսի, Յովհաննու և Թադէոսի համար իւրաքանչիւրին քարոզած նիւթը ի մէջ բերելով: Պետրոս է որ կը քարոզէ զվէճ, և Քրիստոսն է որ Առաքեալներու և Մարգարէներու հաւատոյին վէճն է, ճիշդ Պօղոսի իմաստով (Եփես. Բ. 20):

Տեսարակը Ներսէս Շնորհալին ալ կը ներկայացնէ իբր իւր Հոովմէադաւան կարծեաց պաշտպան. որովհետև զրեր է, «Նա զի լուաք թէ Սուրբ և առաջին ամենայն Եպիսկոպոսաց Հայրապետն Հոովմայ և փոխանորդ Պետրոսի՝ Առաքելոյ»: Բայց հաւատարիմ տպագրութիւնները այսպէս չեն ըսեր, այլ պարզապէս կը զրեն, «Նա զի և լուաք՝ թէ Հայրապետն Հոովմայ և փոխանորդ Պետրոսի Առաքելոյ յիւրոց անտի իմաստնոց առաքեաց խօսիլ . . . վասն միաբանութեան հաւատոյ» (Ընդհանրական Տիպ Երդմ. էջ 117): Մեր Շնորհալի Հայրապետը, Հոովմայ Եպիսկոպոսը լոկ Հայրապետ Հոովմայ կը կոչէ, որ Առաքելական աթոռոյ մը աթոռակալ է, և իւր աւանդութեամբ Պետրոսի աթոռոյն յաջորդ ալ կընայ լինիլ, այլ ասոր մէջ ո՛չ զիաւորութեան խնդիր կայ և ո՛չ ալ Լատինադաւանութեան: Աւելորդ բառերը Շնորհալւոյ զրչէն չեն: Այս կտորէն վերջ Շնորհալւոյ չափաբերական զրուածց մէջէն առաջ կը բերէ այն տողերը, որոց մէջ կեփայեան վէճ և Առաքելոց զլիաւոր կոչումները կան: Միշտ անունի և զովեստի և ստուգաբանական դարձուածքի խնդիր է, նա մանաւանդ վէճն կեփայեան ո՛չ թէ միշտ Պետրոս-կեփան. այլ Պետրոս-կեփառէ դաւանեալ վէճն է, Քրիստոսն Աստուած և Քրիստոսի Աստուածութիւնն, բուն իսկ անգարձակամ վէճը որուն վրայ հիմնուած է Քրիստոնէութեան հաւատքը: «Ի զրել բանիւ Աստուածական, ոտիւք չափել քերթողական, վասն էութեանն աննասական, և Բանին օր մարդեղութեան, ո՛չ նորաձև և անշանն, ինէն շինած առանց հիման, այլ ի վերայ անշարժական. վիսին եղեալ սա կեփայեան» (Ն. Շնորհալի էջ 222-3): Մինչ Պետրոս ընդ Շնորհալւոյ անշարժաւ

կան վէճ մը, վասնզի նա իրօք շարժած է ուրացութեամբ, և Պետրոս զհետ երթալը նըմին, ի յազկանէ շարժեալ վիմին. թողոյր երիցս զբազմալինն (Ն. Ծնորհալի, էջ 205):

Ծնորհալի Ս. Հայրապետին բացատրութիւնները պարզ են և յորոշ, և ընդհանուր Եկեղեցւոյ վէճ և հիմ Քրիստոսը միայն զհասէ և ո՛չ զայլ ոք, և Աւետարանի թի վերայ այդը վիմի՞ն խօսքը Աւետարանի ոգւոյն համաձայն Քրիստոսի վրայ կը հասկնայ, և իր այդ ճշմարիտ դաւանութիւնն ու մեկնութիւնը դարուց ի դարս մեր ականջներուն կը հնչեցնէ, թեւ սրբ այս դաւանութիւն ճշմարիտ հաւատոյ՝ հիմն է Աստուածայնոյ տաճարիս որ ի մեզ: Իսկ գործք բարեաց շինուածն է ի վերայ այսը հիման, որպէս և Տէրն զդաւանութիւն Պետրոսի եղ որպէս զվէճ՝ հիմն իմանալի Եկեղեցւոյ իւրում (Ընդհանրական, էջ 12):

Ծնորհալիէ վերջ ներսէս Լամբրոնացիի ատենաբանութենէն ալ մի քանի կտորներ ի մէջ կը բերէ հակառակորդը, և կ'ուզէ անոնց մէջ Հռովմէադաւան գրութեան հաստատութիւնը տեսնել: Սակայն Լամբրոնացին իւր ատենաբանութիւնը խօսած չէ Հռովմայի ժողովին մէջ, ինչպէս կը կարծէ նա, այլ Տարսնի ժողովին համար զրած է, ուր ո՛չ թէ Լատինաց այլ Յունաց հետ միութեան խնդիր կար: Լամբրոնացին ատենաբանութիւնը հիանալի է իր ճարտարխօսութեամբ և իր բարձր գողափարներով: Տարսնի Եպիսկոպոսը Տարսնի փողոյն Պօլոսի ճշմարիտ արձագանգն է, սէրն է անոր ատենաբանութեան հիմը: Չկայ անոր մէջ ո՛չ զերագահութեան և ո՛չ զերիշխանութեան գողափար մը, այլ նա կ'աւազէ որ նախկին Եկեղեցւոյ, հինգ դարերու Եկեղեցւոյ միութենէն հեռացած են բոլոր Քրիստոնէաները: Առաջին Եկեղեցիք խարութիւն չունէին իրարու մէջ, այլ սիրով միութեան վէմին այսինքն Քրիստոսի վրայ հաստատուած էին, թիայց յորժամ միութիւն տիեզերաց պառակտեցաւ պատահումն որպէ՛ս. յորժամ ի վերայ զանազան վիմի կարծեցաք զհաւատս մեր շինել և ընդ միմիանս սկսաք մարտնչիլ՝ կործանումն որքան: Յորժամ մարմինն Քրիստոսի քակտեցաւ ի միմեանց՝ վէրն անտանելի, յորժամ անդամքն միմիանց թշնամի դարձան՝ վիրաւորեալքն անչափ, յորժամ զմիջորդն խաղաղութեան զՏէր մեր Յիսուս Քրիստոս թշնամութեան առաք նիւթ՝ պտուղ նորին փոխանակ սիրոյն ատելութեան» (էջ 121-2): Տարսնի Եպիսկոպոսը կը գրէ թէ Եկեղեցւոյ զուլիք մէկ է, և այն ալ Քրիստոսն է. ամէնքն Անոր անդամներն են: Եւ այսպէս շնորհօքն Աստուծոյ տիեզերք յուսովն առ Քրիստոս տաւաղին, ամենցուն յուղիղն կալով պողոտայ՝ յիւրաքանչիւր ազգս և աշխարհս: Եւ մի զլիտն է անդամ Սպանիա (Սրբաւուրէն նշանակութեամբ) և Արևելք, Յոյնք և Բարբառոսք, Հայք և Վիրք, Ասորիք և Եգիպտացիք, ի նա են յարեալ ամենքեան հոգւով, և զնա զգեցեալք հաւատովք» (էջ 148): Ան Լամբրոնացին քարոզութիւնը: Եւ ինչպէս կը յանդգնի հակառակորդն կարծել թէ Լամբրոնացին Լատինականութիւն կը քարոզէ: Հռովմէադաւան Վարդապետները երբ ցին խօսքերը կը կրճատեն, կը բաժնեն, կ'սյլ սյլեն, կը մեկնեն, մեր Հայրերուն ազգամիտ ոգին ալ փոփոխած չե՞ն ըլլար: Լամբրոնացին Եկեղեցւոյ միութեան կեդրոնը զՔրիստոս կը ճանչնայ և միայն զՔրիստոս: Եթէ ուրեք թոր հիմնեցաւ

ի վերայ Պետրոսի» բացատրութիւն մը կայ այն Պետրոսի դաւանութեան միայն կ'ակնարկէ, և ո՛չ Պետրոսի անձին, զի շատ յայտնի է և պարզ կերպով բացատրած է Քրիստոսի միայնոյ Եկեղեցւոյ բուն հիմն լինելը (էջ 102): «Ես հիմն եղի զԵրուսալէմ Քրիստոս, արդ իւրաքանչիւր ոք զգոյշ լինիցի ի շինելն . . . զի դուք էք տաճար Աստուծոյ կենդանւոյ»: Եւ Քրիստոս իբրև զորդի իշխէ ի վերայ տան իւրոյ, որոյ տունն մեք իսկ եմք, և տանս Քահանայապետ՝ Քրիստոս: Զայս տուն հաւատոյ, զոր ի վերայ Քրիստոսի շինեցին նոքա և Քրիստոս ի վերայ իւրեանց, ի վերայ այլք, ասէ, վիմի շինեցից զԵկեղեցի իմ»: Այս բացատրութիւնները բաւական են լուսաւոր կերպով մեկնելու Քրիստոսի խօսքերը, և ճշդելու անոր ուղղափառ իմաստը: Նա ինքն Լամբրոնացին է որ վսեմ և բարձր կերպով կուտայ ուղղափառութեան նկարագիրը, «Քանզի ամենեքեան եմք պիտանի զիտոյն, և ամենայն ի Քրիստոս և յամենայնի Քրիստոս, և չիք ի մէջ մեր Պօղոս կամ Ապօղոս . . . այլ զարշիմք անդամքս Քրիստոսի ի նոցա անուանցն և ի զործոյն, և պարծիմք ի Քրիստոս և ի Քրիստոնեայ անուն, որով ամենեքեան եմք պայծառացեալ, այլ ամենայն ազդ զիւր Հարց աւանդութիւնն պինդ կայցի» (էջ 225): Ահա Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ նշանաբանը կուտայ Լամբրոնացին, ի Քրիստոս հաւատացեալ Առաքելական Եկեղեցեաց միութեան և միաբանութեան նկատմամբ, ի հաւատս համաձայնութիւնը միշտ պահանջելով, և յաւանդութիւնս և ի մատակարարութիւնս իւրաքանչիւրին Առաքելական դիրքը յարգելով:

Հոսովմէտաբան քարոզչաց այս վերջին ատեններս ի զործ դրած արարքը, որ կարօտ ժողովուրդի մը հաց տալով զբաւ առնել ուզեց անոր ջինջ հաւատքը, չէր կրնար վրիպիլ իրաւացի մեղադրանքէ, և Քրիստոնէական անուան ներքև հակաքրիստոնէական արարք մը լինելէ: Ասոնց կողմանէ ի լոյս հանուած տետրակը նպատակ ունէր, այդ տրտուր զործին քօղարկում տալ, զործնականին տգեղութիւնը՝ տեսականին վարագուրին ներքև ծածկելով, բայց տեսանք որ շյաջողէր, ճշմարիտն ու ստոյգը չեն սկնար, Լուսաւորչայ հաւատքը չ'եղծանիր: Հայ Եկեղեցւոյ դաւանանքը Առաքելական է, Քրիստոնէական Եկեղեցւոյ և կրօնի զուլա և հիմ Քրիստոսը կ'ընդունի, զի այսպէս կ'ուսուցանէ Աւետարանը, այսպէս կը վարդապետեն մեր Հայրերը: Մեր Լուսաւորիչն Գրիգոր, մեր Հայրապետներն Ներսէս և Սահակ, մեծ վարդապետն Մեսրոպ: Թարգմանիչք և Վարդանանք, Եգիսիլն ու Եղիշէն, Մովսէս Խորենացին և Ղազար Փարպեցին, Յովնան Մանդակունին և Սահակ Չորափորեցին, Խորով Անձևացին և Գրիգոր Նարեկացին, Ներսէս Շնորհալին և Ներսէս Լամբրոնացին, և անոնց հետ բոլոր մեր Սրբազան մատենագիրներ Աւետարանի հողին և Քրիստոսի քարոզութիւնները մեզի աւանդեցին իրենց պարզութեամբն ու զմեմութեամբ: Հայաստանեայց Եկեղեցին կոյս Եկեղեցի է, հին դարերու մէջէն կուզայ Նա Առաքելական դարերու ներշնչումով: Անոր գաւազները պէտք է պահպանեն զԱյն իրենց բոլոր հոգով: Հայ Եկեղեցին մարտիրոս Եկեղեցի է, իւր Հարց աւանդը արիութեամբ պահած է ամէն դժուարութեանց և նեղութեանց դէմ, դիմացած է արտաքին հալածանաց, տոկացած է ներքին հակառակութեանց և նախատեսաց: Երեք տիեզերական Ս. Ժողովոց դաւանութեան ճշմարիտ հետևողն է Նա,

ԿՐՕՆԱԿԱՆ

ԴԱԻԹԻ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ ՄԵՇՈՒՅԵԱՆ ԱՐԱՐՔՆԵՐ

•
«Գթի գիտւթք, որդի Յեսուայ, այր քոս սթի իմում»:
(ԳՈՐՅԵ, ԺԳ. 22)

Աստուածաշունչ Մատանը սրբազան ներշունքներով լի գիրքք մըն է՝ որ արծա- փազրած է իր մէջը շատ մը աստուածա- պաշտ ու մեծ դէմքերու արարքները: Այս մեծ դէմքերէն մին է Յեսուէի որդին՝ Դա- լիթը, զոր Աստուած գտած է իրիւ Իր սըր- աին մօտ ապրող մարդ մը: Որովհետեւ Դա- լիթի կեանքին մէջ կը հանդիպինք մեծ ու- թիւնը մատանշող կարգ մը արարքներու, որոնք զինքը իսկպէս Աստուծոյ մօտ ապ- րող մէկը կը հռչակեն:

Արդար ըլլալու համար սակայն պէտք է նախ րսենք թէ անիկա իր մեծութեան հետ

միասին ունեցած է նաև իր մարդկային տկարութիւնները: Ուրիան սպաննել տա- լով և անոր կինը լրին սեփականացնելով Տասնարանեայի Յրդ և Դրդ պատուիրանք- ներուն դէմ միաժամանակ մեղանշած ե- դաւ: Երբ ասկէ 3100 տարի առաջուան իր ժամանակի պայմանները, ըմբռնու ձեերը և բարոյագիտական չափանիշերը նկատի աւ- նենք, թէ և մասամբ մը կրնայ չքմեղանալ: Բայց չի կրնար սկզբունքով արդարանալ իր գործած այս անաւոր մեղքին համար: Մեղքը մեղք է, և ինչ պարագաներու ու պայմաններու ներքեւ ալ գործուած ըլլայ, չի դադրիր Աստուծոյ առջև տգեղ արարք մը սեպուելէ:

Սակայն ինք գիտնալով զայս, անմիջա- պէս անդրադարձաւ իր գործած այս մեծ սխալին վրայ և դառնապէս զզջաց ու ա- պաշխարհք, արտասանելով 50րդ (աշխար- հարարի մէջ 51րդ) Սաղմոսը, և որով վե- ընտացաւ իր սրտի ներքին անդորութիւնն ու խաղաղութիւնը: Բնաւ չ'իյնալ թէ և ա- լելի լաւ է, բայց իյնալէ ետքը ոտքի վրայ կայնիլ գիտնալ կրկին գնահատելի արարք

անոնց հիմնական դաւանութեամբ կը բուսականայ, և նորահնար կամ վերնա- մուտ վարդապետութիւնները կը մերժէ: Ներողամիտ ոգւով զՔրիստոս կը քա- ըողէ, և Աւետարանի և Առաքելոց վարդապետութիւնը ամենուն համար դիրա- մատչելի կ'ընէ: Այս է Քրիստոսի հաստատած հիմը, և այս հիմը պիտի չխախտի դարերու մէջ: Մի՛ լիցի մեզ խաբուիլ կեղծ ու մօլար ոգիներէ որ ճշմարիտը կը թիւրեմ իրենց գրչով ու բերնով, և մեր Ս. Հարց վարդապետութիւնը եղ- ծել կ'ուզեն: Հայաստանեայց Ուղղափառ Ս. Եկեղեցւոյ հետևողը պէտք է միշտ անշարժ պահէ Լուսաւորչայ ԼՈՅՍ ՀԱԻԱՏՔԻ, առ իւր Սուրբ Եկեղեցին, միշտ իրեն նշանաբան ունենալով Շնորհալի Հայրապետին հրամանը, «Այլ և զհաւատսդ որ յաւազան, անշարժ պահես՝ միշտ յաւիտեան» (Ն. Շնորհալի, էջ 205):

Եւ անշարժ հաւատքը անսասան պահէ մեր Սուրբ և Ուղղափառ և Ա- տաքելական Եկեղեցին, որ Նովաւ զօրացեալք և Նովաւ արդարացեալք օրհ- նեմք և փառաւորեմք ուղղութեամբ և ճշմարտութեամբ, բանիւ և զործով՝ բերանով և սրտիւ, աստ և ի հանդերձեալն զՀայր և Որդի և զՍուրբ Հոգին, յանխտեանս յաւիտենից, Ամէն:

Տուեալ ի Պատրիարքարանէս Հայոց ի Կոստանդնուպոլիս լամի Տետոն 1899 ի 24 ամսեանն Մայիսի ընդ 129 համարու Կոնգակաց:

Պատրիարք Կորսանդնուպոլսոյ
ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Վերջ)

մըն է: Գետրոս առաքեալ ալ ինկու էր Տէրը ուրանալով, սակայն ապաշխարեց իսա-կոյն և կրցաւ ոտքի կենալ:

Միքիա մարգարէ կ'ըսէ. «Ո՛վ իմ բըռ-նամիս, վրաս մի խնդար, քեւ իյնամ՝ պի-տի ելլեմ» (Միքիա, է. 8): Հրէից մեծ ի-մաստունը կը յայտարարէ. «Ազգաբը եթէ եօթը անգամ ալ ինկած ըլլայ՝ պիտի վերա-կանգնի» (Առակ, ԻԿ. 16): Իսկ անգլիացի մեծ կեդինակ, Օլիվըր Կոլտսիթ շատ ի-րաւացորէն կը մատնանշէ ու կ'ըսէ. «Մար-դու մը մեծագոյն փառքը կը կայանայ ոչ քի բնաւ չ'իյնալու՝ այլ ելլելու մէջ ամեն ան-գամ որ իյնայ»:

Մեծ է այն մարդը որ իր գործած յան-ցանքը պարագաներուն չի վերագրեր, և ինքզինքը արդարացնելու համար գործուած սխալին պատասխանատուութիւնը ասոր ու-նոր ուսին վրայ չի բեռնադրեր, այլ քա-շարար. «կը նանչեմ իմ յանցանքներս, եւ մեղս միտս իմ աչիս առջեւն ես ըսելով կը խոստովանի զայն և թողութեան կ'ար-ժանանայ: Այս ալ ինքնին մեծութիւն է: Յանցանքը ծածկել մարդու մը համար մե-ծութիւն չէ, այլ ընդհակառակը՝ պղտկու-թիւն մը: Յանցաւոր մը իր սխալը ընդու-նելով, իր սխալ խոստովանելով չի պղզ-տիկնար, այլ կը մեծնայ, ինչպէս բըռ-նեասէի որդին Դաւիթ և Աստուծոյ շնորհ-քին արժանացաւ:

Երբ մեծութեան վրայ կը խօսինք, պէտք է նկատի առնենք թէ մեծութիւնը բացար-ձակ ըլլալէ աւելի յարաբերական բան մըն է: 25 ոտք բարձրութիւն ունեցող ծառ մը 20 ոտք բարձրութիւն ունեցող ծառին քով բարձր կը համարուի, բայց 50 ոտք ծառի մը հետ բազդատուելով անոր բարձրութիւնը կը նստմանայ: Նմանապէս 50 ոտք ծառ մըն ալ երբ բազդատուի Գալիֆորնիոյ Եօսէմիթի լեռան երկնարեքէ հսկայ ծառերուն հետ, անոնց քով կ'անշքանայ: Արարատ լիողը, որ կէսէն վեր ձիւնապատ է ամառ թէ ձմեռ, ծովկերպէն 17,000 ոտք բարձրութիւն ունի, սակայն երբ կատարը 29,000 ոտք բարձրութեան հասնող Հնդկաստանի Հի-մալայա լեռան հետ բազդատուութեան գրուի՝ անով քով կը փոքրանայ բնական իմն բեր-մամբ:

Նոյնպէս, մարդը՝ որ արարչագործու-

թեան իրրե զլուխ գործոցը, մեծ էակ մըն է Աստուծոյ այս ընդարձակածաւալ տիե-զերքին մէջ, ի հարկէ բազդատուելով զինքը կենդանական մակարդակի վրայ ապրող քր-մէ ցած արարածներուն հետ, երբ մեծու-գատուի Աստուծոյ հետ՝ իսկոյն իր մեծու-թիւնը կ'անհետանայ իսպառ: Որովհետեւ Աստուծոյ մեծութիւնը բացարձակ է, ան-հասանելի, անսահման և անչափելի:

Աստուած սակայն ու է արարածէ բա-ցարձակ մեծութիւն չի պահանջեր, այլ կը պահանջէ իր ժամանակի, միջավայրի, ըմ-բըռնուիներու և կարելիութեանց սահմանին մէջ ապրուած լաւագոյն կենեքը: Սուսակա կը պահանջէ Աստուած մեզմէ իրաւունքով: Դաւիթի համար երբ կ'ըսենք թէ նա Աս-տուծոյ սրտին մօտ ապրած մէկն էր. ասկէ 3100 տարի առաջուան միջավայրի պայ-մանները և բարոյական չափանիշերը նկատի առնելով է որ կ'ըսենք զայն: Այդ պայ-մաններուն մէջ շատ քիչեր հազիւ կրնային ապրիլ այն կեանքը՝ զոր Դաւիթ կրցաւ ապրիլ և որով Իսրայէլի պատմութեան մէջ կրցաւ ձգել անուն մը՝ ուր պարծանքով կը յիշուի Հրէից Մարգարեան Մատեանին մէջ:

Դաւիթի կեանքին մէջ ի՞նչ արարքներ կան որ իր նկարագրին մեծութիւնը ի յայտ կը բերեն: Յիշենք անոնցմէ մէկ-երկու հատը: Դաւիթ որ մը երբ Փղշտացիներու հետ կը պատերազմէր՝ սաստիկ ծարափ էր, մօտակայ տեղ մը ջուր չկար որ խմէր, հետեաբար ըսաւ, «Ի՞նչ քիչնիկի դուրս ե-ղող ջրհորեմ ո՞վ ինձի ջուր կրնայ խմցնել»: Որովհետեւ Բեթղեմէմի ջրհորը թշնամիին կողմն էր:

Իր զօրավարներէն երեք հողի կեան-քերնին վտանգի ներքե կրին, անմիջապէս Փղշտացւոց բանակը ճեղքեցին և ջուրը բերին Դաւիթի որ խմէ: Դաւիթ երբ ջու-րին կուժէ ձեռքը առաւ, քիչ մնաց որ պիտի խմէր, բայց զսպեց ինքզինքը և չխմեց, ապա զանկա թափելով Տիրոջը նուրից ու ըսաւ, «Ո՛վ Տէր, իսկ լիցի որ ես այս բունը ընծա, իեմց կեանքը վտանգի գերեւ-զնելով զացող մարդոց արխնը խմեմ, եւ անկէ խնել չուզեց» (Թ. Թագ. ԻԿ. 15-17 և Ա. Մնաց. ԺԱ. 17-19): Անձնասիրու-թիւնը բոլոր մեղքերուն արմատն է, եթէ մէկը կրնայ իր անձը զսպել՝ ասկիս մե-ծութեան արարք մըն է:

Դրախա կորուսեալին հեղինակը, անգլիացի ձօն Միլտոն կ'ըսէ, թագաւորէ մը աւելի մեծ է այն անձը որ կը գտայ իր ախորժակը, կ'ըլիէ իր անձին վրայ և կը կոտավարէ իր կիրքերը, յագուձներն ու վախերը: Ըստ Հրէից մեծ իմաստունին՝ «Իր արին զսպողը քաղաք գրաւողէն աւելի աղէկ է» (Առակ. ԺԶ. 32): Իսկ ժողովրդային առածը կ'ըսէ. «Ծաղթէ անձիդ և ահա կը մեծնաս»: Դաւիթի նկարագրին մեծութիւնը ահաւասիկ հոս է, անկեալ այս պարագային կրցաւ յաղթել իր անձին, և մեծցաւ թէ՛ իր ժողովուրդին և թէ՛ Աստուծոյ առջև:

Ուրիշ գրուագ մը: Դաւիթ Գողիաթի պէտ հսկայ թշնամիի մը վրայ յաղթանակ տարած զլաւուն համար մեծ անուն մը շահած էր Իսրայէլի ժողովուրդին մէջ իբր քաջամարտիկ զինուոր: Ասիկա Սաուլ թագաւորին նախանձը շարժեց, ուստի որոշեց ամէն միջոց ի գործ դնելով զինքը սպաննել և մէջտեղէն վերցնել: Որովհետեւ քէր ուզեր որ ժողովուրդը ըսէր թէ սխալուց հազարաւորները գտելու, ու Դաւիթ իր բիւրաւորները» (Ա. թագ. ԺԷ. 7): Դաւիթի համար շտապուած այս զոգնանքը Սաուլը չէր կրնար տանի:

Օր մը Դաւիթ իր մարզերով քարայրի մը մէջ պահուած էր. Սաուլը առանց զիանալու, առանձինն քարայր մտաւ: Դաւիթի քովի մարզիկը ըսին թէ ահաւասիկ լաւ պատեհութիւն մըն է ասիկա, և թելադրեցին իրեն որ օգտուելով այս պատեհութենէն՝ սպաննէ զայն: Բայց Դաւիթ չսպաննեց Սաուլը, միայն անոր վրարկուի ծայրը քաղաուկ կերպով կտրեց ու ստով բռնակահանցաւ (Ա. թագ. ԻԻ. 4-23): Յոյս տալու համար թէ իր կեանքին սպառնացող թշնամիէ մը վրէժ լուծելու պատեհութիւնը թէև իր ձեռքն էր, բայց իր վեհանձնութիւնը չթողուց որ լուծէր այդ վրէժը:

Ուրիշ օր մը, Դաւիթ գիշեր ատեն Արեւտայի նոսր Սաուլդին քանակը մտաւ, մինչ Սաուլը կը պառկէր կուսքերուն մօտ. իր զօրավարը՝ Լիրիսան ըսաւ իրեն. «Տէր իմ, և Հրաման տուր ինձի որ սպաննեմ Սաուլը»: Բայց Դաւիթ ոչ ինչ սպաննեց և ոչ ալ հրաման տուաւ Լիրիսային որ ըս-

պաննէ, այլ Սաուլդին ներգահն աւ կուսք տաւ և հետացաւ (Ա. թագ. ԻԶ. 1-25):

Ինչ վեհանձն արարք է այս: Ասկէ 3100 օտրի առաջուան քաղաքակրթութեան կեանավայրին շրջանին մէջ հոգիի ինչ հիւանալի մեծութիւն է այս, զոր Դաւիթ քարայր բերաւ իր կիանքին մէջ:

Հոս կրնայ հասկցուիլ թէ ինչո՞ւ Դաւիթ Գողիաթը սպաննեց՝ իսկ Սաուլդին ձեռք չգարկաւ: Այս՝, Դաւիթ Գողիաթի նման հսկայ մը գեանի տապալից արանց խնայելու, որովհետեւ անկեալ հասարակաց թէշնամին էր, այդ հերոսութիւնը քննելով իր հայրենիքին և ցեղին արժանապատուութեան դրոշակը վեր բռնեց: Ուրիշ խօսքով՝ Փղշտացիներուն իր պաշտած Աստուծոյ դէմ ըրած անարգանքը վերցուց: Իսկ Սաուլը չսպաննեց, անոր համար որ նա իր անձնական թշնամին էր, և միտմանամբ իր ազգին թագաւորը ըլլալով՝ Աստուծոյ նոխարը կը նկատուէր: Հոս է ահա Դաւիթին իրական մեծութիւնը, ասպետութիւնը և վեհանձնութիւնը: Դաւիթ Սաուլը չէր սպաննելով հոգիի մեծութիւն ցոյց տաւու, որով ժողովուրդին համակրանքին արժու ճացաւ, և ապագային Իսրայէլի ժողովուրդին թագաւորը ըլլալու արժանիքն ու կտրողութիւնը երևան բերաւ իր մէջը իրեն այս վեհանձն արարքով:

Իսկապէս Դաւիթ վեհանձն անձնաւորութիւն մըն էր: «Վեհանձնութիւնը առաքինութիւններուն անեկն հազուադիւրսէն է, կ'ըսէ անգլիացի հեղինակ Վէյլթիլ: Եթով անգլիացի ուրիշ հեղինակ մը՝ Ալեքսանդր Փօր, կ'ըսէ. «Վեհանձն մտրդ իրեն վիճակ ստղ իրէ վերագնց յի նկատեալ, բանկի հոգեկան կարողութիւն կը զգայ իր մէջ փայն վերագնցելու՝ ներելով անոր»: Ինչ վսեմ խօսք է այս: Այս խօսքին խմբուր հոգիի մեծութիւն ունեցողներ միայն կրնան ըսրընել: Դաւիթ ըմբռնած էր անոր իմաստը, և ոչ միայն ըմբռնած՝ այլև զայն ապրած նաև, ասկէ աւելի քան երեսուն դարեր առաջ՝ երբ մարդկութիւնը հեթանոսութեան թանձր խաւարին մէջ կը տուարտէր և տղիտութեան ճիւղաններուն ներքև կը տառապէր:

Իրականութեան մէջ Դաւիթի կիտնքին այս գրուագները մեծապէս մարդու մը

զրուագներն են և կամ ասպետական կեանքի մը արարքները: Միջին դարու մէջ ապետական ֆրանսայի նայքերը (knights) ասկաւին իրենց վեհանձն ու մեծահոգի արարքները աշխարհի չմանօթացուցած, այդ օրերին 2000-2500 տարիներ առաջ, Պապեանի մէջ, Յեսուէյի որդին Դաւիթ ծանօթացուցած էր մարդկութեան այս գեղեցիկ առաքինութիւններն ու արարքները իր առօրեայ կեանքին մէջ:

Այլ բառերով, Դաւիթի կեանքին այս զրուագները քրիստոնէական կենցաղէն բղխած առաքինութիւններ են պարզապէս: Քրիստոնէութիւնը, իրրե կրօնք տակաւին չծնած և տակաւին մարդկութեան չքարոզուած, ասկէ հազար և ասելի տարիներ առաջ, Դաւիթ արդէն կ'ապրէր անոր զաղափարականը, շնորհիւ Աստուծոյ սրտին մօտ իր ապրած բարեպաշտական կենցաղին և Աստուծոյ ստացած հոգեւոր ներշնչումներուն: Մեզի համար այնքան մեծ վարք մը չէ կեանքը քրիստոնէական բարձր խելաշնորհով ապրել և Աստուծոյ հետ մտերմիկ յարաբերութիւն մշակել, որովհետեւ քրիստոնէայ ծնած և քրիստոնէական առողջ դաստիարակութեամբ սնած ու մեծցած ենք, որքան Դաւիթին համար՝ որ քրիստոնէութենէ տարիներ առաջ կեմտնօթեան ստորնացուցիչ արարքներով լի մը խնորտին մէջ շնչած ըլլալով՝ կրցած է քրիստոնէութեան քարոզած բարձրագոյն կեանքը ապրել և անոր պնդուացուցիչ ու գեղեցկացուցիչ առաքինութիւններով օգտուել և այսօր մեզի օրինակ հանդիսանալ:

Մարդկային կեանքի մէջ մամնադժուարին երբք բաներ կան, որոնցմէ մին անձնագրագումն է: Անձնագրագում կը նշանակէ մեր լեզուն զսպել, մեր խորհուրդներն ու զգացումները օսնձել և մեր փափաքներն ու կիրքերը հակակշիռ ներքե առնել: Ասիկա շատ զժուար է, բայց քրիստոնէական կրօնի ազնուութեան նշան է: Յեսուէյի որդին Դաւիթ ունեցած է այս պնդուութիւնը:

Սրկորդ զժուար բանը օտոխին ներքին է: Վեղանչել մարդկային է, իսկ ներքին՝ աստուածային: Ըսուած է: Մինք մեղանչելով կենդանական կեանքի մակարդակին

կ'իջնանք, սակայն մեր մրցակիցին և կամ հակառակորդին ներքով՝ Աստուծոյ օրտին կը մօտենանք: Բարեկամին ներքը ըսվազատ մամբ դուրին է, բայց մեր պատիւին ու կեանքին պառնացող թշնամիին ներքը՝ զժուար է և շատ զժուար, սակայն նշան է քրիստոնէութեան քարոզած իրական մեծութեան: Դաւիթ ունեցած է այս մեծութիւնը:

Սրկորդ զժուարին բանը կեանքի մէջ զոհողութիւնն է: Սրբեմն մարդիկ կը զուհնն մասնաւոր նկատումներով և անկալութեամբ, բայց անշահախնդիր զոհողութեան առջև մարդոց ստուար մեծամասնութիւնը յաճախ կ'անճարի: Վասնզի զժուար է այն: Դաւիթ Գողթաթի հետ մեծամարտին պարագային իր կեանքը վստանդի ներքե դրուէ, և պատրաստ էր նաև իր անձը զոհուել՝ եթէ պէտք ըլլար, որ պէտքի իր ազգը ապրեցնէր և իր հայրենիքը պաշտպանէր արտաքին թշնամիներու դէմ: Մայրկային կեանքի մէջ գերագոյն զոհողութիւնն է այս և մեծ հերոսութիւն մը, լաւ ես է ըսել՝ քրիստոնէական բարձրագոյն ստանդարտութիւն մը: Յեսուէյի որդին Դաւիթ սակայն քրիստոնէայ չ'ըլլալով հանդերձ՝ ունեցած է այս մեծագոյն առաքինութիւնը:

Հետեւաբար Սրբապան Մատենանը մեծ ճշմարտութիւն մը մատնանշած կ'ըլլայ երբ կ'ըսէ, Աստուծոյ փայտութիւն տալով ըսու, օճեսուէի որդին միախոր զոս, մտդ մը իմ սօքս համամայն: Այո՛, Աստուծոյ սրտին մօտիկ էր Դաւիթ: Այս խօսքին ճշմարտութեան կը համոզուինք խորապէս երբ նկատի առնենք. —

- ա) Անոր զործած սխալին ասթիւ զգացած խճմտանքի խորունկ ասնջանքը:
 - բ) Անոր նուիրումը և կենդանի հատաքը առ Աստուած:
 - գ) Անոր, իրրե բարեպաշտ անձ, անկեղծ ձգտումը դէպի լաւագոյն կեանք:
 - դ) Անոր, իրրե թագաւոր, աստուածահաճոյ վարչապետութիւնը:
 - ե) Անոր ջերմ նախանձախնդրութիւնը կուպաշտութիւնը իր երկրէն ու ժողովուրդէն հեռու պահելու:
- Դաւիթ մարդ մըն էր որ իր ունեցած բոլոր կարողութիւններն ու առաւելութիւնները, իրրե մեծահոգի անձնաւորութիւն,

իր ժողովուրդի բարեկալուսիսն և Աստուծոյ փառքին համար գործածեց: Զոր օրինակ՝

Քաջ եր նա, բայց իր քաջութիւնը ուրիշները իր ստօքին տակ՝ իբր սանդուխ նկատեւով, իր անձը, իր եսը բարձրացնելու համար չգործածեց, այլ իր երկրին պաշտպանութեան ի սպաս դրաւ:

Թագաւոր եր նա, սակայն իր թագաւորական իշխանութիւնը ոչ թէ ուրիշները կեղեքելու՝ այլ ուրիշներուն ծառայելու համար գործածեց:

Նրաժիտ եր նա, բայց իր երաժշտութիւնն ու նուագածութիւնը նոյնիսկ, իր հակառակորդին՝ Սաւուղին մեղամաղձոտութիւնը փարատելու ի նպատակ գործածեց:

Բանաստեղծ եր նա, սակայն իր բանաստեղծութիւնը ոչ թէ գուհիկ նիւթերու այլ կրօնական բարձր գագացումներ մշակելու համար գործածեց, որպէսզի Աստուած փառաւորուի իր առաքինի արարքներովը:

Վայրկեան մը արագ անկարկ մը նեանցէք իր Սաղմոսաց գրքին վրայ. ի՞նչ անգին ու գեղեցիկ գոհարներ կան անոք մէջ: Առէք օրինակի համար 22րդ (աշխարհաբարի մէջ 23րդ) սաղմոսը, « Եհր հովուեսցե գիտ, եւ ինձ ինչ ոչ պակասսիցիս: Աստուծոյ հանդէպ ինչ մեծ վստահութիւն է այս: Աչքէ անցուցէք 50րդ (աշխարհաբարի մէջ 51րդ) սաղմոսը. « Ողորմես ինձ Ասուած, ըս մեծի ողորմութեան փում, ըս բազում գրութեան փում, քաւես զանօրէնութիւնս իմ: Անկեղծ զզղումի ու ճշմարիտ ապաշխարութեան ի՞նչ գեղեցիկ ու սրտաբուխ արտայայտութիւն է այս: Կարգացէք իր 41րդ (աշխարհաբարի մէջ 42րդ) սաղմոսը, « Ինչպէս եղբերուն ջուրի վսակեցրուն կը փափափի, այնպէս ալ իմ անձս քեզի կը փափափի, ո՛վ Ասուած, հոգիս ծարախի ե Ասուածոյ, կենդանի Ասուածոյս: Սրտի խորիքէն Աստուծոյ հետ մտերմիկ յարաբերութիւն մշակելու համար ի՞նչ պատուական օրինակ է այս:

Նոյնպէս ուսումնասիրեցէք իր միւս սաղմոսները, ու բարեպաշտական որքա՞ն վտեմ գազափարնիս պիտի գտնէք և հոգեւոր կեանքի ի նպաստ որքա՞ն խորունկ փորձառութիւններու պիտի հանդիպիք: Սուղմոսաց գիրքը իրաւամբ Հին Աւիսի աւեստաւանքը կոչուած է, որ գոյութեան հկած է

նոյնիսկ Նոր Աւիսի Աւեստաւանքը գրի առնելուց երկար դարեր քառաջ, Դաւիթ՝ մեր Ս. Գրիգոր Նարեկացիի նման, կրօնական բանաստեղծ մըն էր: Իր սաղմոսները երեք հազար և աւելի տարիներէ ի վեր հրէից, իսկ երկու հազար տարիներէ ի վեր ալ քրիստոնէականութեան հոգեւոր ներշնչութիւն արիւրհիւր եղած են միշտ, և այժմ ալ են, ինչպէս որ Նարեկացիին «Նարեկ» Աղթաւմատեանը՝ որպէս հայկական սաղմոսագիրք, մինեւն զերը կատարած է մեր մէջ տալը երկար զարբէրէ ի վեր:

Հայտատանայց Սկիզբցին ամէն արարի Ս. Մնունգէն տալջ, Աւագ աստիւտուն ըսկիզբը, Դաւիթ ժողովրդէին յիշատակը կը տօնէ, իբրև Հին Աւիսի սուրբերէն մէկը, որպէսզի ժողովուրդը ներշնչուի անոր ապրած առաքինապարզ կեանքին օրինակելի արարքներովը:

Յիրաւի Դաւիթ մարգարէ մեծ զէմք մըն է Հին Աւիսի պատմութեան մէջ: Ը՞բ փնտհիլ սակայն անոր մեծութեան զաղանիքը: Դժուար է մեծութիւն մը արգարապէս չափել: Բայց օտ կրնանք ըսել թէ, Դաւիթ մեծ զէմք մը եղաւ անոր համար որ բացարձակ Մեծին, Աստուծոյ հետ կենդանի հաղորդակցութիւն մշակեց իր կեանքին մէջ, Անոր հետ ապրեցաւ ու Անոր հետ խօսեցաւ իր սրտի խորերէն, նման Ս. Գրիգոր Նարեկացիի՝ որ նոյնպէս ալ խորոց սրտիս Աստուծոյ հետ կը խօսակցէր միշտ:

« Այնք բարի սուրբ ու ամեն կասաբեալ պարգիւ վերէն է, եւ լուսել շօրմէն կ'իջնէ: Այն որ գեանաքարը միտումներէ ազատագրուած, ամէն օր իր հայեացքը զէպի վեր կ'ուղղէ և ներքին կապ մը չը հաստատէ Աստուծոյ հետ, Անոր վերին օրհնութիւններովն ու շնորհները կը սրբանայ միշտ, կ'աշնուանայ օր ըստ օրէ, կը ներշնչուի մերթ ընդ մերթ, և կը հասնի վերջապէս մեծութեան այն մակարդակին՝ որուն արժանի է: Ինչ աստիճան որ չփում ունենանք Աստուծոյ՝ բացարձակ Մեծին հետ, նոյն կամեմատութեամբ կը վերանայ մեր հոգին և մեռք կ'ապրինք Աստուծոյ սրտին համաձայն կեանք մը, ինչպէս ապրեցաւ Յեսուէի որդին Դաւիթ:

ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ

Տրէգո, Գալիթ.

Մ Ե Ղ Ք Ի Շ Ո Ւ Շ Ա Ն Ն Ե Ր Է Ն

Մ Ի Ա Ն Ձ Ն Ո Ւ Հ Ի Ն

Ձատիկէ Ձատիկ, արհիներ երկար,
 Ռմբուռ ետին, լուռ մեղաւսանին,
 Քարերուն վրայ կոյսն ասուածարեալ,
 Յիսուսի սիրոյն ծընդագրեր էր յար,
 Փորձելով հագնիլ երզն իր խորունկ,
 Մաքուր կուսութեան:

Հեռու աշխարհէն, ցակաւին պարման,
 Հոն էր բերուած ան,
 Խորն իր հոգիին նըմլելու համար
 Մաղիկը մեղփին, թերթերով հազար:

Հաւասարիմ միտք իր պարսֆերուն սուրբ,
 Կը սիրէին զինք ուխտակիցներն իր,
 Բոլորն անխրսիւր,
 Իսկ ապաստուհին իրեն էր յանձնէր,
 Վանքի դարպասի միակ բանալին:

Բըլուրին վրայ խորհուրդ մը ինչպէս,
 Մենասանն էր հոն,
 Բրոնուած խօկէ մը երանական,
 Նայելով անհուն հորիզոններուն,
 Մաքուր ու խաղաղ:

Հեռու աշխարհի ժըխորէն, տիղմէն,
 Կ'անցնէին օրերն միանձնուհիին,
 Ուղղած իր հոգին Ասուծոյ փառփին,
 Կը տեսնար ուժգին,
 Որ կոյս մընային սէրերն իր բոլոր,
 Իդէրն կաթոգին:

Թափառող հովեր, բոյրեր անտառին,
 Երբեմն սակայն կը վերբերէին
 Մըսածումներն բոց օրերու անցեալ,
 Փոխելով արիւնն իր բորբ գինիի:

Ահա տունն իրենց, հեռաւոր անուրջ,
 Որուն բակին խոր կը բացուէր խաւաղ
 Թըրթէնին փարթամ,

Եւ որու շուփին՝ կը նըստէ մայրն իր,
Որ հիմա չըկայ:

Յետոյ պարմանն այն, խորիս ու աղուտ,
Պատկերը որուն տարիներ երկար,
Իր աչքերուն դէմ, խորն իր հոգիին,
Տեսիլք մը ինչպէս հողերէն բըխած,
Կը մընար կախուած:

Կ'ուկընդէր յանախ թախծոտ մեղեդին,
Հովին, թըռչունին
Եւ իր սուրբ շրթներ կը մըրմնջէին
Շեշով մըտերմիկ,
— Թէ մարդն էր ծընած սիրելու համար:

Գեղեցիկ էր ան, աչքերով պայծառ,
Որոնք իր մարմնի խորհուրդին վըրայ
Ջահերու նըման կ'այրէին խաղաղ,
Բաշխելով երազ ու բաշխելով մահ:

Գարնան օրերուն,
Երբ դատն ու անտառ կը հագնէին բոց,
Եւ անման դողով կը ծոցուրէին
Հունները ոսկի,
Ան իր ներս կ'ըզգար դողեր անծանօթ,
Ալիք առ ալիք,
Երակներն ի վեր յուշիկ բարձրացող:

Աղօթքի, խոկման պահերու դիմաց,
Խորն իր հոգիին,
Կը դողար յանախ համն այս աշխահին.
Ո՞ր մանկանացուն կըցերէ փախչիչ
Ըզգացումներու գիւրէն արիւնտ,
Ո՞վ է յանդգներ,
Բանալ երկնի դուռներն ադամանդ,
Առանց մորթելու սիրոյ աղանիին:

★

Օր մ'ալ իդներու փոթորկումին մէջ,
Պարտուած ու թըրուտ,
Պատեց ֆողն օրհնեալ,
Զոր Տիրոջ համար կրել էր ուխտած,
Եւ մենաստանէն զաղսնի խոյս տուաւ:

Լուսրնկայ գիւղեր,
Որ պատանձ մ'ընչպէս կը բացուէր խաղաղ,
Միանձնուհիի այլերս մեռած
Երագին դիմաց:

Հեռուն՝ լոյսերու ծովի մը ներքեւ,
Քաղաքն էր մեղի,
Եւ միանձնուհին,
Քաշուած ըսուէրէն սիրոյ եւ մահուան,
Կ'երթար հեւ ի հեւ,
Իր մեղի ուսերուն վըրայ կը ծըփար,
Որան մագերուն,
Դրօժ մը ինչպէս այլերս լըմուած:

Սնցան սարիներ,
Մեղի քաղաքի դարպասներէն ներս,
Իր մօտն էին միշտ ցերեկ ու գիւղեր,
Ծանօթ, անհանաչ կընակըրէկիւսներ,
Լայսերին վազող թիթեռներու պէս:

Ամէն նոխուրթին եւ ամէն բարիք,
Կը տեղար իր շուրջ,
Բեհեղն ու ոսկին, քարեր թանկագին,
Գորգեր, դիպակներ, բարձեր ոսկեհոտ,
Մանեակ ու բիրեղ:

Օրերու հեւոյժ,
Կը բաշխէր մարմնի գանձերն իր առաս,
Փըրփրացող գինի, շրթներուն ծարաւ:

Սնցնող սարիներ,
Կ'առնէին սակայն, ինչ որ ինք ունէր,
Իբրեւ թարմութիւն, իբրեւ շող ու գեղ:

Ձանձրացած, յոգնած աշխարհէն այս սուտ,
Վընարելէ վերջ տուին իր մարմինին,
Կ'ուզէր որ նորէն բացուէին խաղաղ,
Դուռներն զըթութեան իր խեղճ հոգիին,
Զի մարդ մեղիէ մեղի, գայթուժ գայթում,
Կը մըսածէր ան,
Կը վերադառնար աւագանին սուրբ,
Իր մեծ բըխումին:

★

Իրիկնադէմին,
Հետքերուն վըրայ մեռնող արեւին,

Կին մը հերարձակ,
 Կը փախչէր մեղքի ոստանէն արագ,
 Խորն իր հոգիին, արիւն, ապաւաւ.
 Հեռուէն լուսինն՝
 Իրեն կը նայէր ծիծաղով անվերջ:

Երկար էր ուղին,
 Ու դողողոջ մարմինն միանձնունիին,
 Տարիներ առաջ նամբայէն այդ նոյն
 Անցեր էր թեթել, այժմ իր ոտներուն՝
 Կարծես հալեցուած կապար են թափեր:
 Բըլլուրին վերել, նաւու մը հանգոյն
 Մենաւսանն էր հոն,
 Մարդոց մեղքերու ջուրերուն վերել
 Բացած իր թելեր:

Չառիթափէն վեր, կինն այդ մեղաւոր,
 Կ'երթար հել ի հել,
 Բայց իրեն կուգար թէ բաց էր երկինք
 Իր գըլխուն վերել:

Վանքի դարպասին առջեւն էր հիմա,
 Խոնջ ու վարանոց,
 Տարաւ մասներն իր զանգակի կապին,
 Ու հընչեց ուժգին.
 Իրեն կը թուէր թէ կը գոռային
 Պըղիճներ հազար,
 Ու երկինքներէն կը թափէին վար,
 Դիւր արիւնոց կոյսերու խաբուած,
 Երազներ մոխիր ու սէրեր այրած:

Յետոյ կը բացուէր գուռն մենասանին,
 Գիրքի մը պէս լայն,
 Եւ որու մուտքին կը կենար խաղաղ
 Կին մը լուսածել,
 Շըրթներուն՝ ժըպիս, աչներուն՝ արցունք:

Հրեւա՞կ էր թէ կին,
 Որ կեցած այսպէս կը նայէր իրեն,
 Կարծես երկընքի դուռներէն ոսկի,
 Կը մրսածէր ան,
 Խայթերուն ներհու յուրերու անցեալ:

— Ես կոյս Մարիամն եմ, Մայրը Յիսուսին,
 Քու մեկնումէդ վերջ,
 Աստուած զիս դրկեց որ տեղը լիցնեմ:

ԵՂԻՎԱՐԴ

ՀՐԱԺԵՇՏ ՀՈԳԵՏԱՆ

ԱՅՍ ԾԱՌԵՐԸ, ՏԷՐ...

Տո՛ւն դարաւոր, լուսանըւէր,
Ծառերդ այս հին՝ հայրերուն մեր
Ոգիներն են, պահակ կանգնած՝
Սեմիդ վրայ աղօթամած ... :

Սաղարթներով մշտագարուն,
Հըսկող զըպիր՝ հին փառքերուն,
Հակած անոնք նըսեհին մեր,
Մի՛շտ դողացին անոր ի սէր՝ :

Տո՛ւն դպրատուն, տո՛ւն լուսասեմ,
Դպիրներէդ մէկն ալ ե՛ս ե՛մ,
Որ մայրական շուքիդ ներքեւ
Աղօթեցի մերթ հեւ ի հեւ ,

Մե՛րթ ալ խաղաղ, պոյժառ հոգւով՝
Այս ծառերուն տակ մշտազով,
Ուր օր մ'եղանք մենք ժամադիր,
Դուն՝ սուրբ տաճա՛ր, ես՝ քե՛զ զըպիր... :

Տո՛ւն դպրատուն, քու հոգետան
Լոյսի օրհրն ահա՛ անչտան :
Նոր կեանքի մ'արդ վառ հորիզոն
Կ'արփաթեւէ դէմս՝ բարձրայօ՛ն ,

Եւ զիս կանչէ նոր կոչունքի,
Որուն խորհուրդն ղոռ ոչ սքի,
Իբրեւ զաղտնիք՝ Մեծ Անբաւին
Գիտնալ տրուած չէ՛ բնաւին :

Տո՛ւն դպրատուն, տո՛ւն հոգետուն ,
Ահա՛ շրթներս քու դռներուն ,
Ու սիրտքս ալ՝ սեմիդ կըպած՝
Հաղորդուողի դող մ'երկիւզած

Ձիս կը տանի հին օրերուն :
Բաժանումի քայլերս նըկուն .
Տեսառնագրէ իբրեւ նաչուած՝
Բայց յարուցեալ նաե՛ւ Աստուած ... :

ՀՄԱՑԵԱԿ ԳՐԱՆԵԱՆ

(Զամ-Քաղ, 1909)

Անոնց՝ որոնք բարիներով ինձի են
աղօթեցին Զամ-Քաղի աղօթամունչ
ծառերուն սպէ :

Այս ծառերը՝ Տէ՛ր, հինաւուրց,
Որոնց շուքին տակ խորձ առ խորձ,
Ամէն առտու ես կը հիւսնմ
Կապոյտ երկնից կանգնած ի սեմ ,

Աղօթքներուս հիւսքն հերարծակ,
Աղօթքներ են. անհո՛ւն բաղձանք,
Հին դարերէն մեզի հասած
Շարականներ, սրբաքերթուած :

Այս ծառերը, յոյր սաղարթով
Օրհներգներ են, մի՛շտ հոգեթով,
Որ ամէն օր երկընթի դէմ,
Հագած կարծես մութ, սեւ սրբեմ ,

Շնորհալոյն քաղցր ի ծայն
Կարդան «Աշխարհի ամենայն»,
Կամ «Աստուան Մեծ Լոյսին»
Ցաղեն սիրոյ սուրբ մեղեդին :

Այս ծառերը, հին «Զարթիթ»ին
Քրնարներն են մեր երգիքին,
Որոնց ես միշտ եւ ի պատիւ
Հաւատքիս կը վառեմ անթիւ

Կերոնները, ծօ՛ն արգադիր,
Նորաններուն իբրեւ զըպիր,
Կամ բահանայ մը նորընծայ,
Հոգիս տալով անոնց ընծայ :

Այս ծառերը, մեղրածորան
Բաժակներ են արքեցութեան,
Աստեղաթեւ խոկումներու,
Երկրէն վեր՝ երկինքն հեռո՛ւ ,

Որոնց շուքին մենք ծնրադիր՝
Բանանք լոյսի մատեանն անգիր
Նորհուրդներուդ, եւ էջ առ էջ
Պարպենք զանոնք մեր հոգւոյն մէջ :

Այս ծառերը, եթերայած
Հոգիներուն, Քնզմով սրբուած,
Հառայներն են իմ պապերուս,
Որ անցեալէն հին, մութ ու լուս

Մարմին առած՝ երկինքն ի վեր
Բացած իրենց թուփ ու թուեր,
Նարեկացւոյն կողկողագին
Կաղերսեն Քեզ «Բանն Առաջին» :

Այս ծառերը, բազկատարած՝ վասըն մեր, ձեր, այլոց բազմաց, Իրկնադէմի «Հայր գրթած»ին վանկերըն են, ուր կը յածին

Անմահ ոգիքն հարանց մերոց, Որ թուփերուն տակ բազմահոծ, Դարե՛ր երկար եւ շարունակ Իրենց ծայնին՝ քաղցրակոհակ

Արծազանգը հնչեցուցին, Աստղերուն տակ այս երկնքին Արեւաշող, գալիլիական, Իրբեւ սիրոյ նոր տաղարան:

Այս ծառերը սօսանըւէր Ոգիններն են հայրերուն մեր, Անտառներուն Սօսնաց մեր հին Սօսափիւնի մութ խորհուրդին,

Ուրկէ հայրերն մեր քրմապետ, Կը կորզէին գաղտնիքին հետ Մայր-Բընուիթեան, Եւ հրաշագան Մեծ գաղտնիքը Գու գոյութեան,

Ձոր դարնր հին, ամբարիշտ, Ձրսին մեզի ճիշտ ու ճիշտ՝ Թէ ի՞նչ էիր. անհուն խորհո՞ւրդ՝ Կամ առեղծուած մը, անյագուրդ

Մեր մտքերուն ու մտածման Առջեւ կանգնած՝ փա՛կ մեծ խորան, Որուն օր մը, պիտ՝ տայիր մեզ Բանալ ծածկոյթն ու տեսնել Բեզ Մառերուն տակ այս Դպրատան, Աղօթական՝ լո՛ւս վանական:

.....

Այս ծառերը քրմական Ճրգ ըլլան թէ շարական, Բեզմոզ առ Բեզ կարկառած Բազուկներ են, ո՞վ Աստուած,

Ամէն առտու, լուսաբացին, Ու իրկուն ալ, երբ կը յածին Ստուերները մութ գիշերուան Անոնց թառին, թուփին վրտան:

ՀՄԱՅՅԱԿ ԳՐԱՆՆԱՆ

(Երևուադէմ, 1909, Ապրիլ 25, փառանգաւորացի պարւելզին մէջ)

ԲԱՆՍՍԻՐԱԿԱՆ

ԺԳ. ԴԱՐՈՒ ՀԱՅԵՐԷՆ ԶԵՌԱԳԻՐ ՄԸ

PUBLIC LIBRARY, DETROIT, MICHIGAN (U. S. A.)



Դիտորոյիտ, Միշիգընի ԱՄՆ Public Library, Rare Books բաժնին մէջ կը պահուի միակ հայերէն ձեռագիր մը ԺԳ. դարուն գրուած, որ կը բովանդակէ Ջորս Աւետարանները: Ձեռագիրս տեսնուած է Դոկտոր Սիրարփի Տ. Ներսէսեանի կողմէ, որ անգլերէն լեզուով բացատրագիր-նկարագրական մը պատրաստած է Մատենադարանի ձեռագիրներու գոտաւորման համար:

Ա) ՆՎԱՐԱԳՐԱԿԱՆ. —

Բովանդակութիւն՝ Ջորս Աւետարաններ: Նիւթ՝ թուղթ: Ջոյգ պահպանակ՝ մազադաթեայ: Մեծութիւն՝ 30 x 22, 5 x 8, 5 սմ. (26 x 18 սմ. առանց լուսանցքները չափելու): Թուական՝ ՈՂԲ 672 Հայոց + 551 = 1223 ԹԲ: Գրիչ՝ Գրիգոր Երէց, որ ունի «Երեցակինս և որդի մը Մարտիրոս: Ասացող՝ Մարտիրոս քահանայ: Վերջին սացող՝ Ամիրջան: Վայր՝ Մեծրոյ Մարզ գաւառ, «որ կոչի Առոյծ Մարզ»: Նորոգութիւն ձեռագրիս՝ Յովհաննէս Եպիսկոպոսի ձեռամբ ՌԻԹ 1029 + 551 = 1580 թսին: Թերթի՝ 265: Երկուսն քսանական տողնոց: Գրութիւն՝ երկաթագիր գորշ մեղանով: Կողմ՝ տախտակեայ կաշեպատ: Առաջին կողքը խաչազարդ է, որուն մետաղեայ շրջանակին վարի աջ անկիւնին վրայ պարագրուած է սոր. աւետարանս յիշատակ Մուրատին և իւր քուրն . . . , որ հանգստի տէր . . . , ու վրայի արծաթն . . . , տուի՛ն նորագիւլ ի թվ Ռե՛ն» 1045 + 551 = 1596 ԹԲ: Այս նոյն Մուրատը յիշատակուած է 205րդ թերթի յիշատակարանին մէջ:

Բ) ԵՄԱՆՅՈՒԹԻՒՆՔ. —

1. Ջորս հատ յիշատակարանք: 2. Զուտագիրս է լուսանցապարչ: 3. Կանաչաւորարար աւետարանական հատուածներ: համար լուսանցքներուն մէջ Նշանակուած են անոնց ընթերցումին յատուկ տօները:

ինչպէս Մատթ. Ա. 18ի քով գրուած է «Էձրագայուցցին յառաջ քան զընթերցուածս»։ 4. Ձեռագիրս էջագրուած չէ։ 5. 31րդ թերթին յատակը կայ կարճ յիշատակարան մը կարմիր մելանով գրուած. «Detroit News» օրաթերթի մուշիս 16, 1955 թիւին մէջ Երկնցած «Book is 732 years old» կարճ նկարագրականէն կը հասկնանք որ Ձեռագիրս նուիրուած է քաղաքի Մատենագարանին Father Charles E. Coughlinի կողմէ (Pastor of the Shrine of the Little Flower, Royal Oak). 7. Ձեռագրիս առաջին թերթը կորսուած է և հետեւաբար յետոյ, բաւական ուշ, աւրբեր գրիչի մը կողմէ գրուած է։ Էջը խորանագարդ է, ոչ բարձր արուեստագործ։ Կը սկսի Մատթէոսի աւետարանի Ա. գլուխ կամար 1էն։ Էջը բոլորովոր է։ 8. Ձեռագրիս սկիզբի պահպանակէն ետք պահուած է ձեռագիր պատաստիկ(*) մը (Թուղթ) փրցուած մեծագիր ճաշոցէ մը։ 9. Ձեռագրիս սկիզբի և վերջաւորութեան չորս թերթնոց մագաղաթեայ պահպանակները քաղուած են տարբեր և հնագոյն նոր կտակարանի ձեռագրէ մը և կը բովանդակեն Յովհաննու Ա. Թուղթին 41. Ա. 1բ - 41. Բ. 7ա և 41. Բ. 22 - 41. Գ. 8ա (երկամագիր)։ 10. Ձեռագիրս Արթին Թորոսեանի կողմէ նուիրուած է զոգտոր Charles Coughlinի Մարտի 31, 1939ին։

Գ) ՁԵՆԱԳՐԻՍ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ. —

Թերթ 1 — Բոլորգիր Տօնացոյցէ առնելու էլ մը ուր կ'երևին ընթերցուածներու ցանկեր։

Թերթ 2 — Սկիզբն Մատթէոսի Աւետարանի գրուած հետագային, հաւանաբար Ժէ. դարուն։

(*) Պատաստիկ մէկ սինական է էջի մը։ Բովանդակութիւն՝ Ա. երեսի ա. սինական կը պարունակէ Յովհաննու Աւետարանի ԺԳ. գլուխի 18էն աշայս։ Ոչ վասն... մինչև կամար 27ի առաջին բառը ընտ։ Բ. երեսի բ. սինական կը պարունակէ Մարգարի Աւետարանի ԺԳ. գլուխի 21բ - 26, որմէ ետք կարմիր մելանով գրուած է Ամ մեծի և հրաշափառ գիշերին իրականացէ և կ'աշտեալներէ կը հասկցուի որ պատաստիկ փրցուած է ճաշոցէ մը։ Բ. երեսը լուսանցագարդ է, ունի նաև հատուած մը Յովհաննու Աւետարանէն։

Թերթ 3 — 76ա Աւետարան ըստ Մատթէոսի։

Թերթ 77 — 125ա Աւետարան ըստ Մարկոսի։

Թերթ 126-205 Աւետարան ըստ Ղուկասի։

Թերթ 205 — Յիշատակարան գրուած աւելի ուշ ժամանակ։

Թերթ 206-264 Աւետարան ըստ Յովհաննու։

Թերթ 264-265 Ոչնչատակարան։

Թերթ 265 Յանկ ընթերցուածոց, առնիրու յատուկ։

Կ) ՁԵՆԱԳՐԻՍ ԹԵՄԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ. —

Թերթ 73 — էջին յատակը, ամբողջ լայնքին, կայ հետեւեալ յիշատակարանը առանց որիէ անուան յիշատակութեան. — «Տէր Սիսուս որ յարուցիբ գտանար մարմնաշոյթ փառասք յարոյ և զիս սրբի ի մեղաց»։

Թերթ 205, երես ա

Ղուկասու աւետարանի վերջաւորութեան կայ հետեւեալ յիշատակարանը. — «Ջիզուար ծառաս Գրիստոսի Աստուծոյ զԳրիտիՍՏՐ որ և զսիրեցեալ որդի իմ զմարտիրոս և զհինապիցն իւր և զձնոցսն իմ, և զհղբարս իմ, և զքոյրսն իմ, և զԵՒԻՃԱԿԻՆ իմ, և զԹՐՈՐՈՍ ի յաւձ զեղա որ զգտակն երես, անմտաց յիշեցէք ի աէր և աստուած յիշողաց աէր ողորմեսցի որ է աւրհնեալ յաւրտանն»։

Թերթ 205, երես Բ

Յիշատակարանս Ձեռագրիս թուականէն աւելի ուշ ժամանակի գրուած յիշատակարան մըն է, անարուեստ գրիչի մը կողմէ. — «Ջիզըլին ստացող Ամախաւս Աւետարանիս, զԱմիրշահն և զձնաւզսն իւր զկարպեան և զՄարդայն յիշեցէք ի Քս և զՏիրապեան յիշեցէք ի քրիստոս և Քս ԱՃ յիշողացն ողորմեսցի, Աճէն։ Չունի ոք կրաման ծախելոյ զաւետարանս Այլու ընդ կանգիլայի կարդան, ԱՃ ողորմի սսեն Ամիրշահն և իւր ննջեցեոցն»։

Նայն էջի բ. սինականի գագաթին անգլիերէնով հետագային գրուած է. — «This Bible is presented to Dr. Charles E. Coughlin by Artin Torosian, 39 Quincy Street, Malden, Mass. on March 31, 1939. This Bible is over 1500 years old. Signed, Artin Torosian».

Ն. Ն էջին վրայ վարպետ գրիչի ձևը որով
 գրուած է հետևեալ կտրեւոր յիշատակա-
 բանը — ա՛ր թՎին հայոց Ռ և ԻԹ (1029)
 + 551 = 1580 ՅԲ, վերստին նորոգեց և
 կազմ ցաւ որ աւետարանս ձեռամբ Յովա-
 նէս եպիսէ ի վանքն Երկանընկուզեցն ի
 դուռն որ. ԱՃածնին և որ. Կարապետոյ:
 Յիշեցէք ի մաքրափայլ աղաթս ձեր և ԱՃ
 ողորմի սասցէք. Ճաղճընցի Պապանանին
 և իւր աղբաւրն Սահակին, և իւր ծնաւ-
 զացն Մարգարէին: Այլ և յիշեցէք զածա-
 սէր և զմարեմիտ մանուկն զՄուրատն [և
 զկողակից] (վերջինս տարբեր գրիչի մը
 կողմէ աւելցուած) և զիւր ծնաւզն զՋա-
 քաթն [թրթիմն] (այս ես նոյն տարբեր գրի-
 չին կողմէ) և ԱՃ ողորմի սասցէք, որ կա-
 մակից եղաւ և տունն զոր աւետարանս
 վերստին նորոգել և կապել ի հալալ վա-
 տակոց իւրոց. և եղնն (եպիսն) յիշատակ
 ի դուռն որ. յակորայ: Զոր տր ամ զվարձս
 բարեաց պարգեացէ իւր միւսանձամ զալս-
 տեանն: Ինչպէս որ զայս հնացեալ և զգտեալ
 աւետարանն տունն նորոգել, նայ տրն ա-
 մենեցուռ նորոգէ և պայծառացուցանէ և
 անապական լուսովն զարգարէ վնոցայ հո-
 գին յաւուրն գատտաւանին, ամէն: հայր
 մեր որ ք:

Թերք 254-265

ՎՓառք և պատմ և գոհութիւն ամե-
 նասուրը Երրորդութեանն հար և որդոյ և
 սր հոգեոյն յաւիտեանս յաւիտեանց ամեն: Որ
 ետ զաւուրութիւն ծառայի իւրոյ Գրիգորի
 կատարել զսուրբ տառս քառ առած աւե-
 տարբեր սր նամակս, որ յորդատառ բղխեալ
 լցուցանէ զտիեզերս ամենայն ամայնրա-
 ման կանոնադրութեամբ, և է սա սահման
 և կնիք երկնագնաց ճանապարհին, և դուռն
 մտից կենաց սովաւ վարժելոյն որուն ցան-
 կացող եղեալ բարիսէր քահանայի որումն
 Մարտիրոս կոչեցելոյ. որ բազմարդձիկ
 տարփումբ, և կենդապտ տեղջամբ և
 սիրալորոր փութով ստացաւ զսա գանձ
 ամային և մարգարիտ պատուական և վե-
 րին պայծառութեանն առիթ, որոյ և ես
 հլու և հպատակ եղէ ամահաճոյ կամաց
 նորա, յանձն առի զրիչ վասն իմ հոգւոյս
 քանզի և հաւատացի ի ձեռն այս զծարձու-
 թեան ողորմութիւն ընդունել ի Քսէ ազ-
 նականութեամբ աղաթից ձերոց:

Բայց գրեցաւ ի թուականն հայոց ՈՂԲ
 (672 + 551 = 1223) յերրորում ամի հայրա-
 պետութեան տը Անանի հայոց կաթողիկո-
 սի: Ի գուսառիս ՄՆՃՐՈՅ (ՄԱՐԿ, ի գեղոս
 որ կոչի Առոյծ մարգ, ընդ հովանեաւ սը
 ԱՃածնին և սրբոյն Կրկոց և սրբոյն Յա-
 կորայ: Վ. Ն որոյ աղաչեմ զամենեան
 որք ընթեռնոյք զսր. պատուիրանս Տն մե-
 րոյ Յսի Քսի, ստացող սորա ՋՄԱՐՏԻՐՈՍ
 ՔԱՀԱՆԱՅ և զիւր աղայքն և զիւր երի-
 ցակին և զիւր աներն զՔաւրոս, և զՆերի-
 քէ որ հանդերձիկն երեւո, և զՔաւրոս ի
 յաւձ (Յձուռն) զեղաւ որ զգտակն երեւո:
 և զմեղաւոր խոշորագրէս և զձնողն իմ,
 և գեղբարսն իմ և զքոյրսն իմ, յիշման
 արժանի արարէք ի տը Քս զի ողորմեցի
 մեզ ի վերջնում աւուրն և ի հրացայթ
 շարժմանն սրբովք աղաթիւք ձերովք ապ-
 րեսցուք ք:

Յիշատակարանը կը շարունակուի 265րդ
 թերթի ա. սխեմակին վրայ որ անընթե-
 նելի է: Եւս և մի քանի անուններ կը յի-
 շատակուին (ալընքնատ ասիտոս ասպա-
 օթ) նոյն էջի վերի և աջկողմեան լու-
 սանքերերուն մէջ:

Ե) ԳՄԱԳՐԻԹԻԹԻԵՔ ԵՒ ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐ-
ԳԵՐ. —

Զեռագրիս խորաններն ու լուսանցա-
 զարդերը Մարկոսի. Դուկասու և Յովհան-
 նու աւետարաններու սկզբը, պարզ ծաղ-
 կազարդութիւնն և կարմիրս կանաչ և դե-
 յին գոյներով: Սկզբնատա մանրանկար-
 ներ հազուադէպ են և պարզ արուեստով
 ներկայացուած: Զեռագրեր տարբեր է և
 համեմատաբար աւելի համեստ արուեստի
 գործ կը պարունակէ քան ԺԳ. դարու ար
 դիւնք եղող հարուստ ձեռագիրները:

Զ) ԶԵՆԱԳՐԻՆ ՎԱՅՐԻՆ ՈՒ ԹՈՒԱԿԱՆԸ. —

Ըստ գոկտոր Սիրարփի Տ. Ներսէսեանի
 ՄՆՃՐՈՅ ՄԱՐԿ պատառը հաւանաբար
 ՄՆՄՈՐՐՐ գաւառն է, Բայձր Հայքի նա
 հանգէն (Հայաստանի հրախաւարեւումաքը):
 Զեռագրիս յիշատակարանը կ'ըսէ թէ մօ
 տակայ գաւառը կը կոչուի ԱՅԻԻՄ, ոչ
 հաւանաբար նոյնն է Մեծուր գաւառին կից
 եղող տեղանն հաս:
 Զեռագրիս գլուխեան թուականն է հա-
 յոյց ՈՂԲ 672 + 551 = 1223: Պատմական

ՀԱՅԵՐԷՆ ԶԵՌԱԳԻՐՆԵՐ ՊՈՍՔԸՆԻ ՄԷՋ

(ՄԵՒԵԶՈՒՍԵՑ)

(BOSTON PUBLIC LIBRARY)



Մէտէշխանից նահանգի Պոսքընի կեդրոնական Մատենադարանին մէջ կը պահուին երեք հաւ հայերէն ձեռագիրներ, Նոր Ատակաւան (չորս Աւետարաններ), Զայնֆոլ Շարական, և Զեռաց Մատենոց: Առաջինը, արժէքաւոր և լաւ վիճակի մէջ պահուած ձեռագիր մը, տեսնուած է զոգտոր Սիրարփի Տ. Ներսէսեանի կողմէ, որ Զեռացոց Յուցակի մը մէջ անդիբրէն չեղով մանրատեսութեան նկարագրած է զայն: Շարականը հարանցի կերպով տեսնուած է Փ. Միսաքեանի կողմէ, որ անդիբրէն չի գուժով արձանագրութիւն մը թողած է Մատենադարանի ձեռագիրներու գոտաւորման հա-

աղբիւրներէ յայտնի է որ Անանիա կաթողիկոս, որուն հայրապետութեան երրորդ տարիին գրուած է, մրցակից կամ հակաթոռ աթոռ մը հաստատած է Սիրասոյոյ մէջ, 1203 թուին: Հետեւաբար Զեռացիրս գրուած պէտք է ըլլայ 1206 թուին: Անանիա մեռած է 1207ին: Դոկտոր Տէր Ներսէսեան կը նշէ թէ համաձայն 1211 թուական կրող այլ ձեռագրի մը Անանիա տակաւին կ'ապրէր այս թուականին (1211), որովհետեւ գրիչը կը գրէ թէ չէ գիտցած ո՞ր կաթողիկոսին անունը յիշել, քանի որ երեք կաթողիկոսական հակաթոռ աթոռներ կային, — Յովհաննէս, Անանիա և Դաւիթ(°):

ԶԱԽԷՆ ՎՐԴ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

(°) Նկատողութիւն. — Զեռացիրս յիշատակարանին ՈՂԲ թուականը եթէ հիշէք է, այդ պարագային պէտք է ընդունել թէ գրուած է 1223 թուականին, որ Անանիա կաթողիկոսի 20րդ տարին կ'ըլլայ, առաջին տարի ընդունելով 1203ը: Այս պարագային յիշատակարանին հիերոգրում ամիս քաջատրութեան տեղ սղապելի էր Ի երրորդում ամի, այսինքն՝ քսաներորդում ամի Անանիա կաթողիկոսի: Անանիա կաթողիկոսի մահուան թուականը ճշգրտակերպով հաստատուած չէ դեռ:

Ն. Ս.

մար: Մատենոց բուսական ուշ ժամանակի գրուած ձեռագիր մըն է, որուն արծաթապատ կողքը, մարգարէներու և սուքիայներու նկարներով զարդարուած, սրպէս արուեստի գործ, մասնաւոր արժէք մը կը ներկայացնէ: Այս ձեռագիրը չէ տեսնուած որն է մէկուն կողմէ:

ՇԱՐԱԿԱՆ ԶԵՌԱԳԻՐ ԲՐԱ 1564

Նկարագրութիւն. — Մեծուքիւն՝ 12.2 x 9.9. x 5.3 սմ.: Կողմ՝ փայտեայ կաշեպատ Նիւր՝ մագաղաթ՝ Պահլուպիկ՝ մագաղաթեայ էջ մը սկիզբը միայն: Կատարել էջ մէջ էջ սկիզբի պահպանակէն ետք որուն վրայ գրուած է Զեռացիրս տիրոջ 1861 Մարտ 13 թուակիր արձանագրութիւնը: Գիր՝ բուրգիր խաղերով: Մոնոթուքիւն՝ Զեռացիրս էջագրուած չէ: Վիճակ շատ լաւ. բարձր արուեստի գործ, գունազարդ պատկերներով իւրաքանչիւր տօնի յատուկ. լուսանցազարդքը գունազգի մանրանկարներով: Միակ կարճ յիշատակարան մը վերջաւորութեան: Գրիչի, ստացողի և թուականի առնչութեամբ որն է ակնարկութիւն չկայ: Զեռացիրս հատնութեան ժՁ - ժԷ. պարու գործ է:

Յիշատակարան և բովանդակութիւն. — Զեռացիրս սկիզբը կայ հետեւայ հայերէն արձանագրութիւնը, որ հաւանաբար գըրուած է Զեռացիր տիրոջ կողմէ. —

« 1861 ամի մարտի 13ին երապի ինձ յայտնեցին որ պէտք է ես ապրիմ այս ուշխարհումս 10 տարի որ այն թուին էի 34 ամեալ օրն կիրակի էր առաւօտեան շաքաթու մեծն պահոց անակիդ 6ին առաւօտեան գրեցի ի յիշատակ յերիտայից իմաց (կ'ակնարկէ արձանագրութեան և ոչ թէ ձեռագրի բովանդակութեան)

Ոչ ոտացողին ինքնութիւնը և ոչ ալ գրիչին ու ծաղկողին ինքնութիւնը ցուցուած կամ նշանագրուած է որն է տեղ, որովհետեւ յիշատակարան (բացի վերջաւորութեան շատ կարճ) գոյութիւն չունի Զեռացիրս մէջ: Զեռացիրս Զեռաց Շարական մըն է հիմնովին և կատարելապէս նոյնը Հայց. Առաքելական եկեղեցւոյ մէջ գործածուածին հետ: Շարականը գրուած ոչ բլրնազարդուած է բարձրագոյն արուեստով և մանրանկարչութեամբ, կեղինակին ձեռքով: Այս պարագան կ'ապացուցուի Զեռ-

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ ՊԵՏՐՈՍԻ
ԱՌ ԱԿԱԿ



Քղթոց Դիրքը կը պարունակէ շատ շահեկան թղթակցութիւն մը Աղեքսանդրիոյ Պետրոս և Կ. Պոլսոյ Ակակ (471-489) եպիսկոպոսներուն միջև: Այդ թուղթերուն առաջինը սակայն լման չէ Քղթոց Դրքին մէջ. թերթ մը ինկած ըլլալուն պատճառով: Յիշեալ Քուղթին պակտող սկզբնական մասը սոր շատ կարևոր է, կը գտնուի Ս. Ա. Թոմաս քանի մը ձեռագրիներուն մէջ: Ուստի այդ թերին լրացնելու համար հոս կը հրատարակենք յիշեալ Քուղթը հանգերձ համեմատութեամբ:

Ստորև կը ղնենք մեր գործածած նշանագրիները և անոնց համապատասխան ձեռագրիներու մասին հակիրճ ծանօթութիւններ: Իրրև ընալիր առած ենք առաջինը: Ա = Ձեռ. ՍՅԹ. 960, թվ. 1602, Ժողովածոյ, նոտրագիր, էջ 341-5.

Բ = Ձեռ. ՍՅԹ. 1138, թվ. 1668, Ժողովածոյ, նոտրագիր, էջ 649-652:

Գ = Ձեռ. ՍՅԹ. 999, թուական նորագուծութեան 1688, Ժողովածոյ, մասամբ բուլղարի և մասամբ նոտր, էջ 520-523:

Դ = Ձեռ. ՍՅԹ. 858, թվ. 1686էն առաջ, Ժողովածոյ, նոտրագիր, էջ 465-9:

Ե = Կիրք Քղթոց, Թիֆլիս, 1901, էջ 243, ակիզը թերի:

Քուլթ առաջին, Պետրոսի պատրիարքի Աշխլանդրոցոյ, զոր գրեաց առ Ակակ ի Կոստանդինուպոլիս վտտն միաուուուքեան. գրեցաւ առաջին բուլթ խորհրդի:

Երանելին Յուլիանէ սարկաւազն իմ եկն ի գիշերի առ իս կրտեր Պետրոս պատրիարք աղէկանդրացոց, և ունէր(?) ի ձեռն սուրբ զաւետարանիսն(?), ուր էի թագուցեալ ի փոքր մի սենեկի վասն ահին և հալածանացն անողորմ արքային Ձեռննի, և խոսեցաւ ընդ իս զբանս զայսոսիկ, եթէ մինչ զեռ ի Կոստանդինուպոլիս շրջի վասն իւրաց իմոց, Ակակ հայրապետ եպիսկոպոսաց որ են ի Կոստանդինուպոլիս, զԲարսիարտ զպաշտօնեան և զսենեկապետն իւր առաքեաց տարաւ զիս յեպիսկոպոսարանն ի սենեակն իւր և առէ ցիս. աղօթեա ընդ իս սարկաւազ Յուլիանէ թէ ոչ: Եւ եռ ասեմ ցնա(?). զիրարք մարթի այդմ լինել մինչ չև է ուղղափառութիւնն: Եւ յորժամ ոչ մատուցի ընդ նմա աղօթիս, հրատարակեց ինձ նստել, և ոչ զոք եթող ի սենեակն, և առ ի սնարիցն զսուրբ աւետարանիսն, և երգուաւ ինձ եթէ երթ յԱղէկանդրիա, և հարց թէ ուր թագուցեալ է տէրն իմ Պետրոս, և երգուիր նմա յիմ անձնէ, որպէս ես քեզ այժմ երգուում, եթէ իոյն աւետարանիչք գրտեն, եթէ մինչ եկն յաւուրն առ Բաղիսիոս ի Կոստանդինուպոլիս երանելին Տիմոթէոս հայրապետն Աղէկանդրի, առաքեցի ի առն Բասիլիսկոսի, ուր էին սթեանք երանելոյն Տիմոթէոսի, զԲրատարիոս պաշտօնեան և սենեկապետն իմ, և զԵրցի ի քարտիսի առ երանելին Տիմոթէոս խնդրուած ձեռնագրութեամբ իմով, եթէ

ազգրի վերջաւորութեան (ամենավերջի էջ Բ. 4էս) կրեցած կարճ յիշատակարանէն.

«Ո՞վ էկ հղբայր ի աւարտ երգոյս վասն սխալն քրիստոսի սակս իմ մեղապարտիս Աճկ հոգուց և ոչորմի սաս, վասնզի յայժ աշխատեալ եմ ի վերայ շարակնոցին. թէ գրիչն և ի ծագկիչն. մանաւանդ ճարտարավարն որ ծրի եմ քաշելս»:

Իտոցայաւտ է որ վերջին էջի յիշատակարանին և առաջին էջի արձանագրութեան հեղինակները բուլղարիկն տարբեր անձեր են:

Օրինակ մը տուած ըլլալու համար կ'ար-

ժէ Ձեռագրիս առաջին էջը բանալւ «Կաւոնն Աստուածածնայ Սրբոյ Կուսին» լման էջի մը վրայ գծուած գունազարդ նկարով մը որ կը ցուցնէ Ա. Կոյսի Աւետուր և յղուցումը Ս. Հոյրիէյ: Յայնք էջը գրուուած է գեղեցիկ խորանով մը. խաչազարդ և ծագկազարդ լուսանցազարդով, և շքեղեցեցէ Որդիք Սիւնի. Երգ նոր ի Ծնեգեանն բառերով, որոնք գրուած են մանրանկար գիրիւով. կենդանական և ծագկաւոր մատիվներով:

ՁԱԻԷՆ ՎՐԴ. ԱՐՁԱԻՄԱՆԵԱՆ

զղջանամ և նզովիմ զտուժար ամբարշտին Ղևոնի, զերկուս բնութիւննն ասացողն ուրուարար, և զԵւտիքոս և զամենայն հերետիկոսս:

Եւ թօգտիարէ որոյ յայնժամ մագիստոսն էր, և ընդունէր զԵւտիքոս. զիպիցաւ արտաքս ի տանէն Բասիլիկոսի, և յորժամ ետես զպաշտօնեայն իմ զՔրատարիոս, հրամայեաց քննել զնա, և մինչ եզիտ առ նա զքարտէսն և կարգաց զայն որ նզովիցի ես զտուժարն և զԵւտիքոս և զամենայն հերետիկոսս, զքարտէզն ի նմին ժամու պատահեաց, և հրամայեաց զսարկաւազն զան հարկանել: Եւ եկն առ իս սարկաւազն իմ մինչ զզանն էր արեհալ, և զայդ ամենայն ոչ զիտաց երանելին Տիմոթէոս, քանզի ի ներքս էր յեպիսկոպոսարանին իւրում, որպէս ես ուսա ի մանգանէն:

Եւ արդ առաջի Աստուծոյ խնդրուածս մատուցանեմ, և պատրաստ եմ ամենեւեմբ զտեառնդ զկամօք կատարել, և նզովեմ զտուժարն զայն որ ամբարշտութեամբ զերկուս բնութիւնս խոստովանի բաժանեալս, և զամբարիշտն զԵւտիքոս, և ընդունիմ զուզիդ հաւատս, թէ և կարծիք իցնն սըրբութեանդ քում թէ նենգութիւն ինչ աւարի վասն քո, որպէս զի գտցիս յարքայէ Ձեռննէ, կամ յեզնոստեա Ոքսազիտէ, կամ ի գլխաւորաց աստի կամ ի զինուորաց, կամ ցուցանէր զայր մի զանձն քո: Բայց նիստ ուր ետդ ի թագոսի, և հրամայեա ինձ թուզիս աննել առ քեզ գաղտնարար, ձեռնարկութեամբ իմով, կնքել նշանաւ սուրբ խաչին. նոյն պէս և դու գրեա քոով ձեռնարկութեամբ, և այլ ոք զայդ մի զիտասցէ, բայց միայն Աստուած և մեք, և այնք որք պաշտեն զմեզ: Եթէ և կամակիցք ընդ ինիմք ընդ միմեանս վասն բանիցս աշտօցիկ, զոր ես ընդ ձեզ խօսիմ և դու ընդ իս, փառք Աստուծոյ: Եւ եթէ վասն մեղաց իմոց ոչ լուեմք միմեանց, մի ոք զընկերն մատնեցէ, բայց նսացուք յիւրաքանչիւր տեղով խաղաղութեամբ:

Եւ ես կրսեր կայրապետ Աղէկոսանդրացոց Պետրոս, մինչ զայս ամենայն երկեա, թէ զուցէ պաշտօնեայն իմ Յուլիանէ կաշառօք խաբեցաւ և կամի զիս մատնել, և ասեմ⁽⁴⁾ ցնա, հրդուր ինձ թէ ոչ զուցէ յիմ նենգութիւն, և թէ արդարեւ այնպէս

երզուուա քեզ Ակակ, մինչ առ ի ձեռն իւր զսուրբ աւետարանիչս: Եւ ասէ ցիս Յուլիանէ, եթէ նոյն աւետարանիչքդ գիտեն, տէր Պետրոս, զի արտասուօք բազմօք ասաց ցիս Ակակ հայրապետ, թէ յորժամ եկն երանելին Տիմոթէոս յայս քաղաք և առաքեցի առ նա զՔրատարիոս սարկաւազ զոր յայնժամ նզովեցի, զոր Օգոստանէ մագիստոսն պատահեաց, և զան եհար ըզսարկաւազն, ապա ի նմին ժամու գոհացաւ և երկեա յերանելոյն Տիմոթէոսէ, եթէ զուցէ ընդ նոսին և զիս նզովիցէ. խափանեցի նզովել զտուժարն, զի եզիցի միաւորութիւն եկեղեցեաց: Այլ այժմ զղջանամ և նզովեմ զտուժարն. նոյն աւետարանիչքդ գիտեն զի այսպէս առաքեաց առ սըրբութիւնդ քո:

Արդ եթէ ոչ կամիցիս ընդունել զԹուխթս իմ և քննել զկամս իմ, առաջի ահաւոր բնմին դատեցայց ընդ քեզ, քանզի դու միայն կարող ես բժշկել զաշխարհս ի չարեանցն, զոր⁽⁵⁾ սերմանեաց սատանա ի մէջ եկեղեցեաց:

Եւ մինչ զամենայն զայդ լուա, ես կրսեր Պետրոս, երկեա յոյժ ի դատաստանէն Աստուծոյ, և ասեմ ցՅուլիանէ սարկաւազ իմ. թէ արա ընդ իս հատաստութիւն, և մի ոք գիտասցէ զխորհուրդդ զայդ, մինչ կատարեցին կամքն Աստուծոյ, Եւ երզուուա ինձ: Թայնժամ վստահացաւ և գրեցի թուխթ իմով ձեռնարկութեամբ, և ետու ցՅուլիանէ զնոյն բան զոր ասաց ցիս թէ գրեա քոով ձեռնարկութեամբ, և արձակեցի զնա և ասացի թէ կոչէ զքեզ և տա թուխթ, ի ձեռն մարդոյ որ քեզ հաւատարիմ թուի տուր բերիլ: Նոյնպէս և ես ի նորա ձեռն տամ բերիլ, և երդումն տուր նմա զի նա⁽⁶⁾ մի այլ ուեմք պատմեաց զխորհուրդդ զայդ: Եւ ասէ ցիս սարկաւազն Յուլիանէ, եթէ է իմ ծառա որպէս զիս⁽⁷⁾ անձն հաւատարիմ. և մոյժ զնա յեպիսկոպոսարանն իմ և երզմեհեցուցի ի սուրբ աւետարանիչսն, և հրամայեցի ցսարկաւազն իմ Յուլիանէ, զի նստցի ի Կոստանդինուպոլիս, և եզիցի միջնորդ թղթոցն զոր ես և նա գրեմք առ իրեարք ի ձեռն ամանգանն իւրոյ թէտգոսիտի⁽⁸⁾: Եւ կացեալ յազօթն արձակցի՞ր զնա ի նմին ժամու: Եւ եմուտ ի նաւ, այն

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

Ս. ԿԱՐԱՊԵՏ



ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Սիւնեաց նահանգի Երնջակ գաւառին մէջ կը գտնուի Ս. Կարապետի Վանքը, Ապրակունիք գիւղին արեւմտեան կողմը, կէս քիլոմէթր հեռաւորութեամբ: Երջագատուած էր հողաշէն պարիսպով: Եկեղեցին կառուցուած է յաճուն Ս. Յովհաննէս Կարապետի, որուն աջը կը կազմէր Վանքին զլիսաւոր սրբութիւններէն մին. — Սիւսկան, էջ 378: Սմբատեանց, Երնջակ, էջ 1: Բնաշխարհիկ Բառարան, Ա. էջ 685:

ՊԱՏՄԱԿԱՆ. — Ս. Կարապետի Վանքը պատմութեան մէջ երեսիլ կը հանդիսանայ ԺԷ. դարու կէսէն սկսեալ, երբ հիմնական վերաշինութեամբ կը զտոնայ Երնջակ գաւառի զլիսաւոր մենաստանը: Վանքին վանահայրերուն և անոնց գործունէութեան մասին ընդարձակօրէն գրած է Մեսրոպ Արք. Սմբատեանց: Այդ վանահայրերուն գաւազանը կը կազմուի այսպէս, զանց ընելով նորագոյնները:

1. — Եսայի Եպս. Մեղրեցի, Կարճաւանցի, 1639—+66. — Աշակեբա Փիլիպպոս Կաթողիկոսի, որուն կողմէ առաջնորդ

կը կարգուի Ս. Կարապետի Վանքին. Գործակցութեամբ Ղազար Վարդապետի (+ 1662) և ձեռամբ յոջնահար Դաւիթ վայպետի հիմնովին կը վերաշինէ Ս. Կարապետի տաճարը, որուն նաւակատիքը կ'օրհնուի 1653 Հոկտ. 17/ին. — Դաւրիժեցի, էջ 347: Երնջակ, էջ 10, 118, 138, 149, 177, 285, 335, 339—40:

2. — Արիստակես Դարուցի, 1667?—+ 1673. — Երնջակ, 53, 161—2, 332:

3. — Սիմոն Վարդապետ, 1674?—+ 1679. — Երնջակ, 332: Ա. Վրդ. Յեղրակեան, Հնութիւնք Հայրենեաց, 1872, էջ 124:

4. — Մասթոս Արք. Ապրակունցի, 1680?—+ 1704. — Երնջակ, 179—80, 332: Սիւսկան, էջ 368:

5. — Սիմոն Վարդապետ, 1704?—+ 1713? — Սիւսկան, էջ 355, 363:

6. — Մեսրոպ Վրդ. Նախիջուանցի, 1713?—20? — Այվազ Քոջայ Ծոօթեցի շինել տուած է մատուռ մը Ս. Ստեփանոսի նուիրուած: Իր առաջնորդութեան շրջանին իբր և իր հոգեծին գաւակները կը յիշուին Նըլա, Յովհաննէս, Եսայի և Միւնաս Վարդապետներ, ինչպէս նաև Մինաս, Վարդան, Կարապետ, Գրիգոր, Սողոմոն, Ղազար, Մխրթար և Յովհաննէս Բահանաներ. — Երնջակ, 7, 40, 53: Էջմիածին, 1961, Զ. 60, է. 61:

7. — Եսայի Արեւիկսկոպոս, 1738. — Երնջակ, 429, 434:

8. — Մկրտիչ Եպս. Զանկեցի, 1740—47. — Որդի Մկրտիչ Բահանայի և Էղբայր Ղազար Կաթողիկոսի (1737—51), Իր նախածանութեամբ Ծոօթեցի նաղաշ Յովհաննէսի որդիները, յայտնի նկարիչներ Յակոբ և Յարութիւն, կը նկարազարդեն Ս. Կարապետի սեղանը. — Երնջակ, 6, 114, 464—6:

9. — Մասթոս Արեւիկսկոպոս, + 1755. — Երնջակ, 334:

10. — Կարապետ Վարդապետ, 1756—80. — Նոյն, 54, 451—3, 458:

11. — Յովհան Վրդ. Գաղեցի, 1781—+ 1787. — Նոյն, 459, 461:

12. — Կարապետ Եպիսկոպոս, 1787—94. — Նոյն, 462, 463:

13. — Մեսրոպ Վրդ. Փորաղասեցի, 1800. — Նոյն, 55:

որ Աստուծոյ հաճոյ և մարդկան գրեաց⁽¹⁾ առ իս վաղվազակի, և զԹուխթիմ իմ ետուբերից առ քեզ կնքով և ի վերոյն չբրեցի, մինչև ուսանիմ ի քէն թէ որպէս են կամքք առ իս, և կնքեցի զԹուխթիմ իմ խաչիւ ի վերուստ:

Ն. ԵՊՍ. ԵՈՎԼԱԿԱՆ

(1) Եւ սենէր, Զուցի Գ:
(2) աւետարանն, ԲԳ:
(3) քեա, Զուցի Բ:
(4) ասէ, Գ. ասի, Բ:
(5) Ազգէ կը սկսի Թղթոց Գրքի Բերի օրինակը:
(6) նա, Զուցի Ե:
(7) զիմ, Բ Գ Ե:
(8) Թէոգոսի, Ե:
(9) գրեցաւ, Ե:

14. — Մարկոս Վրզ. Նորաեկցի, 1810. — Նոյն, 55:

15. — Ղազար Վարդապետ, 1813. — Նոյն, 55, 440:

16. — Մասթոս Արք. Տեր Ղուկասեանց, Ձնաբերդցի, որդի Ալեքսանի և Նիկարի 1814-28. — Նոյն, 56, 193-4, 381, 449, 472, 475:

17. — Փիլիպպոս Սպալցոսօբցի, 1835. — Նոյն, 56:

18. — Կարապետ Վրզ. Գեթիկեցի, 1840. — Նոյն, 56:

Երկրաշարժը, 1840 Յունիս 20ին, կը քանդէ եկեղեցւոյ զանգակատունը. — Նոյն, 15:

19. — Երեմիա Վրզ. Մելիք-Քանգեանց, 1850-+ 1864. — Վանքին մէջ կը կատարէ ընդհանուր նորոգութիւններ և շինել կուտայ շարք մը սենեակներ. — Նոյն, 15, 40, 334, 347:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Ս. Կարապետի Վանքին մշակութային գործունէութենէն քիչ արդիւնքներ ծանօթ են. այսպէս, Ա. — Աստուածատուր Գրիչ, 1648-64. — Օրինակած է, 1. — Աստուածաբան, 1648ին, Զահեցի Միրզայի յիշատակին. — Երնջակ, էջ 269,

2. — Աղօթագիրք, 1664ին, ի վայելու Մելիքեթի. — Երնջակ, էջ 173:

Բ. — Մեծորդ Վրզ. Նիզակցի, 1649ին, նա կ'աւարտէ օրինակութիւնը Աւետարանի մը, որուն սկսած էր Ասպահանի մէջ. — Հանդ. Ամս. 1889, էջ 269.

Գ. — Տէր Շմաւոն Գրիչ, 1659-62. — Օրինակած է 1659ին մէկ Քարոզագիրք, Յովհաննէս Որոտնեցիի. — Կարնեան ծուցակ, Թ. 2148:

Նոյն Թուին նորոգած է 1603ին գրուած Աւետարան մը. — Երնջակ, էջ 215:

Դ. — Թաղէոս Գրիչ, որդի Գրիգորի, 1666ին օրինակած է մէկ ձեռոց. — Երընջակ, էջ 240, 241, 316 (Ց. 132):

Ե. — Մեծորդ Վարդապետ Գրիչ, 1701ին օրինակած է մէկ Հարանց Վարք, Ժողովածոյ շարք և Ֆանոց. — Երնջակ, էջ 118:

Զ. — Սայի Վարդապետ, Գրիչ, 1713ին օրինակած է մէկ Դիոն, Արիսպագացի. — Էլմիածին, 1961, Գ. 61:

ԿԼՆՈՆԵԿՐԻՏԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Է.

ՈՐՈՒՆ Է ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ԾԱԼՈՒ ԻՐԱՌՈՒՆՎՅՐ

Բայց կ'երևի թէ վարդապետը ինքն իսկ իր բնութեան հետեանքով գեղծում ներս գոռ պիտի բանար շատով. ուսումնաներու, քարոզչութե պաշտօնը իր անամատելի հրապոյրն ունի, որ կրնար և կրնայ զեռ շատերը գիտովցնել, այս շատերը, որ առանց պատրաստութեան, միայն փառքի և ցոյցի համար պիտի ուզէին ունենալ Գաւազան և Աթոռ: Հնագոյն ժամանակներու մէջ տեսանք արդէն թէ ի՞նչ գանգատներ կային և ի՞նչ միջոցներ ձեռք առնուած էին գեղծումներու և ապիպարութիւններու զէմ: Եւ այս զարուհ մէջ ալ՝ երբ մէկ կողմէն այնքան արժանաւոր և փառաւոր զէմքերու կը հանդիպինք վարդապետական Աթոռի վրայ, միւս կողմէն կը տեսնենք կանոններ և գանգատներ, որոնք անփառանակներու, անարժաններու բովանդակներ կը շեշտեն: Այս զեղծումները, հաւանաբար կրիկիտոյ, Կ. Պոլսի, Երուսաղէմի թեմերուն մէջ երևան եկած էին աւելի. այնպէս որ Փիլիպպոս Կթղ. 1651ին, իրաւազէմի մէջ, ուր 13 կանոններ հաստատեցին կրիկիտոյ ներսէս կթղ. ին

Է. — Սամուէլ Վարդապետ, Գրիչ, 1718ին օրինակած է մէկ Սագր, Երնջակի առաջնորդ Մեծորդ Սպիտակոյսի պատուէրով. — Էլմիածին, 1961, է. 60:

Ը. — Շմաւոն Գրիչ, 1758ին օրինակած է մէկ Քարոզագիրք, Դիւրգոր Տաթևացիի. — Երնջակ, էջ 316 (Ց. 222):

Թ. — Ղուկաս Վարդապետ, Գրիչ, 1802ին օրինակած է մէկ Հաւաքածոյ. — Երնջակ, էջ 140:

ՆՐԱՐՈՐ ԵՊՍ. ԵՈՒԱԿԱՆ

և Երուսաղէմի Աստուածատուր Պատրիարքին հետ միասնորհուրդ, վարդապետութեան խնդիրն ալ կանոնի տակ առնել տուաւ. սկսեցինք որոշ մի համարձակեցիք ոչ վարդապետներարար տալ զիշխանութիւն վարդապետութեան ամենայն ումիք, եթէ ոչ իցէ նուիրեալն կատարեալ ուսմամբ և առաքինութեամբ և հասակաւ և աստուածայնով երկիւղիւ և վկայեալ յամենեցունց: Զի այսու պատճառաւ բազումք անկարգութիւնք և գայթակղութիւնք մտին յեկեղեցի: Եւ թէ ստուեղանիւք քամահիցեն յայս կրաման, առեալ իշխանութեանն անկցի ի պատանի, և առաջ իշխանութեանն անընդունակ լիցի» (Ա. Գաւթ. Պատմ. եր. 326):

Ո՞ր գիտէ, ի՞նչչափ ծանր և անտանելի եւ դժժ են գայթակղութիւններ, որ այսչափ բուռն և կտրուկ միջոցներ ձեռք կ'առնուին, և աչ միայն առանց որոշ պայմաններու գործադրութեան վարդապետ եղողներ չեն ընդունուիր, այլ մասնաւոր իշխանութիւն առեալ վարդապետն ալ կը գրկուի իր իրաւունքներէն:

Դար մը ետքը Սիմօն Կթղ - զեռ նոյն գեղձումները կը նկարագրէ կրկնորայ և Կ. Պոլսի թեմերուն մէջ. «Եւ վարդապետքն որք չեն ժամանեալ ի քսան ամս ընդ Աբղայութեան առնուն և զՄայրաքոյն Գաւթան, յորս գրէ թէ ոչ գտանի Աբղայ և կամ Մանաւոր վարդապետ, այլ որք ենն՝ են ի Մայրաքոյն աստիճանիս (Ջուլի, եր. 99):

Եւ իրաւի այս գեղձումն է, որ դեռ կը տիրէ մինչ և հիմա, այնպէս որ երբ էջմիածնի մէջ, Ռուսահայոց վարդապետներու մէջ հազիւ քանի մը ծայրագոյններ կան, ասորին ամէն վարդապետ կ'ազէ Մայրաքոյն ըլլալ: Իայց այս երևոյթը, այս գեղձումը իր բաւաւոր պատճառն ունի: Այսինքն՝ քանի որ Մայրաքոյն վարդապետութիւնը կամ Մեծ վարդապետութիւնը կորսնցուցած է իր նախնական և իսկական նշանակութիւնը և եղած է պարզապէս արտոյտ մը, որ ոչինչ կը յիշեցնէ իր հին պաշտօնէն ու պարտաւորութենէն, քնակակ է որ այսպիսի արտոյտ մը գիրութեամբ տրուէր, ոչ այլեւս վարդապետի կողմէն, այլ եպիսկոպոս եղած վարդապետի կողմէն: Վարդապետութեան արգի վիճակը թէ՛ իշխանութիւնը

տուողներու կողմէն և թէ՛ իշխանութիւնը առնողներու կողմէն, բոլորովին հակառակ է ուրեմն վարդապետութեան ծագման հետ և վարդապետութեան զիրքն ու արժանապատուութիւնը պահելու համար դրուած օրէնքներուն և կանոններուն հետ:

Ը.

ՆՈՐԱԳՈՅՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պէտք է նկատի առնել սակայն, նաև այն ջանքերը, որոնք մեր ժամանակներուն մէջ թափուցեցան վարդապետութեան իրէ ոչ կին նշանակութիւնը վերահաստատելու, զորն վարդապետական պարտատեղեան որոշ ըմբռնում մը հաստատելու համար: Առաջին ձեռնարկը Գէորգ Գ. Կաթողիկոս ըրաւ այս ժամանակ էջմիածնի ձեռնարանին հաստատութեամբ: Թորոն Մ. Վրդ. Խտեփանէ (ետքը Եպիսկոպոս, վրն.), որ Ռուսահայոց ամենէն փայլուն բեմադրացի էր, վարդապետ քառիս վրայ գրելու առին, օտպէս կը խօսի Գէորգ Գ. ի ձեռնարկին նկատմամբ:

«Երբ հոգեւորականներ լմջ գիտութիւնը պտկոսց, վարդապետ կուռնն ես կորցրեց իր նուիրական նշանակութիւնը, և ամէն միանձն հոգեւորական, արեղայ ձեռնադրուելուն պէս, սկսեալ էր վարդապետ կոչուիլ մինչև վերջին ժամանակ: Հայ Եկեղեցու նուիրական կարգ և կանոն սիրող և վերանորոգող Գէորգ Գ. հոգեւորայ Կաթողիկոսը, ինչպէս ուրիշ բազմաթիւ կենսական խնդիրներ, այս խնդիրն ևս յաւրոյց, փափաքելով գիտնական հոգեւորականներ՝ ստեղծել, որի համար և հիմնեց էջմիածնի Մայր Աթոռում ձեռնարան, հրամայեց որ այսուհետև վարդապետ կոչուին գիտութեան իրաւունքով և առանձին օրհնութիւնով. ստացուի գտապետի իշխանութեան հետ, և նախ քան այդ իրաւունք օտանալը միանձն հոգեւորականները չկոչուին վարդապետ, այլ միայն արեղայ (Մ. Խ., Բ. ասպ. Ա. Պետրեսպարի, 1898, էջ 487-88):»

Մեր Գպրեթմանքի հաստատութիւնը ըստ միջոց մըն էր Կ. Պոլսի Պատրիարքութեան սահմաններուն մէջ առաջըր առնելու համար տիրող վարդապետական գեղձումնե-

րուն, որոնք թէժ և չափաւորուեցան զգաւապէս, բայց զժրախտաբար չվերջացան: Վարդապետութիւնը (Մասնաւոր և Մայրագոյն) Դպրեվանքի մէջ իր գիտական և ճիշդ վարդապետական (= Doctorat) իմաստով կապուեցաւ որոշ գործընթացքի մը և այդ գասուրնթացքէն ետքն ալ գրաւոր որոշ աշխատութիւններու հետ: Դպրեվանքի մէջ անոնք որ վարդապետ պիտի ըլլան, ուսման հետ եկեղեցական պաշտօնէութեան աստիճաններու մէջ ալ կը բարձրանան, և քահանայական ձեռնադրութիւն ու օծում, և վեղարի օրհնութիւն աննիչ ետքը, տարի մը կը մնան վանքը, և այդ միջոցին մէջ գրաւոր աշխատութիւն մը (քեզ) կը պատրաստեն՝ պաշտօնապէս տրուած նիւթի մը վրայ: այս քեզ փոքր աշխատութիւն մըն է, զոր անպատճառ կատարելու է վարդապետակամ գաւազան անհետև համար: Ետքը աւելի ընդարձակ աշխատութիւն մը պէտք է պատրաստէ վարդապետը, որուն նիւթը գործնալ պաշտօնապէս կը տրուի: ասի մեծ աշխատութիւն մըն է, զոր ներկայացնել է ետքը՝ կ'ընդունի Մայրագոյն Վարդապետութեան իշխանութիւնը: Մեր դասարանը ճշդիւ գործադրեց Դպրեվանքին այս ծրագիրը, որ չենք դիտեր ինչ պատճառաւ չպահուեցաւ յաջորդ դասարաններու համար իր բոլոր լրութեան մէջ, այնպէս որ առաջին փոքր աշխատութիւնը մնաց միայն՝ իբր պայման Մասնաւոր վարդապետութիւնը կամ գաւազանի իշխանութիւնը անհելու: Իսկ Մայրագոյնութիւնը հիմա կը տրուի, գունե Պատրիարքարանի արդի տեսութեամբ, ամէն անոնք, ըլլան Դպրեվանքի կամ ոչ, որոնք Առաջնորդական որ և է պաշտօնով գաւազաները կ'երթան, վարելու համար եպիսկոպոսական պաշտօններ:

Այս ալ տարբեր խնդիր մըն է, որ կըրնայ առանձին ուսուցիչասիրութեան մը նիւթ ըլլալ: Որովհետեւ եպիսկոպոսական շտաբ մը ավտոններու վրայ վարդապետներ բազմած են, Մասնաւոր կամ Մայրագոյն վարդապետներ սնխտիք, ինչ որ բաւական հին ստեղծ է վեր սովորութիւն եղած և տեղի տուած է կանոնադրական կարգ մը շփութութիւններու, որոնք մէջ թերեւ կրնայ փնտռուիլ վարդապետական և եպիսկոպոսական իշխանութիւններու ձուլումն ալ:

Այսքան փոփոխութիւններու նշանակեղած վարդապետութեան մը ապագային ինչ պիտի ըլլայ: Կարելի չէ գուշակել զայն: Բայց եթէ կարելի է բան մը հետեւցնել վարդապետութեան, անշուշտ Մայրագոյն վարդապետութեան վրայ է խօսքը, արդի վիճակէն, որ ինչպէս ըսինք թիտղոս, մը եղած է՝ միմիայն գոհացում տալու համար շտաբերու անխմատ փառասիրութեան, պէտք է ցաւիլ որ այլևս իր հին և գործնական նշանակութիւնը պիտի չունենայ ան Հայ Եկեղեցոյ մէջ: Այն նշանակութիւնը, ճիշտ վայելք մասնաւոր Միւնիստաց վարդապետարանին մէջ, և պիտի նման վարսամի մը, որ երկինքի վրայ, հեռուն, իբր նոր և սքանչելի երևոյթ, բաւական ատեն կը լուսաւորէ, կը հրապուրէ և կ'անհետի — հազիւ հետք մը թողլով իր ընտանիքը թացքին մէջ, և յուշք մը միայն աստղաբաշխական տարիգրութեան մէջ:

Վարդապետութեան արդի վիճակին վրայ, Դուրեան Սրբազան, տասը տարի առաջ սակայն կը խորհրդածէր Մաթի մէջ Մայրագոյն վարդապետութեան վրայ աստղանշիւղով ստորագրած «Մայրագունութեան Աստիճանը» յօդուածին մէջ:

«Մայրագոյն վարդապետութեան աստիճանն այսօր մեր եկեղեցոյն մէջ անցմը կը նկատուի գէպի յեպիսկոպոսութիւնն, սակայն՝ եթէ իր ծագումին մէջ ուզենք դիտել այդ աստիճանի նշանակութիւնը և գոյութեան պատճառը, չենք տեսներ որ ան ուղղակի աղերս մը ունեցած ըլլայ եպիսկոպոսական պաշտօնի հետ, կամ նուիրապետական որ և է հանգամանք մը ունեցած ըլլալ ինքնին, այլ՝ ինչպէս երէցութիւնն իր աւագութիւնն ունէր գլխաւորապէս մայր եկեղեցիներու մէջ, եպիսկոպոսութիւնն իր արեւութիւնն ընդարձակ գաւառներու համար, վարդապետութիւնն ալ իր մեծութիւնը կամ ճայրագունութիւնը ունեցաւ մայր եկեղեցիէն մէջ: Անշուշտ պաշտօնը պիտի վայելէին անոնք՝ որ վանքներու կամ կաթողիկոսարաններու մէջ Ս. Գիորք և այլն կը դասախօսէին խումբ մը կրօնաւորներու կամ եկեղեցականներու: սակայն և այնպէս պատմական իրողութիւն մըն է թէ ճայրագոյն կոչուած իշխա-

նութեան աստիճանի պաշտօնական տըւ-
չութիւնը Տաթևու Դպրոցին մտածումն ե-
ղաւ ԺԴ. դարուն, որ նպատակ ունեցաւ
քարոզչիչներ պատրաստել և ամէն կողմ
զրկել զանոնք՝ ազգային եկեղեցական հա-
ւատքին պաշտպանութեանը համար. ինչ-
պէս պէտքը կը պահանջէր:

Տարակոյս չկայ թէ վարդապետական
այդ իշխանութիւնը չէր կրնար ունենալ
այս կամ այն եպիսկոպոսը. վասնզի ուրիշ
բան էր Հին և Նոր Կտակարանի և արտա-
քին գիտութեանց հմտութիւնն ունենալ և
ուսուցանել վանքերու մէջ բազմաթիւ ա-
շակերտութիւն մը ունենալով իր շուրջը,
ուրիշ բան էր գաւառական եպիսկոպոսի մը
քով ծառայել իբրև փոխաւոր և յետոյ
բարձրանալ նոյն տեղւոյ ամբողջ վրայ:

ԺԴ. դարէն յետոյ տակաւին երկար ժա-
մանակ ծայրագոյն վարդապետներ եպիսկո-
պոսական աստիճանի չկրցան բարձրանալ,
ամէն արժանիք ունենալով հանդերձ. և
ուրիշներ եպիսկոպոս եղան՝ առանց կանո-
նաւոր ուսում մը իսկ ըրած ըլլալու:

Այսու ամենայնիւ՝ բարերար ազգեցու-
թիւն մը կրցաւ ունենալ Տաթևու Դպրոցը
իր առաջադրած նպատակով՝ որուն նստե-
ցան ուրիշ մէկ քանի վանքեր ալ, վասնզի
ժամանակ անցնելէ վերջ՝ եպիսկոպոսական
աստիճանի բարձրացման համար տեսակ մը
պահանջում նկատուեցաւ ծայրագոյն վար-
դապետի արժէքը չինել նախ: Բայց մը
գեղեցիկ նպատակ իր միջոցներու մէջ չը
սայթաքիր երբեմն. արի տես ծայրագոյն
աստիճանի արարողութեամբ տեսակ մը
նուիրապետական ձև աւելցած եղաւ Մաշ-
տոցի մէջ, և կիսմ այդ տասն որոշ սան-
դուխէն պաշտօնապէս ելնել բաւական կը
համարուի, յետոյ եպիսկոպոսութեան թե-
ւակոխելու համար:

Շա՛տ օգտակար կ'ըլլայ Հայոց եկեղեց-
ւոյն համար՝ եթէ Տաթևու Դպրոցին պալ-
մունները յարգուին՝ ըստ պահանջման ժա-
մանակին, և հարկ չկայ որ ծայրագոյն իւ-
խանութեան տիրանան այն վարդապետե-
րը՝ որ եկեղեցական ուսուցման հեղինա-
կութիւնը չունին, ո՛րքան ալ ձերացած ըլ-
լան . . . Բայց՝ եպիսկոպոսութեան բարձ-
ւանալ՝ առանց ծայրագոյն վարդապետու-
թեան աստիճանն ունենալու՝ արդէն ընդ-

հանուր եկեղեցւոյ սովորութիւնն էր, որ
կրնայ տեղի բաւել՝ թէև ոչ առանց ան-
պատեհութեան (Մտնո, ԽԵ. տարի, թիւ
250, 1897, Սեպտ. 25/7, ԵՂ.):

Ո՞վ պիտի հասկնայ սակայն այսպիսի
գեղեցիկ բաղձանքները ե մանաւանդ պիտի
գործադրէ զանոնք: Եպիսկոպոսները, թէ
ինքնակոչ ընծայեալները կամ Սարգիս
Շնորհալիի բացատրութեամբ, սինքնանու-
նադրելի աստուածաբանները, ապա թէ
ոչ — Հոգեւոր Իշխանութիւնը: Հո՞ւ ո՞ է խնդ-
րէր:

Ապա թէ ոչ տիրոջ և ծաւալող զեղ-
ծումներու հանդէպ ձեմարան կամ Դպրե-
վանք չէն կրնար վերահաստատել Սինեոց
Վարդապետարանին ըմբռնումն ու հասկոց-
ղութիւնը: Ժամանակակից ըմբռնումները
փոխուած և բարեփոխուած են այժմ, և
Վարդապետութեան համար պարտատու-
թեան եղանակն ալ փոխուած է՝ ուսման,
հմտութեան, տարիքի և այլն տեսակէտնե-
րով: Բայց ցորչափ վարդապետ կա՞յ Հայ
Եկեղեցւոյ մէջ, կ'արժէ պահել վարդապե-
տութիւնը իր գեղեցիկ բարձրութեան վրայ,
իբր հեղինակութիւն Բանի և Բեմի:

Արտագրուած Լայս Շարաքերէն, 1906
(Ս Նայեալը յարդիւ՝ 17)



ԱԿԱՄԱՅ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ

Սուրբն Կիւրեղի համաձայն, Քրիստոսի մէջ երկու բնութիւններու մէկուրիւն կայ և ոչ թէ դաստրոշեալ միութիւն, որ Քաղկեդոնի և Լեոն Պապի դժբախտ յայտարարութիւնը եղաւ, ուրախացնելով միայն բանաձևին պաշտպան չարափառն Նեստորը: Հետեւաբար աստուածային այս խորհուրդէն և ըմբռնողութիւնէն շատ հեռու է Լեոն Պապը և իր անկարելի Տոմարը, գրուն անգէտ և անպէտ փաստաբանը կը հանգիստանայ տղտոտամուտքն Լորէնցոսն:

Ճիշդ է թէ քաղաքական փոփոակ կացութիւններու և պահանջներու ճնշման տակ, մեր Հայրապետներէն ոմանք, յետ երկուստեք տրուած քացաւորութեանց, ստիպուած են եղեր յայտարարելու յաճախ թէ տարբերութիւն չկայ երկու կողմերու գաւանանքին միջև: Աստր հակառակ սակայն Հոյ Եկեղեցին չէ փոխած Կիւրեղեան բանաձևը և ընդդիմացած է միշտ Լեոնեան չարափառ Տոմարով պայմանաւոր Քաղկեդոնի բանաձևին:

Նոյն քաղաքական ցաւալի հանգամանքները, մանաւանդ Կիլիկիան շրջանին, մղեցին որոշ զոհողութիւններու: Մեր կաթողիկոսներէն և թագաւորներէն ոմանք, Լատիններու ճնշման տակ, գաւանական խախտումներ տլ տաւալ բերելու փորձուեցան, և եթէ չըլլար Մեծ Հայքի արի ախոյեաններու արթուն հակողութիւնը, մեր Եկեղեցիի ինքնուրոյն գոյութիւնը կընար վասնզուրիլ:

Լորէնցոս փոխանակ հաւկիթին մէջ մազ փնառելու, միւր Եկեղեցիին վերագրելու ուղեով բաներ՝ որոնց գոյութիւնը յոնուս պատմական ճշգրիտ հասկացողութեան միշտ կոսակածելի պիտի մնայ, թող անդրադառնայ թէ քրիստոնէութիւնը Հռոմի ձեռքին մէջ, փոխանակ մեղձացնելու հին լայնարհի քաղաքակրթութեան անկման հետեւանքները, ընդհակառակը այդ անկամբ աւելի աղիտալի դարձուց մարդկութեան համար, սակզնելով տասնըհինգ և ուելի դարեր խաւարի արգելանաց մը, որուն մէջ առաջանցան Եւրոպական ժողովուրդները:

Հայ ժողովուրդը, ընդհակառակը, քրիստոնէութեան միջոցաւ ստեղծեց Հայ Գիրը, Հայ Դպրութիւնը, պահեց Հայ Աւանդութիւնը, հաստատուն հիմներու վրայ դրաւ Հայ Լեզուն, վերջապէս Եկեղեցին այն ամէնը՝ որ ազգութեան մը տարիքը կը կազմէ: Չընդունիլ այս ճշմարտութիւնը, կը նշանակէ չըմբռնել Հայոց պատմութեան Ոգին:

Եթէ քրիստոնէական եկեղեցիներու միջև միութիւն պիտի հաստատուի, ինչ որ խիստ ցաւկալի է, այդ պէտք է ըլլայ փա սագարձ յար բանի, իրաւունքներու ցաւուցման, սանմանցներու անբռնարարելիութեան հիման վրայ: Հայաստանութիւնը, որ մեր Եկեղեցոյ աւագ առաքինութիւնը եղած է, պէտք է բաժնուի նաև միւս Եկեղեցիներու կողմէ, և անկեղծօրէն: Այն ատեն մինք պիտի չըսենք այլևս Մոզպէս կաթողիկոսի նման «Բաւ լիցի ինձ ընդ գեան Ազատ անցանել», բայց պիտի կրկնենք միշտ, ինչպէս մեր նախահայրերը, «այս աւանդութեան վրայ հաստատեալ կամք եւ ոչ խոտորիմք ի ցմանէ ո՛չ յաջ եւ ոչ յահեակ»:

Քաղկեդոնի ժողովը դաւանանքի կեղծիքով վարագուրուած քաղաքական կռիւմը և Աթոռի գերագահութեան խնդիր մըն էր, Հոսովի՝ Կ. Պոլսոյ և Աղիքասնդրիոյ Եկեղեցիներու միջև: Աղիքասնդրիոյ միջև և այդ թառականը տաւջնորդի գեր կատարած էր հաւատքի արցրբու մէջ, Աթոնասի, Կիւրղի և ուրիշներու հեղինակութեան շնորհիւ: Հռոմի Լեոն Պապը կ'ուզեր խլել այդ տաւջնութիւնը. Պոլսոյ Պատրիարքն նոյն յաւակնութիւնները կը սածէր:

Հայերը նշովեցին թէ՛ Բողկեղանի ժողովը, թէ՛ Լեւոնի Տոմարը և թէ՛ միտն-
 դամոյն Եսաիֆէսու Այս թուականէն վերջ Հայ Եկեղեցւոյ պատմութիւնը անդուշ
 կախ մըն է յաւանական ստնձգութեանց դէմ՝ որոնք միշտ միսւթիւն կ'առաջարկէին,
 մոնաւանդ քաղաքական ապստամբներու ժամանակ, քրիստոնէական մարգարեա-
 թեամբ: Իսրաէլէն Կոթողիկոս Վաղարշապատի Ե. ժողովով (495), Ներսէս Բ. Բաղ-
 րևանդադի՝ 551ին, Յովհ. Կոթողիկոս Կաթողիկոս՝ 571ին, Մովսէս, յետոյ Աբրահամ
 Աղբաթմանցի և Կամիաս Կաթողիկոսները միշտ դէմ կեցան Բողկեղանի ըմբռնու-
 մին: Իսկ Եղբի և Ներսէս Շինողի զարթուութիւնները արդիւնք էին յաւանական
 բանակներու, ճնշումին և բռնութեան, ինչպէս այնքան ճիշդ կերպով դիտել կատար
 Գեղեցի:

Յովհաննէս Օձնեցի իմաստասէր Կոթողիկոսը՝ շատ աւելի զօրաւոր տնտեսակա-
 նութիւն մը, կորովի պաշտպանը հանդիսացաւ իր Եկեղեցիին, քան իր մէջ կրկու
 նախորդները, որոնց նաևազ վճռական ընթացքին մէջ մեծ դեր ունի քաղաքական
 աննպաստ և ապերախ վիճակը կրկրին: Իր անունով հասած ԱՍկա ժողովոց որ
 է Հայքս թուղթիւն մէջ (Կիրք Թղթ. 220-33) կը կորդանք. «Հրամայեցաք ժողով
 լինել ի քակուսն և ի խլանն շար աղանդոյ Ֆողկեղանի . . . որ զԵրբորդութիւնն
 դաւանեալ չորբորդութիւն խաստովանին՝ ըստ անիծեալն Տոմարին Լեւոնի»:

Աշտ Բագրատունիի շրջանին ունինք Կ. Պալատ Գոս Պատրիարքի Թուղթերը:
 Այս վերջինը որ իր սմբողջ հոնձարն ու հնարամտութիւնը գործածեց քամեղու
 համար Յայն Եկեղեցին Լատինականէն, իր այս նպատակին հասնելու համար ուզեց
 նախապէս Արեւելքի փաթր Եկեղեցիները իրեն միացնել և ի միջի այլոց դիմեց նաև
 Չափարիտ Հայրապետին (854 - 77): Փատր ձեռնարկը, միւսթեան անսակէտէն, յիտա
 աակելի արդիւնք մը չունեցաւ, թէև յաջողեցաւ ստեղծել Արեւելեան Հերձուածը»:
 Անտիոք Մարտիրոս (943 - 965) աւելի կարծր և խիստ եղաւ միութեանական այս խըն-
 դիրներուն մէջ, Բաղկեղանական մկրտուածները անգամ մը ևս մկրտել հրամայելով:
 Իսկ Խաչիկ Կաթողիկոսի (973 - 92) անունէն անբաժան պիտի ըլլայ Հայ Եկեղեցւոյ
 կառնդան պաշտպանի համբուը. իր օրով յաւանական ստնձգութիւնները աւելի պիտի
 գաստականային:

Պետրոս Գեառգարձ (1019 - 58) արևուր էջ մը կը բնայ Հայրապետներու
 շարքին մէջ: Իր շահամուլ տրամադրութիւններուն արդիւնքը եղաւ Անիի յանձնումը
 Յաւնոց: Իսոյց կըր ունար յաջորդեց Խաչիկ Բ. Անեցի, միութեան խնդիրը բռնու-
 թեան ձև մը տաւ: Յաւնոց կողմէ: Պետրոսն ուժով Պալտա տարուեցաւ ան ուրիշ
 եպիսկոպոսներու հետ (1054), ուր ծանր սպառնալիքներով առաջարկուեցաւ իրեն
 ընդունիլ քաղկեդոնականութիւնը, հպատակիլ Պալտա Աթոսին և տարեկան տուրք
 վճարել: Անեցին գտկայն, հպատակ իր վրաս ի դարձ դրնում բոլոր խոշտանգում-
 ներուհի, պահեց իր կորովը, պատասխանելով ամէն հարուածի. «Զոր մինչև ցիմ
 փամանակն չէ՛ լնալ՝ և ո՛չ ևս հաւանիմ» (Լատա. էջ 60): Գրիգոր Վկայաւերի անձ-
 նական դիրքին ու իշխանական ազդեցութեան շնորհիւ իրողութիւնները բարեփոխ-
 ւեցան մասամբ:

Թաւրիկեանց իշխանութիւնը սկսած էր մասնազ ընել կոյսրութիւնը, որ ամէն
 հնարք ի գործ կը դնէր իր խանձարուքին մէջ ջնջելու համար զայն: Լեւոն Ա.
 այդ հակառակութեան յայտնի զտնը եղաւ Թարոս Բ. (1145-68) քահնոց Չորդեց Մա-
 նաէլ Կայսեր բանակները և օգնեց Խոշակիրներուն Կայսրը, յուսանա՝ կրօնական
 միջոցի գիմեց: այդ ձևով Կիլիկիան դարձեալ գրուելու և Թաւրիկեան նորածիլ
 իշխանութիւնը սնչւոյցնելու համար:

Շնորհալի կաթողիկոսութեան միջոցին է որ Մանուէլ Կայսրը վերջին փորձ
 մըն աէ կ'ընէ, թէև ապարդիւն: Շնորհալիի ամմիջական յաջորդները հետեւեցան իր
 ուղղութեան: Մանուէլ Կայսեր և Յաւնոց Միքայէլ Պատրիարքի, այսինքն միս-
 թեան պաշտպաններուն անհետացումով պիտի վերջանար նաև Յայն և Հայ Եկեղեցի-

ներու միութեան խնդիրը, որուն այնքան հակառակ էին Արեւելքի Հայ վարդապետները: Մեր Եկեղեցւոյ պահպանողական տարրը կը կազմէին երանաշնորհ այդ վարդապետները, և զգալով քաղաքական գիտումները կրօնքի սերով շարունակած ձեռնարկներուն, կը զգուշացնէին միշտ Պահլուա Հայրապետները, իրական արդիւնքի մը հասնելէ (Տես «Նամակահի Գրիգոր Տղայի», Տուաէորդիի Վիճարանութիւնս սորը, Ընդհարարական, Ստ. Օրբէլեան, ևն.): Պահլուաւորի կաթողիկոսներուն հետ՝ վերջապա նոս յունական միութեան կազմակերպեալ փորձը: Անկէ յետոյ եղած տկար ձեռնարկները ուշագրաւ արդիւնքի մը չյանգեցան: Հայերը շուրջ հազար տարուան փորձառութեամբ շատ լաւ ուսումնասիրած էին Բիւզանդական քաղաքականութեան փողոթու խորագաւանդները:

Իսկ Հայոց յարաբերութիւնը Հռովմի Եկեղեցիին հետ, միութեան գեանին վրայ, համեմատաբար յետնադոյն ժամանակներուն կը վերաբերի, Պաշակիրներու շրջանին: Մէկ կողմէ նիւթական բարօրութեան խոստումը և միւս կողմէ քաղաքական փորձութեան վերահաս վտանգները յաջողեցան առաւել կամ նուազ դարձնել ոմանց աչքերը դէպի Արեւմուտք. բայց այս զարմանալի բան չէ, վասնզի մեր մէջ Ստոյ (1307) և Ատանայի (1315) ժողովականներու գումարումէն շատ տարիներ առաջ՝ Յունաց Միքայէլ Կայսրը տնգամ Լիոնի մէջ ստորագրած էր արդէն Ուղղափառ հաւատոյ դաւանութիւնը: Արդ՝ ա՛յ միայն Հայեր այլ և Յոյներ՝ իրենց քաղաքական տկարութեան առջև՝ ստիպուած էին այդ միութեան գործին համակերպիլ երբեմն, բայց թէ՛ Յունաց և թէ՛ Հայոց՝ ա՛յ բոլորովին բարեպաշտական մտածութեամբ յուզուած այս շարժումները բնականաբար պիտի դադարէին երբ Միջին դարը փակող յաղթութիւնը ամէն բան վերջացուց: Այս մեծ պատահարէն քանի մը տարիներ առաջ գումարուած Փլորենտեան ժողովը (1438) որ պիտի հաւաքէր ընդհանուր Գրիգորեանոյ Եկեղեցիները հռովմէական միւնսոյն դրօշին տակ, կամ թէ բռնիք՝ Արեւելք և Արեւմուտք զիրար պիտի գրկէին, ցանկացուած վախճանը չունեցաւ ու չէր իսկ կրնար ունենալ: Մինչ մէկ կողմէ Արեւելեան հերձուածը կ'ուզէին մէջտեղէն վերցնել, արդէն Արեւմտեան հերձուածը աւելի ծանրակշիռ երեւոյթ մը կ'առնէր: Ժողովը սպարդիւն մնաց և ստիկ աւելի բարձր ճակատագրի մը հասնելու ընդունակ էր: Այսպէս շարաշար պատրանքի վերածուեցան գերագոյն գահին տաճած գեղեցիկ յոյսերը՝ ինչպէս Յունաց նոյնպէս և Հայոց միտքանութեան մտային, անոր համար հռովմէական կղերը չի խղճահարիբ այսօր յայտարարել թէ Յոյները չյապագեցան իրենց մեղքը քաւել 1453 ի աղէտով և մեր տարաբախտ ազգն ալ գուցէ անկէ յետոյ դատապարտուեցաւ դժոխքի յախտեանական կրակներուն:

Սակայն տ'յա յայտնի է թէ Փլորենտեան ժողովին անյաջող ելքը զգացուց Հռովմի Քահանայապետին իր այն սկիտութիւնը՝ որուն գիտակցութիւնը դեռ չուներ ան, և դար մը չանցած իրապէս իմացաւ թէ պատուած էր այն ուղկանը՝ զոր կը ցանցէր Արեւմուտքի և Արեւելքի մէջ և Տրիտենդեան ժողովը ի գործ տասնեօթը տարիներու չի գով յոգնեցաւ այդ հիւսուածը նորոգելու: Սակայն ինչ օգուտ այս բոլորը երբ Լորէնցոյի նման պատմահղծները, պատմութեան սահմաններուն վրայ արձանացող իրողութիւնները չեն ուզեր տեսնել, և կը չարչարեն պատմութեան փաստերը, բռնի ուղկուր համար թէ, Լուսաւորիչէն սկսեալ մինչև Ներսէս Շնորհալի և Հայ Եկեղեցւոյ բոլոր նշանաւոր Հայրապետները «Կաթողիկոս եղած են: Այսպէս ըմբռնած են իրնիք և աշխատած են այսպէս ալ ներկայացնել Հայ Եկեղեցին՝ պատկառելի Չումչեանէն սկսեալ մինչև պատմահայր Լորէնցոյ Կոչին: Զարմանալի իրականութիւն սակայն, եթէ Լուսաւորչէն մինչև Շնորհալի, Հոյսատանայոց Եկեղեցւոյ բոլոր նշանաւոր Հայրերն ու Հայրապետները «Կաթողիկոս եղած ըլլային, ի՞նչպէս Հայ ազգին մեծամասնութիւնը իր Եկեղեցիով տակաւին Հայ մնացած կ'ըլլար:

Ինչպէս կը տեսնուի, մեր յարաբերութիւնները Յունաց և Լատինաց հետ երբեք կրօնական հպատակութիւն մը չեն եղած, այլ միայն քաղաքական պարագաներ

բու ընտրատուժ: Երկրորդ թէ Հայ Առաքելական Եկեղեցին եթէ ճշմարտացէս ազգերս մը ունի դաւանաբանութեան մէջ՝ Աղեքսանդրեան և Երուսաղէմական Եկեղեցիներուն հետ է ան և ո՛չ թէ Յոյն կամ Լատին: Լատինացի դարձած մէջ, ուր քրիստոսաբանական և փրկչարանական ինդիքներ յարաբուցանցան, Հայերը կառչեցան Աղեքսանդրեան Հայրերու՝ երեք Տիեզերական ժողովներու ուղղափառ դաւանանքին, և չուզեցին բնու ասոր տոյժով վաստիլ շահաւճ բարեկամութիւններ:

Մեր ամբողջ Գիրք Թղթոցը՝ իր վաւերական հաստատման մէջ, կիւրեղեան վարդապետութեան յարասութիւնն է: Հայ Եկեղեցին Արիստը կը նսզվէ Աղեքսանդրի և Աթմասի փաստերով: Կը կուռի Նեստորի, Եւտիֆէսի, Քաղկեդոնի ժողովին և Լեւոնի Տոմարին դէմ՝ կիւրեղի ներքուհնարով: Անցնող դարու Գերման դիտուն աստուածաբաններ, իրենց գլուխը ունենալով Հարնաք, համոզուած են թէ Հայ Եկեղեցին միաբնեայ է կիւրեղեան իմացութեամբ և միշտ կը նսզվէ Եւտիֆէսը և Լեւոն Պապը:

Թէ ի՞նչ շահեցաւ Հայը քաղաքական այս յարաբերութիւններէն՝ դժուար է ըսել, բայց թէ ինչ կորսնցուցինք՝ բացայայտ է պատմութեան ուսանողին համար: Զարմանալի է որ Հայերը Պապերէն օժանդակութիւն կ'ակնկալէին Պապական իշխանութեան և հեղինակութեան ամենէն աւելի վասնդուած շրջանին, երբ անոնք արդէն «Բարեկոյնի Գերութեան», Աւինիոնի աքտորին մէջ կը տուայալէին: Սակայն թէ՛ Յոյները և թէ Լատինները յաջողեցան վերջապէս մեզմէ բան մը շահիլ իրենց ձեռնածութիւններուն և ժողովութեան հնարքներուն շնորհիւ: Յոյները երբ համոզուեցան թէ Հայերը Կիլիկիոյ աշխարհադրական դիրքին հեռեւանքով Լատինական զոհ մը ըլլալու հաւանականութիւն կ'ընծային, կրկնապատկեցին իրենց ջանքերը, չնայելով իրենց քաղաքական ոչ նուազ խախտաւ դիրքին որ «հազարամեայ փաստեան» շրջանն էր, թէնի պատկերալից բացատրութեամբ, և որ վերջապէս Լիոնի կամ Փլորենտիոյ մէջ այնքան պիտի սթորնայնէր զիրենք: Պէտք է խոստովանիլ սակայն թէ Լատիններն աւելի շահեցան Ունիթուներով կամ Հայ կաթողիկեներով, որոնց անգին ներկայացուցիչներէն մին է Լորէնցո Կոզին, քոն Յոյները՝ Հայ-Հռոմեաներով:

Սակայն Հայ Ուղղափառ Եկեղեցին մնաց միշտ իր փառքին մէջ: Հայածանքները աւելի ևս իր ներքը զօրացուցին հին Հայրերու ճշմարիտ հաւատքը, ինքնազիտակցութեան անմար կայծերով, իրեն ընծայելով, սերունդէ սերունդ, դիւցազնութեան հոգին և դիմազարուելու աննկուն կամքը: Ամէն դարու մէջ իր հաւատացեալներու արիւնովը սրբազործեց ան իր Առաքելական հիմնադիրներուն յիշատակն ու գործը, և արդիւնաբերեց իր Լուսաւորիչներու շարժարաններու գինը, որ է Հայաստանեայց Ս. Եկեղեցին, անկասի, Ուղղափառ, Առաքելական:

Գալով այն առեղծուածային յայտարարութեան թէ Քրիստոսի Եկեղեցին Պետրոսի վրայ հիմնուած է, և հետևաբար իրական քրիստոնեայ և հուսանցեալ ըլլալու համար պէտք է Հռովմի Եկեղեցիին մաս կազմել, ոչ միայն քրիստոնէական Եկեղեցոյ վարդապետութեան, ոգին և ճշմարտութեան, այլ նաև ողջմասութեան հասկացող է, ենթադրելով թէ Եկեղեցին Պետրոսի վրայ շինուած կրնայ ըլլալ: Մինչդեռ Աւետարանները և Նոր կտակարանի միւս բոլոր գիրքերը կը վկայն թէ քրիստոնէական Եկեղեցոյ միակ հիմը և գլուխը ինքն Քրիստոսն է և է, և Եկեղեցոյ մէջ բուն հիմէն զատ ուրիշ հիմ մը ստեղծելը միայն Հռովմէական Եկեղեցոյ յատուկ կրնայ ըլլալ: «Զի հիմն այլ՝ ոք ոչ կարէ դնել քան զիստոսի որ է Յիսուս Քրիստոս» (Ա. Կորնթ. Գ. 11): Եկեղեցին Պետրոսին չէ, այլ Քրիստոսի, և ասոր հատուկ ինքնահնար վարդապետութիւնը դուրս է ոչ միայն Նոր կտակարանի սղիէն, այլ նաև Ա. - Ե. դարերու ճշմարիտ, ընդհանրական և միասնական ուղղափառ Եկեղեցոյ դաւանութիւնն: Նման կարծիք մը, առաւելաբար քաղաքական և մենատիրական ձգտումներէ բխող, մերժուած է միշտ Արեւելեան հնագոյն բոլոր Եկեղեցի-

ներէն, և որ բաժանումի առ պարտական պատճառ եղաւ Արեւմտեան Եկեղեցիներու մէջ: Ժամանակին այդ հասկացողութիւնը ի զուր ջանաց իրեն ի նպաստ սերմեր սրտնի Աւետարանի մէջ, իր կամուր հասկացողութիւններով և տկար պատճառաբանութեամբ, և Հռովմէական Եկեղեցւոյ շրջանակէն դուրս քրիստոնէայ ոչ մէկ Եկեղեցի կրցաւ հանդարտել նպատակաւոր կղած այս խեղաթիւրումներուն:

Լուբնցոն անգամ մը ևս կը ճգնի ցոյց տալ թէ՛ Ռ' Եկեղեցւոյ Սուրբ Հայրերը ճանչցած ըլլան դոյն և իրենց գրութիւններու մէջ դուռնած: Մեր Եկեղեցւոյ Հայրերը չէին կրնար ինքնանոսր վարդապետութիւններու գաւառնաքններ ընդունիլ, կրք Բրիտանոս այդպէս ըսած չէր և Առաքեալները այդպէրպէս քորոզած չէին: Նոր կատարանը իր ամբողջութեամբ և քրիստոնէական Եկեղեցւոյ պատմութիւնը իր հնութեամբ մեզի ցոյց կուտան թէ՛ թիւր և կամոյսական է Պետրոսի առաքելական պաշտօնը առաքելականէն վեր աստիճանի մը բարբառցնելու ճիգը:

Մտաթէսի Աւետարանին (ԺՁ. 16-19) այն հաստատումը զոր բոլոր Առաքեալներու կողմէն սրտատաննց Պետրոս, թէ՛ Շուռ ևս Բրիտանոս՝ Որդի Ստաւուսյ կենդանւոյն» որուն Յիսուս պատարաննեց, Վերանց քեզ Սիմոն որդի Յովնանու, զի մարմնս և որսիւն ոչ յայանեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է: Եւ ես քեզ ասեմ, զի դու ես վէմ, և ի վերայ այդք վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխաց զնա մի՛ յողթանարեցին»:

Բրիտանոս հոս պարզապէս յանուանէ կոչած է ՊՊետրոս. Շուռ ևս Պետրոս ինչպէս յոյն բնագիրը ունի, ուր հասկնալ ուղարկին համար սրտը կերպով կը տարբերին Պետրոս և Պետրա որսական և իզական անուանիքը: Պետրոսի անուանին փոխաբերական առիթը պէտք չէ շփոթել իրականութեան հետ: Ո՞ր վէմին վրայ պիտի շինէր Բրիտանոս իր Եկեղեցին, Պետրոսի՞ թէ՛ նոսր հաւատքի իր մէջ վրայ, թէ՛ Շուռ ևս Բրիտանոս կենդանի Աստուծոյ Որդին: Ետայ Պետրոս իր թուղթին մէջ բացառապէս կերպով կը յայտնէ թէ՛ ինքն Բրիտանոս է զվէմ կենդանի» և զվէմ ընտիր, զլուս անկեան պատուական» (Ա. Պետր. Բ. 4-6): Ուրինի քրիստոնէական Եկեղեցին կենդանի Աստուծոյ Որդւոյն՝ Բրիտանոսի վրայ է հիմնուած, այլապէս շատ փոքրացած պիտի ըլլար, եթէ մահկանացու էակի մը վրայ շինուած ըլլար: Աւետարանի նոյն հաստատման մէջ կը գտնենք որ Պետրոս Աստուծոյն կը կոչուի (Մտաթ. ԺՁ. 23): Անոնք որ անուանիւր և կոչումներու վրայ խողով կը փորձեն, ինչու չեն եզրակացնէր թէ՛ հետեւարք Եկեղեցին Ստատուոյի վրայ հիմնուած է. բայց մեզ քու՛ լիցի նման անճա՛ և յիմարական պատճառաբանութիւններու և մեկնութիւններու վրայ խողով: այդ սրբապղծութիւնը անոնց անկ է՝ միայն, սրտնք չեն զշարիր Եկեղեցին աթոռներու վերածելու, իրենց իխնասուսրներուն բարձրութիւնը տպանուիլու համար:

Բրիտանոսի Առաքեալներուն մէջ մեծ ու պզտիկ չկար, այլ ամէնքը հուսաւոր էին: Պէտք է մտնալ որ երբ Առաքեալներուն մէջ մեծութեան և առաջնութեան խնդիր ծագեցաւ, Բրիտանոս անոնց մէջէն իսպառ հեռացնելու այդ մտածուածը: Եթէ Պետրոսին միայն տուած ըլլար քերականութեան իրաւունքը, պիտի չըսէր մեր Տէրը Ամէն ասեմ ձեզ, զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակիցէք յերկրի: Եղիցի տրձակեալ յերկինս» (Մտաթ. ԺԸ. 18): Ետուս իր ամբողջ քորոզութեան շրջանին հաւաստրապէտ հրահանգեց իր Առաքեալները: Գերիշխան լինելու փափաքին մերժումը կ'երեկ նաև Չկեղեցեան սրբիչներու պարագային, երբ անոնք աշխարհիկ մտածումներով աթոռնեց և դիրքեր խնդրեցին: «Նախիցիք յերկոտասան աթոռ, գառնիլ քերկոտոտան այգի փարոյնի» (Ղուկ. 11): Եթէ աստիճաններին ոթոռները հուսաւոր են, ա՛ւր է Պետրոսի տարբեր աստիճանի աթոռը:

Ոչ միայն Աւետարանը այսպէս կը վարդապետէ, այլ նաև Պողոսի և Պետրոսի թուղթերը ընդհանուր Եկեղեցւոյ Պուլիս ու հիմ կը նկատեն զԲրիտանոս: «Եւ նա է գլուխ մարմնոյ Եկեղեցւոյ, որ է սկիզբն անդրանիկ ի մեռելոց, զի եղիցի ինքն յամենայնի յառաջեցեալ» (Կոզմ. Ա. 18): Եկեղեցիի չէնքին հիմը Բրիտանոս է (Ա.

կորն. Գ. 11): Ահա առաքելական դարու վարդապետութիւնը, որ սերմը եղած է աճողով քրիստոնէութեան, Բոլոր Առաքեալները այս սկզբունքով ընթացան և այդ կերպով քարոզեցին զՔրիստոս: Պատրոս Առաքեալ հրեք էր մաքէն չանցուց թէ ինքն է վէմն անկեան Եկեղեցւոյ, երբ հետևեալ ասողերը գրեց. «Առ որ մատուցեալ ի վէմն կենդանի, որ թէպէտ ի մարդկանէ անարգեալ, այլ առ ի յԱստուծոյ ընարեալ ու պատուական է» (Ա. Պատր. Բ. 4):

Յակոբոս Տեսողներու յարու ազգեցիկ դիրք ունէր Առաքեալներու մէջ քան Պատրոս Առաքեալը: Եւ այս պարտական յատկ կերպով կ'երեի Եկեղեցւոյ առաջին ժողովին՝ որուն ինքը կը նախագահէր: Պատրոս միև Առաքեալներու նման կ'երթայ քարոզելու նոխ Երուսաղէմի շրջակաները ապա Անտիոք: Ըստ աւանդութեան՝ զոր կ'ընդունին Հոսովմէականք, հոն աթոռ հաստատելէն վերջ կը մեկնի Հոսովմէ: Ուրիմն Անտիոքը իրաւունք ունի Պատրոսի նախաթոռը լինելու, և ինչ իրաւունք որ Հոսովմէ եպիսկոպոսը կը կարծէ ժողովանքի Պատրոսէ, աւելի իրաւունքով Անտիոքի եպիսկոպոսը պէտք է ժողովանքէ: Սակայն Անտիոքի եպիսկոպոսները բնաւ չունեցան այս յաւանդութիւնը:

Առաքելական դարէն վերջ, ընդհանուր Եկեղեցւոյ հին Հայրերը, բոլորն ալ ողջմիտ մեկնութիւններով դիմաւորած են աւետարանական և առաքելական այս բացատրութիւնները: Արեւելեան Եկեղեցւոյ Հայրերէն, Եւսեբիոս Կեսարացին, Աթոննա Աղեքսանդրացին, Բարսեղ Կեսարացին, Յովնանէս Ոսկեբերտ, Գրիգոր Նիւստացին, Գրիգոր Աստուածաբան, Կիրիլ Աղեքսանդրացին, Իսկ Արեւմտեան Եկեղեցւոյ Հայրերէն, Տերտուլիանոս Ափրիկեցին, Կիպրիանոս Կարթագոնացին, Ամբրոսիոս, Օգոստինոս Հիպպոնացին և ուրիշներ, որոնց վկայութիւնները այս կարգի նիւթերու յատուկ բոլոր առձեռն գիրքերու մէջ կարելի է գտնել, ամէնքն ալ իրենց գրութիւններուն մէջ վիճ բառով Քրիստոսը կը հասկնան և ոչ թէ Պատրոսի անձը: Իսկ Հոսովմէ Հայրապետը երբեք ընդհանուր Եկեղեցւոյ միակ գլուխը նկատած չէն, այլ միայն Առաքելական Աթոններու զանակալներէն մէկը, նման միև Հայրապետներուն:

Յետոյ Քրիստոս միշտ իր Եկեղեցիին և Իրին հաւատացողներուն հետ է, «Եւ ահա առաքիկ ես ընդ ձեզ եմ զամենայն առարս մինչև ի կատարած աշխարհի» և պէտք չունի անգապանեալու, կամ փոխանորդներու:

Տակաւին, քանի որ Եկեղեցին է սեղն ու ընկալարանը ամէն ժամանակներու և բովանդակ մարդկութեան, Ազամէն սկսեալ մինչև ցկատարած աշխարհի, անհնար է որ մարդ ժանկանացուն վէժ հաստատութեան կամ գլուխը լինի մշանջնաւորին: Քանի որ Եկեղեցին է մի հոգևոր զինուորութիւն, մի հոգևոր սպառազինութիւն աշխարհի չարութեան և խառնարի դէմ, մոլորութեան և ատուքեան դէմ, ուրիմն Քրիստոս է միակ զօրագլուխը այս հոգևոր պատերազմին և ոչ թէ մարդ ժանկանացուն:

Եթէ այս է իրողութիւնը, որուն հակառակ չէմ կարծիր թէ կարենայ մտածել Հորէնցոյ, Ի՞նչ է ուրիմն իր պահանջը մեզմէ: Միզի Քրիստոսէն Քրիստոսը՞ կը հրաւիրէ, թէ ոչ Քրիստոսէն Պատրոսը: Եթէ Քրիստոսի կը հրաւիրէ, Հայրապետն հրաւիրէ, թէ ոչ Քրիստոսէն Պատրոսը: Եթէ Քրիստոսի կը հրաւիրէ, Հայրապետն հայց Եկեղեցւոյ գաւակները արդէն կը ճանչնան ու կը դաւանին զինուոր Քրիստոս, Որդի Աստուծոյ կենցաղով, որ է վիճ հաստատութեան Եկեղեցւոյ և գլուխ կենդանարար:

Այս չէ՞ նաև իր ունեցած քրիստոնէական հաւատքը, հետևորտը ի՞նչ քանի կրնան ծառայել Քրիստոսէ Քրիստոս հղած հրաւերները, բոյց միայն կասկած. վարանք և վէճեր սեղծել հաւատացեալներու մէջ, առաջնորդելու զիրենք սկսեալով անարարքերութեան, որ ծնունդ առաւ այն օրէն ի վեր, երբ «Արարածք Քրիստոսի չէք փրկութիւն» վերածուեցաւ «Արարածք Հոսովմէական Եկեղեցւոյ չէք փրկութիւն» հրամանադրին:

Քոյց Լորէնցոն թերևս կը հրաւիրէ Հայ Եկեղեցին Քրիստոսէ առ Պետրոս, եթէ տանի մեզ, վարդապետը ձգած աշակերտին կ'առաջնորդէ, Փրկիչը մոռցած փրկեալին կը հրաւիրէ, աստուածային հպատակութեան փոխարէն՝ մարդկային հպատակութիւն ընդունիլ տալ կը փորձէ: Պէ՞տք էր արդեօք որ այս դարուս մէջ ալ գեոլտէինք կրօնաքաղաքական սակարկութեան հինցած այս խօսքերը, որոնցմով անցեալի մէջ Հռոմ այնքան պատրանքի ենթարկեց ինքզինքը և ուրիշներ:

Տակաւին շարունակելով մտածումին թելը, Լորէնցոյի հրաւերը կրնայ անդրադարձել ու թելադրել, որ ան գուցէ կը հրաւիրէ զմեզ Բարթողիմէսէ առ Պետրոս, սակայն այս պարագային, ինչպէս նախորօք սոյն ասիինք, կը հրաւիրէ զմեզ նմանէն՝ նմանին, Առաքեալէն՝ Առաքեալին, որոնք նոյն ուսումը, նոյն դաստիարակութիւնը և նոյն Ս. Հոգւոյ շնորհը առին, և թէ գլխաւորութեան կամ առաջնութեան մտածումը առաջին մէկ օրէն արմատախիլ եղած է անոնց հոգիէն, իրենց Երկնաւար վարդապետի և Օրէնագրի վճռով. «Ար կամիցի ի ձէնը առաջին լինիլ՝ եղիցի ձեր ծառայ» (Մատթ. Ի. 27):

Ուրախ պիտի ըլլայինք որ Լորէնցոն և իրենները զարդէին այլևս մեղի խօսելէ տառքեղպետի, «Ե՛րև ես վէճ»ի, «Երուհը դժոխաց»ի հարցերու մասին: Կ'ուզէինք որ գիտնային թէ գիտենք ժմէնքս Եկեղեցւոյ պատմութենէն նոյնիսկ թէ ընդհանրական Եկեղեցւոյ միութիւնը պիտի չհոտորակուէր բնաւ, և անգամ մը փշրուելէ վերջ պիտի վերանստատուէր նոյնիսկ կրկին, եթէ Ս. Պետրոսի յաջորդները կտրադացած ըլլային ի մտի՝ մանաւանդ թէ ի սրտի ունենալ իրենց մեծ նախորդին մեծաքայն պատուէրը. «Մի՛ իբրև տիրելով վիճակաց . . .»:

Մեր ժողովուրդի նախակրթարանի աշակերտներն անգամ գիտեն այսօր թէ վատիկանի իշխանաւորներն ու անոնց հլու կամակատարները Քրիստոսի հեզութեան հակառակ ինչ կեցողարիշաք բանաւորներ եղած են, և Քրիստոնէութեան շինարար սգիւր հակառակ ի՞նչ աւերներ գործած և կը գործեն տակաւին, և թէ հեռակարգ ի՞նչ պէտք է հասկնալ երբ անոնք անհաւաս և հերձուածող կը կոչին ուրիշ Եկեղեցիներ:

Ու այս ումենէն յետոյ, Լորէնցոն կոչ կ'ուզղէ Հոյսատանեայ Ս. Եկեղեցւոյ զաւակներուն, որ խելամոհին և հաստատեն, Հայ Եկեղեցիէն հեռացածներու միջոցաւ, այն միութիւնը, որմէ իբր թէ հակառակ մեր նախնեաց մենք հեռացած ենք: Մէկ խօսքով, Միութիւն ընդ Հռովմայ Եկեղեցւոյն և հնադարեւութիւն Հռովմայ Քաճառայապետին:

Ուրեմն թողունք մեր Եկեղեցւոյ առաքելական հիմնարկութիւնը, մեր հազար անկախութիւնն ու ազատութիւնը, թողունք մեր Եկեղեցւոյ ժողովրդական ոգին, որ տիպարն է նախնի դարուց քրիստոնէութեան, թողունք մեր ումենասուրբ գաւառութիւնը, թէ մի և հիլն եւ վրլւ Յիսուս-Քրիստոս, ուրանա՞նք մեր Եկեղեցւոյ հայրապետներու և վարդապետներու հեղինակութիւնները, ուրանա՞նք մեր Եկեղեցւոյ նախապետներն ու մարտիրոսները, որոնք Եկեղեցւոյ միակ եւ կեկղանի Քլլլլլլլլլ չբաժնուելու համար թափած են իրենց վարդապոյն սրիւնը, ինքզինքն մեր ընտիր և անձնդիր հովիւները, որոնք իրենց հօտին անկախութիւնն ու ազատութիւնը պահպանելու համար, իբրև անկուռն սխոյեաններ զիմակալած են միշտ նախ արատքին թշնամիին, ապա Յունական և Հռովմէական Եկեղեցիներու հակառակութեան և հրապոյրներուն: Մէկ խօսքով, ուրանա՞նք մեր շուրջ 1900 տարիներու սուրբ և մարտիրոս Եկեղեցին, որ ամենադժոխակ ժամանակներու ընդմէջէն, կարմիր պահակն է եղած քրիստոնէութեան՝ Ասիոյ մէկ խաւ անկիւնին մէջ, դարերու խաւարին և մարդերու նենգութեան և զազանութեան դէմ:

Այս բոլորը պիտի թողունք ընդունելու համար Հռովմէական Եկեղեցւոյ Միութիւն, Հռովմայ Քաճառայապետի գլխաւորութիւն և Պետրոսի առաքելապետութիւն: Այսինքն թողունք աստուածայինը և ընդունինք մարդկայինը, թողունք

ազգայինը և ընդունինք օտարը, և ի՞նչ շահելու համար, ընդարձակելու համար
Լիբանանի և Սիւրբոյ մէջ Լարէնցոսներու իշխանապետութիւնը թէ ոչ նոր ծիրա-
նիներու և տիրադատներու խոստումը, որուն ի հաշիւ կը գրուին այս բոլորը:

ԵՐԱՅԱՍՏԱՆԻՔԻՆ. — Միրելի Հայրդդի, երբ կարգուս հակիրճ այս էջերը, իբրև
անցողակի բայց անհրաժեշտ պատասխանը ամբարիշտ Լարէնցոյի, որ աներևակայի
չարութեամբ կը խեղաթիւրէ և կ'ուրանայ մեր սրբազան պատմութիւնը իր բովան-
գակ սխրանքով, կարծելով թէ տի մը ծախով կտրելի է մթազնիլ անտանձան գե-
ղեցկութիւնը մեր անցեալին, յիշէ թէ Հայ Եկեղեցին ցղղին խղճմանքն է, որ ոչ
մէկ բանով կրնայ փոխարինուիլ: Այն սրբաբանը՝ ուր Հայ կեանքը ամենէն աւելի
մարգուցեցու գէպի բարին ու կատարելը: Գանձարանը՝ ուր պահուեցան ու կը պահ-
ուին մեր հոգիին ու մաքին շնորհները և մեր արիւնով գնուած գունձերը:

Երբեք մի՛ փոխեր մեր միան ու սակորը եղող Հայ Եկեղեցին, ուրիշ որեւէ
բանի հետ, ան որուն ճարտարապետը եղաւ Լուսաւորիչ, Լուսարարը՝ Մեսրոպ,
ծիր մատուակը՝ Սահակ, աղօթող քուրմը՝ Նարեկացին, և քաղցր երգիչը՝ Ենորճա-
լին: Անիկա դժուարութիւններու և աղէաներու շատ է բախած, բայց չէ խորտակ-
ուած: Ճիշտ ունենալով բաւարար լայս, բուշխելու իրեն յառող հոգիներուն՝ և տա-
րածած իր սփոփարար հովանին, որ եթէ աշխարհիկ զօրութեամբ զինուած բազուկ
մը չէ եղած, սակայն հազեար մխիթարութեան և զօրութեան նեցուկ է հանդիսա-
ցած մարմնապէս խոշտանգուած և դերուած իր գաւազներուն համար:

Միրէ քու Մայրենի Հայ Եկեղեցին, սրբուէ անով, և անոր մեծութեան գան-
ձերուն մէջ սրտնէ հոգեկան կազդոյրդ, պատրաստ ըլլալով, եթէ հարկ ըլլայ,
արեանդ վերջին կաթիլը տալու իրեն համար: Մի՛ արածեցնէր այդ Մայրը և մի՛
ըլլար խորթ գաւակը Հայաստանեայց Եկեղեցիին:

Բոլոր անանք որոնք կը հետանան Հայ Եկեղեցիէն, իրենց ներշնչումն ու ուղ-
ղութիւնը կ'առնեն ուրիշ ոգիէ մը, որ խոժոռ կը նայի մերինին: Բոլոր անանք
որոնք մարգարսական ծաղկաններով ազգին ծոցէն կը խլեն իր միտմիտ և յաճախ
բարեմիտ գաւակները, իրենց վրայ կը հրաւիրեն Հայ ժողովուրդի դարուսը արեան
ու հաւատքի բողոքը, արիւնպատգամ անէժքը:

Ձուակունք Հայաստանեայց Եկեղեցւոյ, հազէք նորէն և միշտ, մեր դարուսը
ողջմտութեան զրահը, իբրև մի հօտ շարունակելու մեր գոյութեան պայքարը: Ամէն
մասնիկ որ կը փրթի մեր ամբողջութենէն, արժէք մըն է որ կը պակսի մեր նիւ-
թական ու հոգեկան դրամազուլիէն:

Ուշադիր եղէք Առաքեալի խօսքին, «Որպէս ընկալարուք գրիստոս Յիսուս
զՏէր, նովին գնացէք: Զգոյշ լիբուք, մի ոք իցէ որ զձեզ կողոպտիցէ ճարա-
բութեամբ և սնտի խաբէութեամբ, որք ըստ մարգկան աւանդութեան և ըստ առ-
բերց աշխարհի են և ոչ ըստ Յիսուսի-Քրիստոսի»:

ԽՄԲ.

(Վերջ՝ 4)



ՆՕԹՔ ԵՒ ՆԻՇՔ

Վարդան Վարդապետ Թէքէեանը, «Մասիս» շաբաթաթերթին մէջ պաշտպաննիլ եւ արդարացնել կը փորձէ ստապատում Լորէնցոն եւ իր «Հայոց Եկեղեցին», ԵԱՏԻ անդրադարձութիւններուն դէմ, քրտաբարբառ հայերէնով մը: Եթէ Լորէնցոն իր անիմաստ հերքումներով փորձը կ'ընէ ուրանալու Հայ Եկեղեցոյ առաքելականութիւնը եւ ուղղափառ դաւանանքը, Թէքէեան Վարդապետը իր Թիթեղեայ հայերէնով եւ հասկացողութեամբ, բարձրօրէն կ'ապացուցէ թէ զուրկ է նախ հայ լեզուի ժառանգութենէն, յետոյ տրամախոհութենէն, բայց մանաւանդ հայութենէն:

Նախ ծիծաղելի միատնութիւն է կարծիլ թէ Լորէնցոյի «Հայոց Եկեղեցին» «զիտական մեթոտով ուսումնասիրութիւն», «բանասիրական կոթող» եւ կամ «հայ ազգին պատիւ բերող գործ» է: Այդ գիրքը սուտի եւ չարութեան խառնարան մըն է լոկ, ապացոյց Լորէնցոյի հոգիի ամալութեան եւ անհայութեան: Մարդ ուղեղի տեղ մաղձամաշկ եւ մարմնի փոխարէն խանձած ոսկրակոյտ մը պէտք է ունեցած ըլլայ, նման գործ մը փոխել կարենալու համար: Ոչ մէկ ատեն Հայ կաթողիկէ գրող մը չէ եղած այնքան առատ իր հոգիին աղբովը, որքան Լորէնցոն իր այս ստապատումին մէջ: Վստահ ենք որ Թէքէեան Վարդապետը չէ կարդացած Լորէնցոյի գիրքը, այլապէս անկարելի պիտի ըլլար, նոյնիսկ իրեն համար, ըսել թէ «Կոզեանի գրքին մէջ չկայ ամենեւին կիրք», երբ ամբողջ հատը յայդ ժահրով է լեցուած: Լորէնցոն հանգուցեայ Օրմանան Սրբազանի եւ Հայ Եկեղեցիի դէմ իր հսկայ նախանձն, գլխստուած հաւու մը պէս կը չարչարուի, առանց մեռնիլ կարենալու: Իր ստապատումը գիտական մեթոտ եւ պատմական գործ ըլլալէ աւելի, Հայ Եկեղեցիի դէմ նետուած թուք մըն է, եւ Թէքէեան Վարդապետը այդ թուքն է որ կը լզէ, մեղր ըմբռնողի խորժակով եւ թշուառ մեղսակցութեամբ:

ԵԱՏ իր անդրադարձութիւններուն մէջ փողոց չէ իջած, ինչպէս այնքան անհեթեթօրէն կ'ուզէ ըսել Լորէնցոյի մեղսակցը, սակայն ստողներու եւ ուրացողներու հետ դէմ առ դէմ գալու եւ անոնց արժանի լեզուով իր խօսքը ըսելու հարկին ներքեւ, անոնց քովէն է անցած: Եթէ այս ցաւալի հանդիպումը մեղք էր նկատուի, իր ըսելիքը չզիտցող ճամարտակներէն, առիկա մեր արգահատանքը կ'աւելցնէ միայն անոնց նկատմամբ, որոնք իրենց աչքին գերանը տեսնելու չափ աչք չունին: ԵԱՏը չի ստեր, չ'ուրանար, չի խեղաթիւրն պատմութիւնը, մանաւանդ մեր պատմութիւնը, իր բովանդակ սխրամբով: Անբաղդատելի այդ յիշատակարանը, որ մեզի կը բերէ մեր սուրբերու եւ հերոսներու կարմիր շարանը, որոնք զարիտուն գիշերը եւ գալիքին արշալոյսը կրեցին հաւասարապէս իրենց հոգիին խորը: Որոնց ստուերները տակաւին կը մնան թափանցիկ եւ գանկերը ճառագայթներու հնոց, զոր չկրցին մարել կրկնի բարբարոսութիւնները բոլոր ժամանակներու: Անոնք բոլորը մեզի կը պատկանին, մեր արիւնն է ու հոգին է կերտուած, կազմելով մեր էութեան ամենէն խորհրդաւոր պատկերը, տեսիլը, յայտնութիւնը մեր երէկուան եւ վաղուան:

Ահա այս սրտառուչ անցեալին դէմն է որ կը խիզախէ Լորէնցոն, նոր Տօնբիշոթի մը բովանդակ արկածախնդրութեամբ անոր դէմ Տօնելով իր փայտէ նիզակը: Իսկ Թէքէեան Վարդապետը Սանբոյի դերով այս վրիպած ասպետութիւնն է որ կ'ընթէ, անարուեստ սեպարտութեամբ:

Աւելի կ'արժէ պարզ բայց կենսունակ անցեալ մը՝ որ կայ ու կը մնայ իր քաղցր մշտնի մէջ, քան այն՝ որ իր կարծեցեալ փառքովն ու ճոխութեամբը ամէն օր կը մեռնի իր հպարտութենէն:

ԵԱՏը չի վախնար ճշմարտութենէն, բայց կը ծառանայ անոնց դէմ՝ որոնք ամբարշտօրէն կը յանդգնին կոնկուտիլ ամենէն նուիրական սրբութիւնները մեր ժողովուրդին, իրենց աղտոտ կօշիկներով: Անոնց դէմ, որոնց համար ամէն ինչ մտքի խաղ է եւ պահանջքին յարմարուած խորհելու եւ զգալու կերպ: Անոնց դէմ, որոնք իրենց կազմակերպած պատեհապաշտու-

Քեան հանապազօրեայ կրթանքին մէջ ած-
խացնել կը փորձեն իրենց ներսը, ինչ որ
վեր է ամէն բանէ: Այսպիսիներուն համար
ճշմարտութիւնը ոչ միայն յարաբերական է,
բայց մանաւանդ յաջողութիւններ որսալու
հնարք մը լով: Այդ հնարքին է որ դիմած
է Լորէնցօն, տասնորհինգ տարիներու իր
գործը լոյսին հանելով այնպիսի ատեն մը,
երբ Լիբանանի մէջ Կաթողիկէ համայնքին
Պատրիարք-Կաթողիկոսութեան դուռը կը
բացուէր, որմէ ներս կը կարճէր թէ պիտի
կրնար մտնել, Հայ Եկեղեցւոյ դէմ մրտտած
իր ընդարձակ զրպարտագրին միջոցաւ,
սակայն յաւիտենական է առակին դասը,
ով որ շուրջին ետեւէն կը վազէ, իր բերնին
ոսկորը կորսնցնելու վտանգին կ'ենթարկէ
ինքզինքը:

Ըսինք թէ Քէբէեան Վարդապետը ծա-
խաւեր իր արտայայտութիւններով կասկած
կը ներշնչէ թէ կարդացած ըլլայ Լորէնցոյի
ստապատումը: Իսկ ԵԱՏԻ անդրադարձու-
թիւններուն դէմ իր զառանցանքները ցոյց
կուտան որոշապէս թէ յիշեալը չէ կրցած
հասկնալ ԵԱՏԻ ըսածները, եւ իր մզլուտած
վառօղով լեցուն հրետանին միայն իր ու-
ղեղին պարապութիւնն է որ կը թնդացնէ:
Այլապէս պիտի չըսէր բաներ՝ որոնք գո-
յութիւն չունին այդ գրքոյկին մէջ:

Հոն չէ ըսուած, օրինակի համար, թէ
այժմու Պապը բռնաւոր է, հոն չէ անար-
գրեւած Կաթողիկէ Եկեղեցին, բայց մատնա-
նշուած է անոր ամբարհաւաճութիւնը եւ
իրմէ դուրս միւս Եկեղեցիները իրրեւ հերձ-
ուածող նկատելու հակամտութիւնը: Թէ
Հայ Եկեղեցին, իբր մաս ընդհանուր Եկե-
ղեցիի, իրեն հիմնադիր կը ճանչնայ զՅի-
սուս, ի հեճուկս Հռովմէական Եկեղեցիին
որ կ'ընդունի զՊետրոս: Թէ Հայ Եկեղեցիին
հիմնադիր չեն Նոյնպէս առաքեալները, ո-
րոնք անոր քարոզիչներն են միայն: Ճշը-
մարիտ Եկեղեցին միակ հիմնադիր մը մի-
այն ունի զՅիսուս Քրիստոս: Հետեւաբար
մենք իբրեւ Եկեղեցի, քրիստոնէական ենք
ըստ հաւատոյ, առաքելական՝ ըստ քարո-
զութեան եւ ըստ աւանդութեան(*):

Աւելին, մեր նոր Եւթիփոսոնը հակասու-
թիւններ մատնանշել կը յաւակնի ԵԱՏԻ
արտայայտութիւններուն մէջ, յայտարա-
րելով թէ «էջ 24ին մէջ Հայ Եկեղեցին կը
կոչէ Տիեզերական Եկեղեցւոյ անդամ, իսկ
մէկ էջ յետոյ կը մերժէ Տիեզերական Եկե-
ղեցւոյ գաղափարն անգամ»: Անոնք որ
ունին ԵԱՏԻ գրքոյկը թող բանան եւ նա-
յին թէ նման բաներ գոյութիւն ունի՞ն:
Ճիշդ է թէ հոն կան շարք մը բացատրու-
թիւններ, Եկեղեցիի յղացքին վերաբերեալ
որոնք վեր մնացած են, ինչպէս կ'երեւի,
խեղճ վարդապետի դժբախտ հակապաշտո-
թիւնէն: Ան ոչ միայն կը շփոթէ ըսուած-
ները, այլ նաեւ երեսները էջ 30ի մէջ բա-
ուածները էջ 34ի մէջ կը զետեղէ, թող թէ
այս էջերուն նկատմամբ իր ըսել ուզածը
բացարձակապէս կապ չունի հոն ըսուածին
հետ:

Յետոյ զիտնականի հովեր առած, պատ-
մական սխալներ նշել կը փորձէ ԵԱՏԻ հե-
տեւեակ արտայայտութիւններուն մէջ. —
«Պատմական տուեալներ անբաւական են
փաստելու Պետրոսի Հռոմ երթալը: Առա-
ջին դարուն պատկանող ոչ մէկ յիշատա-
կարան ունի նման արձանագրութիւն մը»: Ասոր ի պատասխան մեր նոր պատմագէտը
կը յարէ. «Այսօր բովանդակ գիտական աշ-
խարհը համաձայն է ընդունելու մէջ Ս.
Պետրոսի Հռոմ երթալը»: Նկատի չունինք
իր անկարելի նախադասութիւնը, սակայն
շատ ուրախ պիտի ըլլայինք իթէ այս նոր
բանիմացը մեզի բերէր հակափաստեր՝ ըս-
ուածը հերքող, եւ չխօսէր յանուն գիտա-
կան աշխարհի, թող թէ նման աշխարհ մը
իր մտքին մէջ գոյութիւն չունի:

Յետոյ իրրեւ մեծ պատմաբան կը մերժէ
ընդունիլ թէ «Լատին ցեղերը առհասարակ
Կաթողիկ են, Ունկլո-Սաքսոնները՝ Բողո-
քական, իսկ մնացեալները Օրթոտոքս»: Իբրեւ
հակափաստ ըսուածին, մեր պատ-
մագէտը կը յիշէ գերման, սլաւ, ռուսէն,
սեւամորթ Կաթողիկներու պարագան, ա-
ռանց անդրադառնալու թէ այս մանր բա-
ցառութիւնները օրէնք չեն կազմեր եւ չեն

կրկնելու քաշկոտուք պատճառաբանութիւններ,
նախապայարեալ տեսութիւններ, այլընդայնոյ
մեկնութիւններ եւ քմածին եզրակացութիւններ,
առանց զոյգել արժանապատուութեան:

(* Արդեօք մեղք եւ հայտնաճեք է խօսիլ այն
էմբարտութիւններէն, եւ այգանել այն ամբա-
բիշտները, որոնք թուրքի պէս վարժուած են

կրնար խախտել ցեղային ընդհանուր նկարագրով պայմանաւոր իրերու ընթացքը: Իր յիշածները Կաթողիկ եկեղեցւոյ առաքելութեան, մարդոքութեան եւ բռնութեան գոհեր են մեծաւ մասամբ, եւ վերոյիշեալ ընդհանուր սկզբունքին չեն հակասեր: Թէքէեան եղկելին ուրկէ՞ պիտի գիտնայ թէ ազգութիւնը հրաշէկ երկաթի մը պէս դրոշմուած է ամէն անհատի վրայ, որուն համար դժուար է իր վրայէն վերցնել ազգային անջատ տիպարը, կամ ազատել իր ազգային առանձնայատկութիւններէն եւ հոգիի այն ուրոյն կաղապարէն որ յատուկ է իր պատկանած ազգին: Այս սկզբունքը ազգադաւնորուն համար չէ անշուշտ, ոչ ալ իրենց մորթին ու զգեստին հետ իրենց ազգութիւնը փոխողներուն:


Ամենէն ճիշտապէս, Թէքէեան Վարդապետ Ժ.Ն. դարուն մէջ կը փոխադրէ ԵԱՏԵ, չենք գիտեր իր ո՞ր մեղքին համար, երբ ինքը եւ իրենները Միջին Դարը իրենց կրօնակը առած կը պտտին, նոյնիսկ այսօր, եւ կասկածելի է որ կարենան ազատիլ միջնադարեան մտքի եւ հոգիի կաշկանդումներէն եւ յետահայեաց մտայնութեանէն, որքան ատեն որ Կաթողիկ անունը կը կրեն իրենց վրայ: Ասիկա ամբաստանութիւն չէ, այլ իրականութիւն, եթէ Թէքէեան Վարդապետը իր հոլոված բայց չունեցած գիտութեամբ եւ տարփողած լոյսով նկատի առնել կարենայ մեր ըսածը:

Միւս կողմէ, «Սիոն» իր մասնաւոր շնորհակալութիւնը կը յայտնէ Թէքէեան էարդապետին, որ ԵԱՏԻ՛ն կը վերագրէ արեւելեան վարդապետներու մտայնութիւնը: Այդ արի արանց եւ գիտուն կրօնա-

ւորներուն շատ բան կը պարտի Հայ եկեղեցին, որովհետեւ անոնք, հաւատարիմ իրենց նախնեաց դաւանանքին եւ աւանդութեան, զիտցան ըսել թէ «այս աւանդութեան վրայ հաստատեալ կամք եւ ոչ խտտորիմք ի նմանէ ո՛չ յաջ եւ ոչ յահեակ», երբ Թէքէեան Վարդապետներու նման խեղիքանքներ կը հեռանային իրենց մայրենի եկեղեցիէն եւ ազգութենէն, պնակ մը ոսպնակաւորի հաշուոյն:

Լաւ մտիկ ըրէ, Թէքէեան Վարդապետ, ԵԱՏԻ գրքոյկը անխախտ համոզումն է ինչպէս մեր երէկուան այնպէս ալ այսօրուան Հայ եկեղեցիի բոլոր զաւակներուն համար: Այդ գրքոյկին պահանջը այնքան շատ է, որ Սրբոց Յակոբեանց Տպարանը ստիպուած վերստին կը հրատարակէ զայն: Անտարակոյս որ անոր ստեղծած խանդավառութիւնը մէկ կողմէ եւ Լորէնցոյի գրքին ամօթը միւս կողմէ տուն տուն պէտք է ըլլան ձեր «Մասիս»ի փսխուքին:

Ողբի խայթ, հոգեկան տառապանք, թէ ոչ ճշմարտութեան խթանին դէմ չկարենալ քրքրելու սրտմտութիւն. մին կամ միւսը, եւ կամ թերեւս բոլորը միասին մյուս են Ձերդ Հայրութիւնը, որ ցաւին տակ ընթացք տաք Ձեր անտարագելի յօդուածին, ըսելու բաներ՝ որոնք անդէպ են, սրբագրել փորձելու իրողութիւններ՝ որոնք մեր հաստատ համոզումը կը կազմեն: Քեզի պիտի բաւէր, սիրելի Վարդապետ, առտուան Սաղմոսը եւ իրիկուան «Համբարձին», անոնցմով թերեւ կարենալիք թիլ մը աւելի համարալնալ, գէթ Լորէնցոյի հասնելու համար: Առայժմ՝ այսքան:



ԶԱՐԵՆ ԳԵՑ ՆՈՒՊՈՐ

Ժ Ը Լ Ե Ի

Փրճել, 20 Սեպտեմբեր 1962

ՏԻՄՐ ԱՆԻՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Նախագահ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան

Նիւ Ծորք

Իմ սիրելի Նախագահ,

Ձերմ շնորհակալութիւնն կը յայտնեմ այն այցելութեան համար զոր բարեհաճեցաք ինծի տալ, ժրնելի մէջ, Ձեր Եւրոպա վերջերս կատարած համընդգոյթեան ընթացքին, և որ մեր միջև կարծիքներու փոխանցումի օգտակար առիթ մը եղաւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան այժմու կացութեան և ապա այդ հեռանկարներուն շուրջ:

Մեր Միութեան վերանորոգման հիգիւն և նիւթական միջոցներու ընդարձակման մէջ Ամերիկայի մեր բարեկամներուն զերը այնքան թանկագին եղած է և կը շարունակէ ըլլալ, որ Ձեր այցելութեան առիթէն կ'օգտուիմ շերմագին մեծարանգս մատուցանելու, անկամ մը ևս, մեր Միութեան Ամերիկայի բոլոր անդամներուն և մասնաւորաբար Կեդր. Վարչութեան որուն Կուսակց. Նախագահէք այնքան զործոն կերպով ու ամբողջական նուիրումով մը:

Ցնցուած աշխարհի մը այս դժուարին ժամանակներուն մէջ, դժնգահ է Ձեր աշխատանքը դէմ յանդիման մեր Միութեան ներկայացող փափակ հարցերուն, տրուած ըլլալով մասնաւոր զայն հսկող ծաւալումը զոր ան ստացաւ համաշխարհային վերջին պատերազմին վախճանէն ի վեր:

Ես շատ լաւ կ'ըմբռնեմ, այն անդեկութեանց լոյսին տակ զոր բարեհաճեցաք ինծի հայ-թայթել և որոնցմէ զրկուած էի ժրնելի իմ առանձնացումիս մէջ, այն բոլոր պատահանները որոնք անհրաժեշտ գարնացին մեր Միութեան վերակազմութիւնը Ամերիկեան օրէնքներուն համաձայն, պահելով անդերձ Զուիցերիական իրաւական անձնաւարտութեան առաւելութիւնները, անհրաժեշտ պահանջներու սահմանին մէջ: Ինծի համար գոտեպնդիչ է և բաւարար Ձեր հաւատարմութիւնը թէ Մայր Ընկերակցութիւնը, այժմ Ամերիկեան իրաւական կառուցուածքով, անվիճար կը պահէ մեր Միութեան նկարագիրը իբր հայկական ազգային հաստատութիւն, ապա հովելով բոլոր անդամներուն իրաւունքներուն հաւասարութիւնը, ո՛ւր որ այ գտնուին անոնք և ի՛նչ հպատակութեան ալ պատկանին: Անվերապահ վստահութիւն ունիմ Ձեր կորովամտութեան, ինչպէս նաև մեր Կեդրոնական Վարչութեան իմաստութեան վրայ, ներգոյնակելու համար մեր Միութեան փերագոյն շահերը բարդութիւններու հետ՝ որոնք կը ծագին այն միջազգային կացութենէն որուն տիրապետութեան տակ կը մնան աշխարհի բոլոր կողմերը ցրուած հայերը, կախում ունենալով տարբեր օրէնքներէ և կոստներէ:

Այլշարք մնացի՛ իմանալով որ մեր ընդարձակ կազմակերպութեան երկու երկ անդամներ կը խորհին եղբր Զուիցերիական արդարադատութեան ենթարկելու մեր Միութ ընդհանրագրող հարցեր: Առանց ինչորոյ աւարկայ ընկել իբնեց դիտաւորութիւնը, քանի որ լսի իրաւական դատումի պարագայ մըն է, իրողութիւն է որ նման գործակերպ մը, ան-նախընթաց բան մըն էր մեր մէջ, բացարձակապէս հակառակ պիտի ըլլար մեր կանոնադրին, աւանդութեանց և մեր Միութեան պիտի իսկ, և ինծի ուրիշ բան չի մնար եթէ ոչ գատապարտել զիրենք: Մեր Միութեան վերաբերեալ որևէ հարց պարտի գտնել իր լուծումը մեր կանոնագրութեան ներքին կարգաւորութիւն մէջ, առանց որևէ արտաքին միջամտութեան՝ ըլլայ գատապարտ կամ ուրիշ ձևով: Եղբայրական այսին, մեր Միութեան շահերուն զերագոյն նախանձայնորութիւնը հրամայական կը գարնանն սոյսպիսի գիրքաւորում մը, ու կը բացատրեն իմ այս տուած դատաստանն:

Ձեզ կը շնորհակարտեմ Ձեր կորովի կեցուածքին համար երբ չէք թողուր որ ո՛րևէ հարուած տրուի Բարեգործականի միամտիլ կառուցուածքին, և չէք թոյլատրեք որ մեր մեծ ընտանիքին ծոցէն ներս պայծառութիւնը, խաղաղութիւնը և համերաշխութիւնը խանգարուին անխորհուրդ քայլերու հետեանքով:

Յանձնի Ձեր և Կեդրոնական Վարչութեան անդամներուն, լաւ ձեռքերու մէջ կը գտնուի այժմ ազգային հոյակապ գործը մեր Բարեգործական Ընդհանուր Միութեան որուն գլխաւոր այժմ ազգային իմ հօրմէս և ապա իմ եղբորմէս ետք, գործոն նախագահութիւնը ստանձած էի և հպարտ եմ մնալու Պատուոյ Նախագահը: Հաստատ համազօրում ունիմ որ շնորհիւ Ձեր ներկայարտ եմ մնալու Պատուոյ Նախագահը: Հաստատ համազօրում ունիմ որ շնորհիւ Ձեր ներկայարտ եմ մնալու մեր Միութեան համայն աշխարհի բոլոր անդամներուն հասարակական նուիրելիքներուն և շնորհիւ մեր Միութեան համայն աշխարհի բոլոր անդամներուն հասարակական նուիրելիքներուն և նախանձայնակութեան, ապահով պիտի մնան մեր գործին տնկածութիւնը, յաւատարմութիւնը, ծաղկումը և յաւերժական փոխանցումը սերունդէ սերունդ:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Զ Ե Կ Ո Յ Յ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ



Մեր Միութեան Պատուայ Նախագահ Զարեհ Պէչ Նուպար պատգամ մը ուղղած էր՝ անցեալ Ապրիլին Բարիզ գումարուած Եւրոպայի Շրջանակին Պատգամաւորական Ժողովին, անոր ներքին աշխատութեանց աւելնութեամբ, իրեն հայթաթուած անկատար և միակողմանի տեղեկութիւններու հիման վրայ, և որ Փարիզի մէջ դիտումնաւոր հրապարակումի մը առարկայ էր դարձած, սեղի տալով նաև հայ մամուլին մէկ հատուածին կողմէ անոր արտասպումին՝ սխալ ու անարեհացակամ մեկնարանութիւններով:

Վերջերս, Միութեան Նախագահ Տիար Ալեք Մանուկեան, Եւրոպայ իր նամարդութեան ընթացքին, սիրալիբ ընդունելութեան մը առարկայ եղաւ Նորին Վեներաբանական կողմէ, Ժընևի մէջ, ու ընկանարար իրենց խօսակցութեան նիւթ դարձած Հ. Բ. Ը. Միութիւնը:

Այդ առիթւ, Զարեհ Պէչ Նուպար, ինքնարեբարքոր սիւսիւքը ըստգորշ կերպով յայտնել իր տեսակէտներն ու կեցուածքը մեր Միութիւնը շահագրգռող հարցերու և ներքին մասնաւոր երևոյթի մը հանդէպ, Տիար Ալեք Մանուկեանի յանձնեց ուղարկու պատգամ մը՝ որով միտմամանակ կը սրբադրուէին իր նախորդ գրութեանն ծնունդ առած անհասկացողութիւնները:

Վը հրատարակենք Նորին Վեներաբանական պատգամը, Ֆրանսերէն ընագրէն հայերէն հարգաւոր Թարգմանութեան և որուն ամբողջական բովանդակութիւնը աւելորդ կը դարձնէ ուրիշ օրէէ խօրհանութիւնս:



Կարևոր կը նկատենք, իբրև վերջիշում և լուսարանութիւն հանրային կարծիքին, անգամ մը ևս ճշդել թէ համաշխարհային վերջին պատերազմին հետեանքով մեր Միութեան կեդրոնը 1940 ին Քարիզէն փոխադրուեցաւ Նիւ Եորք, ու անկէ ի վեր Միացեալ Նահանգներու մէջ գտաւ աճումի, տարածումի, զարգացման լայն նոր ասպարէզ ու դաշտ, արձանագրելով փայլուն իրագործումներ, զորն կը պարտինք նաև ամերիկեան օրէնքներուն պարզեւած հարկազերծումի և օւրիշ բազում առաւելութիւններուն:

Այս իրախուսելի արդիւնքներուն ի տես, և այլ բազմապիսի նկատումներով, խորհուած էր Հ. Բ. Ը. Միութիւնը օժտել Ամերիկեան իրաւական Կանոնագրութեան մը երաշխքներով և ապահովութիւններով, նախանձախնդրութիւն մը՝ որ մէկէ աւելի անգամներ հանդիսաւոր կերպով արտայայտուած էր մեր Միութեան Ընդհանուր Ժողովներուն մէջ:

Երկար տարիներէ ի վեր հետապնդուած ծրագիր մըն էր որ, ուրիմն, իրաւական կէտերու և ազգային նկատումներու բազմակողմանի ուսումնասիրութիւններէ ետք, ի վերջոյ իրագործուեցաւ 19 Փետրուար 1955 ի Ընդհանուր Ժողովին մէջ, 250 ի դէմ 2540 ձայներու ջախջախիչ առաւելութեամբ, ձայներ՝ աշխարհի բոլոր կողմերէն:

Ժողովէն ամիսներ առաջ իսկ զբկուած հրաւիրագրիներուն մէջ, մի առ մի արտագրուած էին տրուելիք որոշումները, ու պատասխանները՝ հաւանութեան կամ մերժումի մակագրութեամբ, և իւրաքանչիւրը վաւերացեալ ստորագրութեամբ, Կեդրոնական Գրասենեակ հասած:

Վը խնդրեմ, սիրելի Նախագահ, որ մեր Միութեան անդամներուն ջոյց տուած միասնական վստահութեան, ինչպէս նաև իմ այլ ամբողջական վստահութեան մէջ, գտնէք ուժն ու իրաւունքը շարունակելու համար հետապնդել Ձեր նուիրական առաքելութիւնը — պաշտպանել ամէն կերպով ինչ որ մեզ կը միացնէ՝ մեր յանձնարարական Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնը:

Կ'արտոնեն որ ի հարկին իմ այս նամակս հրատարակէք ինչպէս որ անհրաժեշտ կը դատէք: Խորհուած կը ցաւիմ որ 12 Ապրիլ 1962 ի իմ պատգամս, արդիւնք անկատար լիցթած րարի մը, և որ կը վերաբերէր մեր Միութեան Եւրոպայի վերջին Պատգամաւորական Ժողովի ներքին աշխատանքներուն, գործածուած և մեր Միութեան իսկական շահերուն հակառնեայ եղանակով հրապարակուած է, անշուշտ ընդդէմ իմ բուն մտածումներուս, որոնք ոչ մէկ տարակոյսի կրնային սեղի տալ:

[Ստորգ.] ԶԱՐԵՀ ՆՈՒՊԱՐ

ժընև, 20 Սեպտեմբեր 1962
Հիմնադիր եւ Պատուայ Նախագահ
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան

Գ Ն Ա Հ Ա Տ Ա Ն Ք

ՍԻՈՆ-ի սեխասակից Տիար Գրիգոր Սարգսեան՝ Ն. Ս. Օժուրիւն Վազգէն Ա. Կարողիկոսին կողմ գնահատուած է Ս. Լուսաւորչի Ա. Կարգի շնորհագրով, Քարեղործականի, Հայ Եկեղեցիի եւ Հայ եկեղեցական գրականութեան ի նպաստ երկար ծառայութեան մատուցած իր օգտագոյն ծառայութեանց համար:

Շնորհակալ եւ զայն արժեւորող Կոնգրակը պատշաճապէս յանձնուած են իրեն ձեռամբ Գալիթորնիոյ նորահաս Ս. Առաքելոսի, ճակատագրի մը ընթացքին, որ սարճուած էր Առաքելոսի բարի գալուստ մտաբերու համար, Կիրակի, 4 Նոյեմբեր 1962 ին, Ֆրեզնոյի Ս. Պօղոս մայր եկեղեցւոյ նորակառոյց ընկերական սրահին մէջ:

ՍԻՈՆ իր կարգին սրագինս կը ընդհանուրէ իր անխնայ աշխատակիցը իրեն եղած այս գեղեցիկ ընդհանր համար, որուն արժանի էր ինքը:

էին մինչև ժողովին գումարումը, քուէի իրաւունք ունեցող Միութեան բոլոր իրաւասու անդամներուն կողմէ, նիտահն ներկայ եղող բազմաթիւ անդամներու ձայներէն զատ:

Այս կերպով Հ. Բ. Ը. Միութիւնը ունեցաւ զօրեղ նոր կառուցուածք մը, տրամաբանական, բնական ու ներդաշնակ, ուր թէ իրողապէս և թէ իրաւապէս կը հաստատուէր և ցարդ կը պահուի մէկ կեդրոն, ենթակայ մէկ օրէնսդրութեան և համարատու, ըստ առաջնոյն, Ընդհանուր ժողովին՝ որուն կը մասնակցին աշխարհի բոլոր անկիւններէն մեր բոլոր իրաւասու անդամները, բոլորն ալ եղբայրական ոգով իրարու կապուած՝ Միութեան անփոփոխ հիմնական նպատակներուն շուրջ, անխախտ միասնականութեամբ:

Ձուիցերիական Ընկերակցութիւնը ևս պահուեցաւ, միաժամանակ, բայց անշուշտ սակմանափակ իրաւասութեամբ ու գործերով, ենթակայ բնականաբար Մայր Ընկերակցութեան, իր կեդրոնով Նիւ Եորքի մէջ, գլխաւորաբար Միջին Արեւելքի և Եւրոպայի կառուածներուն համար, և ի նախատեսութիւն ապագայ որեւէ հաւանականութեան:

Կեդրոնական Վարչութիւնը, վարչական վերին իրաւասու մարմին, ընտրուած Ընդհանուր ժողովէն և անոր տարւել տարի համարատու նիւթապէս թէ բարոյապէս, կը յանձնաձեռն միաժամանակ թէ Ամերիկեան և թէ Ձուիցերիական Ընկերակցութեանց ենթակայ Հ. Բ. Ը. Միութեան ամբողջական ստացուածքը, ի շահ մեր Միութեան նպատակներուն, այսինքն ի շահ մեր Ազգին:



Անա յստակ, ամբողջական և իրական պատկերացումը Միութեան այժմու իրողական և իրաւական կառուցուածքին — իմաստուն, խոհեմ ու հեռատես ուղղութիւն և գործելակերպ՝ Հ. Բ. Ը. Միութեան նման ընդարձակածաւալ մեծ կազմակերպութեան մը համար որ կը գործէ աշխարհի ամէն կողմերը ջրուած հայութեան մը ծոցին մէջ:

Համայն Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, իր բազմակողար անդամներով, բոլոր Նրշնակներով և Մասնատնակներով, միաձայն է և ճանչցած ու կիրարկած՝ վերոյիշեալ գոյափոխակը 1955 էն ի վեր:

Եւ Փարիզէն քանի մը անդամներու բողոքն ու՝ անոր առջնութեան ապերասան ընթացքը, զոր ցաւով կ'արժանագրենք, արգիւնք կարգ մը տեսչերու և յաւակնոտ յամառութեանց, Միութեան հանդէպ անշահախնդիր վարմունք մը և շինարար ոգի մը չեն ենթադրեր, ու ամէն պարագայի սակ բան մը չեն փոխեր մեր մեծ կազմակերպութեան բնականոն կացութեան և աշխատանքին մէջ:

Գրիգոր Հ. Բ. Ը. Միութեան
Կեդր. վարչ. ժողովի

Վ Ե Ր Ն Ր Ա Տ Ա Ր Ա Կ ՈՒ Մ

“Revue des Études Arméniennes”, Հանդիսիմ

«Հանդէս Հայագիտական Ուսումնասիրութիւններու» “Revue des Études Arméniennes», պարբերութեամբ, հիմնուած 1920 ին Ա. Մէյէի և Ֆ. Մազլերի ձեռքով. գաղթեցաւ հրատարակութիւնը 1933, թողլով պարագ մը, զոր ոչ մէկ այլ հրատարակութիւն յաջողեցաւ լիցնել:

Հաճոյքով կը տեղեկացնենք թէ, Գալուստ Կիւլպէնկեանի Հիմնարկութեան աւստաններն աջակցութեան շնորհիւ, «Հայագիտական Ուսումնասիրութիւններու Հանդէս»ը պիտի վերածնի նոր ձևի մը տակ և նիւթական պայմաններու մէջ, որոնք կ'ապահովեն կանոնաւոր հրատարակութիւն մը բազմաթիւ տարիներու համար:

«Հանդէս»ը պիտի ունենայ խմբագրական մարմին մը, ուր ներկայացուած են հայագիտութեան զանազան մարզերը, ինչպէս և զանազան մշակոյթներ, որոնցմով հիւսուած է Հայաստանի պատմութիւնը: Խմբագրական Մարմինին կ'անդամակցին Պ. Պ. Ե. Պենվենիսթ, Կ. Գահէն, Մ. Գանաթա, Փ. Տիւմէզիէ, Ա. Տիւրան-Սամմէր, Ֆ. Ֆէյրի, Ա. Կրայար, Պ. Լըմիւր, Շ. Մերսիէ, Ա. Միրամպէլ, Լ. Րոպէր:

Խմբագրութեան քարտուղարն է Պր. Հայկ Պէրպէրեան, 10, Bd. Delessert, Paris (16^e).

Կ'առաջագրենք 1963 ին հրատարակել «Հայագիտական Ուսումնասիրութիւններու» նոր շարքին առաջին հատորը:

«Հանդէս»ը, լայնօրէն արամադրելի է բոլոր երկիրներու գիտնականներուն, պիտի հրատարակէ գիտական յօդուածներ, ուսումնական լուսնային ճիւղերու վերաբերեալ, լիզուադիտութիւն և բանասիրութիւն, պատմութիւն և հնագիտութիւն, ընկերաբանութիւն և ազգագրութիւն, ամենէն տարածուն և միեւնոյն տառն ամենէն հասկնալի հեռագատիկերի մը մէջ, ընդգրկելով յարաբերութիւնները հայկական մշակոյթին՝ դրացի երկիրներուն հետ:

Լայն տեղ պիտի արուի Հայաստանի մէջ կատարուած աշխատանքներու թարգմանութեան, որոնք, այլապէս, անմատչելի կը մնան Արևմուտքի բազմաթիւ գիտնականներու: Զանազան ուսմանց զարգացման մասին ընդհանուր տկնարկներ, զբախտական ցուցակներ և ժամանակագրութիւններ պիտի աւելնան յօդուածներուն և ինքնագիր ժանթագրութիւններու վրայ, որոնք կրնան ընդգրկել քարտէս և նկար:

Ուրախ պիտի ըլլանք ունենալով Ձեր ալ աջակցութիւնը, խնդրելով նոյնպէս որ ներկայ յայտարարութիւնը յանձնէք Ձեր ընթերցողներու գիտութեան:

Խմբագրական Մարմինի կողմէ

Տնօրէն

Ե. ՊԵՆՎԵՆԻՍԿ

Փարիզ, Հոկտեմբեր 1962

Ս. ՅՆԿՈՐԻ ՆԵՐՍՆԷ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Եր. 3 Նոյմ. — Ս. չորից Անտարակցացի: Այտարուան Ս. Պատարագը, որ կը մատուցուէր Ս. Յարութեան Տաճարի գաւիթը՝ Ս. Յովնանէն Անտարանչի մատրան մէջ, զանց առնուեցաւ Ս. Յարութեան Տաճարի ընթացիկ նորոգութեանց պատճառաւ:

● Կիր. 4 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ ժամարան էր Շող. Յ. Դաւիթ Վրդ. Սահակեան:

● Բշ. 5 Նոյմ. — Ս. Յովսէփ Անտաճախոր տունին առիթով, Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթեմանիի Ս. Անտաճածանց Տաճարին մէջ, շայր Յովսէփի գերեզմանին վրայ: Ժամարան էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Շող. Ս. Վաչէ Արշ. Իդնատիոսեան:

● Եր. 10 Նոյմ. — Կէտրէ ետք, Ամեն. Ս. Պատարագը շոր գլխաւորութեամբ, Միտանու թիւնը շարժափառաւով մատը գործեց Ս. Յարութեան Տաճար: Պատանատեղւոյն է Ս. Գերեզմանի աւխտեղէն ետք, թափօրը. անցնելով Տաճարի հիւսիսային թեկէն, իջաւ Գիւս Խաչի այրը, ու ապա բարձրացաւ հայապատկան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Գիւս Խաչի մեծահանդէս նահատուակը: Ապա կատարուեցաւ Տեսորինական Ս. Տեղեաց այցելութեան հանդիսաւ, թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Շող. Ս. Փառէն Արշ. Անտարակցի:

● Կիր. 11 Նոյմ. — Գիւս Սայ: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան է Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, ժամարան էր Շող. Ս. Արշակ Արշ. Իսախանուրեան: Ապա կատարուեցաւ ետադարձ Թեոհանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանատեղւոյն շուրջ, նահատակութեամբ Ամեն. Ս. Պատարագը շոր սր, սամպուանի տակ, Ս. Խաչափայտի մատուցումով Կ'որնէր Տաճարը խնուած հած բաղմաւթիւնը: Թափօրը վերջացաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

● Կիր. 18 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Պատարագեցն է քարոզեց Շող. Ս. Յակոբ Վրդ. Վարդանեան, ընտրան ունենալով Վերանի ազգի՝ որոյ Տէր Ատուած Յակոբայ օրհնական է նման (Յայ. 12): Ս. Պատարագեցն ետք կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտոն: Այնպէս առաջին ապրտամբուութեան հարիւրամեակին առիթաւ, այդ շաբաթուրէն ընթացքին նահատակութեան հոգեհանգստեան Ս. Պատարագէն մաս մը և քարոզը ժայնափրկուանցան Յորգանսի առաքիճայանէն:

● Ուր. 23 Նոյմ. — Նահատուակը պաշտուեցաւ ի Ս. Լընչուկայեան: Հանդիսակցեան էր Գերշ. Տ. Նորայր Սրբազան:

● Եր. 24 Նոյմ. — Տօն Ս. Լընչուկայեացի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցան է Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Լընչուկայեան: Ժամարան էր Շող. Ս. Դաւիթ Վրդ. Սահակեան: Ապա, ըստ սովորութեան, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտոն՝ ազգային բարերարուհի Ազանի ձէվահիրեանի և ընտանեկան պարագայից հոգիներուն համար, նահատակութեամբ Գերշ. Տ. Նորայր եպ. ի:

● Կիր. 25 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարան էր Շող. Ս. Վաչէ Արշ. Իդնատիոսեան:

● Կիր. 2 Դեկտ. — Բարեկեցում Յիսակի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Պատարագեց Շող. Ս. Վաչէ Արշ. Իդնատիոսեան:

● Բշ. 3 Դեկտ. — Ընծայման նահատուակի ի Ս. Յակոբ նահատակեց Գերշ. Տ. Նորայր եպ.:

● Կիր. 4 Դեկտ. — Ընծայման Ս. Անտաճածանց: Առաւօտան, Գերշ. Տ. Նորայր եպ. ի գլխաւորութեամբ, Միտան շայրը ինքնաշարժով մեկեցան Գեթեմանի ժողովուրդը ու շարժափառաւով մատը գործեցին Ս. Ատուածածնայ Տաճարու սր Տիրամօր Ս. Գերեզմանի վրայ օրուան հանդիսաւ: Ս. Պատարագը մատուցն է առօր պատուհնի քարոզեց Գերշ. Լանդիսայեան Սրբազանը, Յեան Ս. Պատարագի կատարուեցաւ, ըստ սովորութեան, հոգեհանգստեան պաշտոն՝ Գիւլապի հիւլպէնկանի և Կիւլպէնկան հոգեհոտանի համար: Նընչեցեց հոգիներուն համար:

● Եր. 8 Դեկտ. — Ս. Եկիղայոսի սփնչկազոծ հայրապետի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղի: Ժամարան էր Շող. Ս. Վաչէ Արշ. Իդնատիոսեան: Վերաբերուած կատարուեցաւ Տաճարի ներքին գաւթին մէջ՝ Ս. Եկիղայոսի առաւան խորանին վրայ:

● Կիր. 9 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Ժամարան էր Շող. Ս. Արշակ Արշ. Իսախանուրեան:

● Ուր. 14 Դեկտ. — Նահատուակի ի Ս. Յակոբ նահատակեց Լուսաւորապետ Գերշ. Տ. Լայրիկ եպ.:

● Եր. 15 Դեկտ. — Ս. Առաքիլոց և Առաքիլ Լուսաւորացի մերջ Քաղտաի և Քարգիլիկաի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղի: Պատարագեց Շող. Ս. Վաչէ Արշ. Իդնատիոսեան:

● Կիր. 16 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարան էր Շող. Ս. Դաւիթ Վրդ. Սահակեան:

● Դշ. 19 Դեկտ. — Նահատուակի ի Ս. Յակոբ նահատակեց Լուսաւորապետ Գերշ. Տ. Լայրիկ եպ.:

● Եր. 20 Դեկտ. — Ս. Լարցե եղիպացոց առնին առիթով, Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ: Ըստ

ստորաթիւեան, ժամադրեւ էր խառնովանահայր
Հոգը. Տ. Մաշտոց Վրդ. Բարխուճեանն :

● Ուր. 21 Դեկտ. — Յղութեան նախատեսակին
ի Ս. Յակոբ Նախագանց Գերշ. Տ. Նորայր Եղօ. :

● Եր. 22 Դեկտ. — Յղութիւն Ս. Աստուածածինի :
Առաւօտան, Գերշ. Տ. Նորայր Եղօ. րի զխառնու-
թիւեանը, Սիբարան Հայրէք ինքնաշարժերով
մեկնեցան Գեթեմանի ձորը ու շրջափառանով
մտաք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար,
ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ որուան հան-
դիտաւր Ս. Պատարազը մատոյց և աւուր պատ-
շահի ջարդեց Գերշ. Հանդիսագետ Սրբազանը :

● Կիր. 23 Դեկտ. — Բարեկեցող Ս. Յակոբայ
պահոց Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Սուրբ
Գիւղարին : Ժամադրան էր Հոգը. Տ. Փառեկ Արշ. Աե-
տիքեանն :

● Ուր. 28 Դեկտ. — Նախատեսակին ի Ս. Յա-
կոբ Նախագանց լուսարարագետ Գերշ. Տ. Հայ-
րիկ Եղօ. :

● Եր. 29 Դեկտ. — Ս. Յակոբայ Մծրնայ հայ-
րապետին : Ս. Պատարազը մատուցուեցաւ ի Սուրբ
Գիւղարին : Ժամադրան էր Հոգը. Տ. Մաշտոց
Վրդ. Բարխուճեանն :

● Կիր. 30 Դեկտ. — Ս. Պատարազը մատուց-
ուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիկ եկե-
ղեցւոյ մէջ : Ժամադրան էր Հոգը. Տ. Յովսէփ Վրդ.
Մամբր :

ՊԼԵՏՈՆԱԿԱՆՔ

● Բշ. 12 Նոյմ. — Կէսօրէ ետք, Սէտտ Թա-
գաւորի գահակալութեան Զրդ տարեգրածի առի-
թով, Սէտտական Արարիոյ շիւղատառարանին
մէջ արքայած ընդունելութեան ներկայ եղան
Ամեն. Ս. Պատրիարք Հայրը և Հոգը. Տ. Եանէ Վրդ. :

● Դշ. 14 Նոյմ. — Ե. վեհ. Հիւսիս Թագա-
ւորի ծննդեան 28րդ տարեգրածի առիթ, Ամեն. Ս.
Պատրիարք Հայրը իր, Ս. Յակոբեանց Միա-
բանութեան և Յարգանտիկ Հայ Համայնքին ա-
նուանով շնորհաւորական հեռագիր մը լրցեց Ամ-
մանի Արքանիքը :

— Նոյն առիթ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը,
ընկերակցութեամբ Աւագ Թարգման Հոգը, Տ.
Դաւիթ Վրդ. Սահակեանի, շնորհաւորութեան
գնաց Ս. Քաղաքիս վեհով. Մուհամմէդլին :

— Նոյն առիթով, Կէսօրէ ետք, Հարամ Եւ-
րիֆի Ենչիխի հողմէ, Ռաստայի սրահին մէջ
արքայած թէյաօղակին ներկայ եղան Հոգը.
Տ. Դաւիթ Վրդ. և Տիրա Կարգին Հինդլեան :

— Դարձեալ Նոյն առիթով, վեհ. Վարդա-
պետի հողմէ, Զարքայի մէջ արքայած հանդիսոյ-
թին ներկայ եղան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը
և Հոգը. Տ. Եանէ Վրդ. :

● Եշ. 22 Նոյմ. — Երեկոյեան, Լիբանանի
անկախութեան 19րդ տարեգրածին առիթ, Լի-
բանանեան Ընդ. Հիւսիստարանի մէջ արքայած
ընդունելութեան ներկայ եղան Լուսարարագետ
Գերշ. Տ. Հայրիկ Եղօ. և Աւագ Թարգման Հոգը,
Տ. Դաւիթ Վրդ. և Տիրա Կարգին Հինդլեան :

● Ուր. 23 Նոյմ. — Ելեմտեց Տեառը Հոգը.
Տ. Յովսէփ Վրդ. Մամբր Նշանադուեցաւ առ-
ժամայ Տեառը Ս. Յարութեան Տաճարին, իսկ
Ս. Աթոռայ Մատակարար Հոգը, Տ. Արշակ Արշ.
Խաչատրեան՝ առժամ. Տեառը Ս. Հրեշտակագե-
տաց վանքի :

— Նոյն օրը, Տրտնական Նոր Հիւղատոս
Պ. Գրիթիան ար Սանդ Մարի իր առաջին այ-
ցնելութիւնը տուաւ Պատրիարքարանին :

● Եր. 24 Նոյմ. — Գերշ. Տ. Սուրէկ Արքեպս.
Քէմանեան մեկնեցաւ Իսթանպուլ :

● Դշ. 11 Դեկտ. — Դիւանագետ և Կարաւա-
ծաց Տեառը Հոգը, Տ. Եանէ Վրդ. Անէման օղա-
յին զծով և վանական գործով մեկնեցաւ Միա-
եակ Նուանգինը, ուր պիտի մնայ քանիչ ամիս :

● Ուր. 14 Դեկտ. — Վատիկանի Համաժողո-
վէն վերադարձող Հատին եպիսկոպոսներու պատ-
ուիրակութիւն մը այցելեց Պատրիարքարան :

● Դշ. 18 Դեկտ. — Դարձեալ, վատիկանէն
վերադարձող Հատին եպիսկոպոսներու ուրիշ
խումբ մը այցելեց Պատրիարքարան :

● Եշ. 20 Դեկտ. — Պելճիքական Նոր Հիւղա-
տոս Պ. Սուրէկ Տիրբէ իր առաջին այցելու-
թիւնը տուաւ Պատրիարքարանին :

● Կիր. 23 Դեկտ. — Կէսօրէ առաջ, Իսլամաց
Միւսուկ տունին առիթ, Սոյակ Ես-տին պողո-
տայի վրայ հասարակած գինեւորական տողանց-
քին ներկայ եղաւ Աւագ Թարգման Հոգը. Տ. Դա-
ւիթ Վրդ. :

● Դշ. 26 Դեկտ. — Եւրոպացուց Ս. Եննդեան
տունին առիթ, Կէսօրէ առաջ, Ամեն. Սրբ. Պատ-
րիարք Հայրը, ընկերակցութեամբ Գերշ. Սրբա-
զաններու և Հոգը. Վարդապետ Հայրբուս, շնոր-
հաւորական այցելութիւն տուաւ Հատինաց Ս.
Պատրիարքին, Տրտնախոսեանց Կիւսթոսին, Պա-
պական Նուիրակին և Անկիթեան Արքեպսին :

Ապա, Լուսարարագետ Գերշ. Տ. Հայրիկ Եղօ.,
ընկերակցութեամբ Վարդապետ Հայրբուս, Նոյն
առիթով շնորհաւորութեան գնաց Արար-Անկիթ-
եան և Յոյն Կաթողիկէ եպիսկոպոսներուն, Հայ-
կաթողիկէ և Մարոնիթ համայնքի Մեծաւորնե-
րուն և Լուստրականներու և Արար-Լուսեղա-
կաններու Օրէշնեւունն :



Երաւադէմացի Տիրա Թարգման Ա. Խաչատրեան
կատարեց հետեւեալ նորոգութիւններ, իր համզուցեալ
նօր՝ Պոլսեցի Արամ Խաչատրեանի յիշատակին :

● Հրեւսակապեաց եկեղեցւոյ մէջ զարկիքի ա-
շակողման և ձախակողման սիւներու, դռներու,
պատուամեծրու և պակեմեծրու օրջամեծրու մտա-
ցակի նորոգութիւնը և ոսկեղոյն ներկումը, իծպէս
նաեւ Աւագ Սեպանի պակեմեծրու ոսկեղոյն ներկումը,
իւր դասերու երկաթեայ ճաղերու, եկեղեցւոյ արեւ-
մեհան արտաքին դրան և զանգակաւան ներկումը :

Նոյնպէս, ոսկեղոյն ներկի օտուս Ս. Յակոբեանց
Մայր Տաճարի Աւագ դրան Ս. Գիլաղի իւզաների
օրջանակը :

Բ Ա Ր Ե Պ Ա Շ Տ Ա Կ Ա Ն Ն Ո Ւ Է Ր Ն Ե Ր

Շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ կ'արձանագրենք 1962 թուոյ ընթացին Ս. Յակոբեանց Մայր Տանարին եւ այլ Սրբազայրեռու սրտած ճե. եւեալ բարեպաշտական նուէրներ:

- 1. — Կ. Պոլսեցի Տիկիններ՝ Աղաւնի եւ Պայծառ Քէչէճեհեաններէ Պուրասոյի խաչի մը Ս. Գլխադրի մտորան գործածութեան համար՝ ջերուած ձեռամբ Սուրէն Արքեպիս:
- 2. — Ուսրթֆօրտէն (Ամերիկա), Տէր եւ Տիկին Պաղատասար Պաղատիկեան կը նուիրեն արծաթ-սակեզոյն փուլերով գործուած ծածկոց մը Ս. Յակոբայ Աւագ Խրատին:
- 3. — Ատարազարցի Տիկ. Վարդանուշ Արդար եւ Տիկ. Զապէլ Օտապաշեան կը նուիրեն եօթը պղնձեայ աշանակներ եւ զոյգ մը պղնձեայ ծաղկամաններ, Դոմասկոսի գործ:
- 4. — Էսկիշէհիբրցի Տիկ. Իսկուհի Ճանատրէճեան կը նուիրէ սե թաւիչէ եւ սակեթել խաչով շուրջառ մը եւ Աւետարանի ճերմակ բռնիչ մը:
- 5. — Տիկ. Արշալուս Քէշիշեան եւ Օր. Նուարդ Տէր Յովհաննէսեան կը նուիրեն փիլանի ճարմանոց մը, մէջտեղը Աճածին՝ Յիսուս Մանուկը ի գիրի եւ խաչելութեան պատկերով խաչ մը՝ Տէր Յս. Քս. Աճ մակարութեամբ, երկուքն ալ արծաթեայ:
- 6. — Պէյրութարնակ Տիար Գրիգոր Մովլեան կը նուիրէ պղնձեայ սակեջըրուած մեծագիր ըւրվատ մը:
- 7. — Խարբերդցի Օր. Աղաւնի Կիրակոսեան կը նուիրէ իզաների վարագոյր մը Ս. Գլխադրին եւ երկու վարագոյրներ Ս. Յակոբայ զրանց կախուելու համար:
- 8. — Բնիկ Ատանացի Տիկին Սուլթան Կէօլտէրէշեան կը նուիրէ թիւթէրի սակեայ խաչ մը, փաթը փերուզ քարով եւ սակեայ շքեթոյով, Ս. Աճածնայ պատկերին:
- 9. — Վանեցի Տիկ. Սօնա Մուրատեան կը նուիրէ Սիզանի ծածկոց մը ձեռագործ, բաց նորնջագոյն:
- 10. — Պէյրութարնակ Յէջէցի Օր. Թրֆանտա Օնանեան կը նուիրէ Սիզանի ճերմակ ծածկոց մը եւ զանազան գոյններով ութը նայլոնէ խաչի բռնիչներ:

- 11. — Տիգրանակերացի Տիկ. Պայծառ, դուստր Մէմէեանի, կը նուիրէ շարձ ձեռագործներ, վարագոյր, կորփուրայ եւ խորանի ծածկոցներ:
- 12. — Կիրարնակ Ատանացի Օր. Թաւրա Պետոյեան կը նուիրէ կորփուրայ մը, ճերմակ թիւրով բանուած եւ երիզուած արծաթ փուլերով:
- 13. — Կ. Պոլսեցի Տիկ. Նուարդ Կարպետեան կը նուիրէ ասեղնագործ Սիզանի ծածկոց մը:
- 14. — Կ. Պոլսեցի Տիկ. Արուսեակ Սէմէրճեան կը նուիրէ ձեռագործ կորփուրայ մը:
- 15. — Կ. Պոլսեցի Տիկ. Ալիս Ատալայ կը նուիրէ կարմիրով բանուած կորփուրայ մը:
- 16. — Բնիկ Մարգուսնցի Տիկ. Էլմոն Պալեան կը նուիրէ կապոյտի վրայ կորփուրայ մը:
- 17. — Բնիկ Եղեսացի Տիկ. Յրոնիկ Նուարեան կը նուիրէ ասեղնագործ խաչագորդ կարմիր կերպասի վրայ բանուած կորփուրայ մը:
- 18. — Լիբանանարնակ Տիար Յակոբ Քէօշկէրեան կը նուիրէ ինքնաձեռագործ ութը պղնձեայ եռասեղնեան աշանակներ, երեքը զարդարուն եւ երեքը պարզ:
- 19. — Պէյրութարնակ Մալաթիացի Տիկ. Մարիամ Սարգիս Դաւթեան կը նուիրէ Ձիֆթէ Ձիշէլի սակի զաչի մը Ս. Աճածնայ պատկերին:
- 20. — Հալէպարնակ Բնիկ Այնթապցի Տէր եւ Տիկին Ներսէս Պալէօղեաններ կը նուիրեն կորփուրայ մը Ս. Յակոբին:
- 21. — Փարիզարնակ Տիկ. Անգիլէ Քէնեայեան կը նուիրէ ասեղնագործ կորփուրայ մը Ս. Յակոբեանց Տանարին:
- 22. — Պէյրութարնակ Բնիկ Կիւրիցի Տիկ. Անթառամ Արեւեան կը նուիրէ Աւագ Խորանի ծածկոց մը, ինքնաձեռագործ:

ՀԱՅՐԻԿ ԵՊՍ. ԱՍԼԱՆԵԱՆ
Հուսարարպեա Ս. Արաղ

Ս Ի Ո Ն

ՅԱՆԿ ՆԻԻԹՈՅ 1962 ՏԱՐԻՈՅ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն . —		Արտադրին կոչ բովանդակ հայտարեան որ ի սփռուս ասխարհի	100
ՅՆՈՒՇԱՌԱՆ ՎՐԻ. ՋՂՋԱՆՆԱՆ. —		ԹՈՐԻՈՒՄ ՊԱՏՐԻԱՐԹ. — Հայ եկեղեցւոյ հայեացքը եկեղեցիներու միութեան խնդրոյն նկատմամբ	145
Գիլգամեթի դիւցազներգութիւնը	67, 124, 161, 196	ՄԱՂԱՔԻՒՂ ՊԱՏՐԻԱՐԹ ՕՐԻՄԱՆՆԱՆ. — Հայց. եկեղեցւոյ լոյս հատարքը	177, 214, 257, 289
ՄԵՍՐՈՊ ՎՐԻ. Գ. ԳԻՒԳՈՐԵԱՆ. — «Հանդես Ամսօրեայ» (Յոբելի-նական Յուստատեան)	225	Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան շտաբանական եւ մեծակօլու մասնակցութիւնը Ս. Թարութեան Տաճարի նորոգութեան	209
ՋԱԻԷՆ ՎՐԻ. ԱՐՋՈՒՐԱՆՆԱՆ. — ԺԳ. դարու հայերէն ձեռագիր մը	305		
Հայերէն ձեռագիրներ Պոսթրնի մէջ	308		
Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ա Կ Ա Ն . —		Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Տ Ա Ա Կ Ա Ն . —	
ԵՂԻՎԱՐԻ. — Պատկերաստի	13	«ԼՈՅՍ». — Վարդապետութեան աստի-նանները Հայ եկեղեցւոյ մէջ	9, 62, 120, 184, 230, 271, 312
Ս. Մեսրոպ	51		
Տարիներ յետոյ (Ս. Սահակ)	110, 158, 188	Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն . —	
Առուճ է	223	ԳՐ. Ա. ՍԱՐԱՅԵԱՆ. — Յիսուսի ծնունդը	6
Թուչունի բեռով	269	Մարդոց հետ խաղաղութեամբ ապրիլ	58
Մեղքի օտուաններէն (Միանձնուհի)	300	Յիսուսի լացը	103
Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ. — Մեսրոպ Մառտոց	57	Յարութեան պատգամը	107
***	115	Հաւատք եւ առաքինութիւն	150
Քառեակներ	115	Յիսուսի աշխարհի բերած բարձրա-գոյն կեանքը	219
Գ. ՃԱՐՏԱՐ. — Հայ լեզուն	191	Գաւիթի կեանքին մէջ մեծութեան արարներ	295
Անցիկ արագ, ժամանակ երեսնամեակ	224	ԳԷՈՐԳ Ս. ՃԻՆԻՎԼԻՋԵԱՆ. — Հրաւիրք Տեւական խաղաղութիւնը	182, 265
ՀՄԱՅՆԱԿ ԳՐԱՆՆԱՆ. — Ղազար պապային աղօթքը	270	ՀԱՅՐԻԿ ԵՊՍ. ԱՍԼԱՆՆԱՆ. — Խաչին հառը	263
Հրածեօս հոգեօսան	304		
Այս ծառերը, Տէր...	304	Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Վ Ա Ն Ք Ե Ր . —	
		Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ. — Ս. Կարապետ	311
Ի Մ Ա Ս Տ Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն . —		Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն . —	
ՇԱՀԷ ՎԱՐԿԱՊԵՏ (քրգմ.). — Միջոցը եւ ոգիքը	15, 71, 128, 164, 199, 235, 275	Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ. — Առաջին բուլլա Պետրոսի առ Ակակ	309
Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն . —			
Ս. Թարութեան Տաճարէն ներս սկսան նորագոյնութիւնները	3		
Ս. Մեսրոպի ծննդեան 1600ամեակը	33		

Տ Ո Մ Մ Ր Ա Գ Ի Ի Տ Ա Կ Ա Ա Ն . —

ՔիիՅ Ք Հ Ն Յ . Ա Ղ Ա Ն Ն Ա Ն Յ . — Տոմար եւ Յօնացոյց 17, 75

Փ Ա Ռ Է Ն Ա Ր Ղ . Ա Ի Ն Տ Ի Ք Ե Ա Ն . — Տա-
րեկան Տեղեկադիր Ս . Քարգման-
չաց Երկրորդական Վարժարանի 167
Վ Ր Ք Ա Ն Է Ս Ա Ր Ղ . Գ Ա Ա Յ Ճ Ն Ա Ն . —
Տարեկան Տեղեկագիր Ամմանի
Հեթումեան Վարժարանի 173

Ս . Յ Ա Կ Ո Ր Ի Ի Ն Ե Ր Ս Է Ն . —

ՅուՆուար 28
Փետր. — Մարտ » » 87
Ապրիլ — Մայիս » » 137
Յունիս » » 175
Յուլիս » » 208
Օգոս. — Սեպտ. » » 251
Հոկտեմբեր » » 288
Նոյեմբ. — Դեկտ. » » 331

Ե . — Իսպուռ Ամմանի նորակառոյց
վարժարանին 284
ԽՄԲ . — Ակամայանց դարձուրիւն-
ներ 203, 239, 278, 316
Ամեն . Ս . Պատրիարք Զօր Ս . Մենդեան
պատգամը 1
Շնորհաւորական գիր՝ Ամենայն Հայոց
Վեհ. Հայրապետին 26, 135
Շնորհաւորական գիր՝ Մեծի Տանն Կի-
լիկոյ Կաթողիկոսին 27, 136
Շնորհաւորական գիր՝ Քեհրքարցիի
Արքեպիսկոպոսին 27
Շնորհաւորական գիր՝ Հ . Բ . Ը . Միու-
թեան Նախագահին 136
Զեկոյց Գալուստ Կիւլպեկեկեան Հիմնա-
կալիւթեան — Հայկական Գործեր 31, 253
— Կրթաբոսակներ 91
— Ս . Յարութեան Տանարիս վե-
րանորոգութիւնը 212

Ս . Տ Ե Ղ Ե Ա Յ Դ Ի Ի Ա Ն Է Ն . —

Հասիճաց Ս . Մենդեան տօնին առթիւ 22
Յունաց » » » » 23
Հայոց Ս . Մենուցը 24
Ժողովներ Կառավարչախան մէջ 81
Համբարձման Մեքավայրը 82
Ճարտարապետներու Տեղեկագիրը Ս . Յա-
րութեան Տանարի նորոգք. մասին 83
Ս . Յարութեան Տանարի նորոգութիւններ 131
Ս . Յարութիւն — Տեղեկագիր կատար-
ուած նորոգութեանց մասին 246
Ս . Յակոբ — Նորոգութիւններ Մայր
Տանարի գաւթին մէջ 249

Հ . Բ . Ը . Միութեան Համալսարանական
Կրթաբոսակի յայտարարութիւն 90
Հ . Բ . Ը . Միութեան կեանքն ու գործը 92
Հ . Բ . Ը . Միութեան Հրատարակիչ Ընդ-
հանուր Ժողովի 255
Պատասխան Զեկոյց՝ Հ . Բ . Ը . Միու-
թեան Կեդր. Վարչութեանին 327
Կոնգրակ՝ Ամենայն Հայոց Վեհ. Հայրա-
պետին 97
Ազգաբարձութիւն 131
Նուիրատուութիւն Գ . Կիւլպեկեկեան
Հիմնարկութեան կողմէ Ս . Յա-
կոբեանց Տպարանին 133
Գալուստ Կիւլպեկեկեան Մանկապարտէզ
Ամմանի մէջ 133
Ամմանի նորակառոյց վարժարանը 134
Նօք եւ Նիօք 324
Գնահատանք 329
Վերհրատարակուող «Revue des Études
Arméniennes» հանդէսին 330
Բարեպաշտական նուէրներ 333

Ա Յ Լ Ե Ի Ա Յ Լ Ք . —

Ա Ն Ո Ւ Շ Ա Ի Ա Ն Վ Ր Գ . Զ Ղ Զ Ա Ն Ն Ա Ն . —
Ճեղուռ մը 21
Ն Ո Ր Ա Յ Ր Ե Պ Ս . — Կորիւնի ժամանա-
կագրական վերջաբանը 39
Շ Ա Հ Է Վ Ր Գ . Ա Ճ Է Մ Ն Ա Ն . — Մեքուպ-
լիսոց 40, 116, 154, 192
Յ Ա Կ Ո Ր Վ Ր Գ . Վ Ա Ր Ի Ա Ն Ն Ա Ն . — Գիրիկ
խմաստն ու դերը 45
Գ Է Լ Ո Ւ Գ Ճ Ի Ն Ի Վ Ի Զ Ն Ա Ն . — Օտականի
սուրբը 49
Զ Ա Ի Է Ն Վ Ր Գ . Ա Ր Զ Ո Ւ Մ Ա Ն Ն Ա Ն . —
Հոգեհանգստեան պատճեն Նքով-
պիոյ Կայսրուհիին համար,
Ուեսթմինսթերի Աբբայարանին մէջ 80



«ՍԻՈՆ»Ի ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԸ ԵՒ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԳՐԱՆԸ
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆ ՀԵՏԵԻԵԱԼ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

St. Sarkis Charity Trust present the following books:—

- a) PALESTINE, The Meaning of Disaster - Constantine K. Zurayk. Beirut, 1956,
- b) SYRIA AND LEBANON - A. H. Hourani. London, 1954, pp. 402. [pp. 74.
- c) ARAB TURKISH RELATIONS AND THE EMERGENCE OF ARAB NATIONALISM - Zeine N. Zeine. Beirut, 1958, pp. 156. [pp. 297.
- d) THE STRUGGLE FOR ARAB INDEPENDENCE - Zeine N. Zeine. Beirut, 1960,
- e) THE MOSLEM BRETHERN - Ishak Musa Husseini. Beirut, 1956, pp. 186.
- f) CRUSADER CASTLES - R. Fedden & John Thomson. London, 1957, pp. 127.

THE BANTU REACTION TO CHRISTIANITY - A. V. Wood. Presented by «Prism» Magazine. London, pp. 16.

Leo Hamalian presents:—

[York, 1961, pp. 607.

- a) PULITZER PRIZE READER - Edited by Leo Hamalian and E. L. Volpe. New York, 1961, pp. 448.
- b) SEVEN SHORT NOVEL MASTERPIECES - Edited as above. New York, pp. 448.

The Chester Beatty Library «CATALOGUE OF THE ARMENIAN MANUSCRIPTS» - Sirarpi Der Nersessian (presented by the author). Vols. I. & II. Dublin, Hodges Figgis & Co. Ltd., 1958, pp. 216 and 67 plates.

LEON V DE LUSIGNAN - Armand J. Bedrossian (présenté par lui). Paris, pp. 111.

MESROP ARCHBISHOP HABOZIAN - Pages of Glory. A Mekhitarist Inf. Centre Publication & presented by them. Cambridge, 1961, pp. 32. (English & Armenian).

RICHARD CARDINAL CUSHING - An appreciation. Arakelian-Ryan. A Mekhitarist Inf. Centre Publication (presented as above). Cambridge, 1959, pp. 70.

UNESCO - What it does, what it is and how it works (A small brochure). Presented

HERE IS AMERICA - Facts about the United States. Pp. 85. [by Frank Harris.

TOWARDS EQUALITY IN EDUCATION - Pierre Juvigny. Presented by F. Harris. Paris, 1962, pp. 77.

MEDICAL RESEARCH AND THE DEATH PENALTY - Jack Kevorkian (presented by the author). New York, 1960, pp. 75.

CONTEMPORARY PHILOSOPHIC PROBLEMS - Edited by Y. H. Krikorian & Abraham Edel. Presented by Y. H. Krikorian. New York, 1959, pp. 712.

BASIC PROBLEMS OF PHILOSOPHY - Edited by D. J. Bronstein, Y. H. Krikorian and P. P. Wiener. Presented as above. New York, 1961, pp. 592.

THE PROMISE OF THE FATHER OR THE HOLY SPIRIT - A. T. Glass (presented by the author). New York (printed in Beirut, Lebanon), pp. 61.

THE GROWTH OF A NATION - Emerson Brooks. New York, 1956, pp. 320.

MY LIFE FOR MY SHEEP (A Biography of Thomas A. Becket) - Alfred Duggan. New York, 1955, pp. 341.

Խմբագրողը - Բաղրիմեյի արմենի արքայապետը
Խմբագրողը - Բաղրիմեյի արմենի արքայապետը

Կողմից - Բաղրիմեյի արքայապետը

Կողմից - Բաղրիմեյի արքայապետը

Կողմից - Բաղրիմեյի արքայապետը

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor - Archbishop Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

ROAD ATLAS - All State Motor Club (United States, Canada, Mexico). Pp. 112.
THE SYMBOLISM OF THE ARMENIAN CHURCH - Rev. Torkom Saraydarian (presented by the author). Van Nuys, California, 1962.

George A. S. Goddard Fund, New York, present the following publications (all books are published by Fr. A. Praeger, N. York):—

- a) THE AFRICAN NATIONS AND WORLD SOLIDARITY - Mamadou Dia. 1961,
- b) SOVIET MAN AND HIS WORLD - Klaus Mehnert. 1961, pp. 310. [pp. 145.
- c) REVISIONISM - Leopold Labedz. 1962, pp. 404.
- d) AFRICA AND THE WEST - Arnold Rivkin. 1962, pp. 241.
- e) HUNGARY TODAY - By the Editors of «Survey». 1962, pp. 104.
- f) COM. CHINA'S FOREIGN POLICY - R. C. Boyd. 1962, pp. 147.
- g) THE KREMLIN SINCE STALIN - W. Leonhard. 1962, pp. 403.

SURREALISM - The Road to the Absolute - Anna Balakian (presented by the author). New York, 1959, pp. 209.

LOANS AT WORK & WORLD BANK - 1962 May. Washington, pp. 36.

Պարթիզակը հասուիկ - Յակոբ Տէր Յակոբեան: Նուէր նուպարեան Մատենադարանէն, Փարիզ, 1960, էջ 525:

Ալիքներ - Լիւսի Մալխասեան: Նուէր ըստ վերնոյն: Փարիզ, 1960, էջ 141:

Ասեմագրութիւն Պասգամուտարական ժողովի (11 Հոկտ. 1961) - Պաշտօնական Հրատարակութիւն Ազգային Պատրիարքարանի, Պոլիս: 1961, էջ 38:

Տրիդնեսեան Ս. ժողովին Քրիստոնեական Վարդապետութիւնը - Թրգմ. Վարդան Վ. Թէքէեան (նուիրատու): Պէյրութ, Հայ Կաթողիկէ Տպարան, 1962, էջ 730:

Բ. Մնացորդը (Ապրիլ 24ի Ազգ. Սպասունին առթիւ) - Տրգրան Յարութիւնեան: Նուէր «Ահան» Գրատունէն: Պէյրութ, 1962, էջ 27:

Դասուներ Մեր 100ամեայ Յեղափոխութեան Մասին - Սարգիս Իվմիրեան: Նուէր ըստ վերնոյն: Պէյրութ, 1962, էջ 71:

Յեղափոխական Ալպոմ - Աւօ (նուիրատու): Գ. Շարք, 1962 թիւ 9, 11 և 12:

Ընդհ. Տեղեկագիր Հ. Բ. Ը. Մ. Ի 1959 Տարեցոյնի: Նուէր Հ. Բ. Ը. Մ. էն: էջ 74:

Նոյնին Անգլերէնէն: էջ 54: [էջ 20:

Վեհափառը - «Սան» Հանդէսի Յուլիս 1961ի համարը: Նուէր Շահան Մ. Վրդ. Սվանհանէ: Աղբիւր Յոյի եւ Արուեսթի - Արմէն Բարաղամ (նւրտ.): Ֆրէչնօ, 1960, էջ 211:

Պատանի Արօսը - Արամ Երեմեան (նուիրատու): Հրտ. Արամեան Սանուց Միութեան, Իսթանպուլ, 1962, էջ 77:

Երեսնամեակ Լիբանանայ Սգնուրեան Խաչի - 1930-1960: Նուէր Լ. Սասունիէ: Պէյրութ, Դուրիթ Վրդ. Սահակեան կը նուիրէ: — [1962, էջ 193:

ա) Սմբատ Սպարապետ - Ս. Գ. Գալստյան, Երեզան, 1961, էջ 178:

բ) Հայկ. Հերոսական Էպոսը - Հովսեփ Օրբիլի: Երեզան, 1956, էջ 137:

գ) Դրվագներ Հայ Ազասագրական Մեքի Պատմութեան (Գիրք Ա.) - Աշոտ Հովհաննիսյան: Երեզան, 1957, էջ 523: [վան, 1959, էջ 628:

դ) Հայ Սրաժեռութեան Պատմութեան Ակնարկներ - Ալեքսանդր Շահվերդեան: Երեւն, 1960, էջ 634:

ե) Լեզվաբանութեան Պատմութեան (Հատոր 1) - Գ. Զարուկ: Երեզան, 1960, էջ 634:

զ) Փամանակակիցները Կոմիտասի Մասին - Կազմից Գ. Կարապետ Ն. Գասպարյան: Երեզան, 1960, էջ 338: [Սյրէս 424 էջ 31:

Անակնկալ Փամանց (Զաւեշտ 1 արար) - Ս. Կօլտուէլ: Նուէր Վարդան Գեւորգեանէ: Պ. Շողական (Ընթերցարան, Բ. Տարի) - Հրատ. և Նուէր Բերիոյ Թեմի Ուսումնական Խորհուրդէն: Հալէպ, 1959, էջ 139:

Լուսարձակ - Մանկավարժական Քերական: Հրատ. և Նուէր Կ. Տէմիրճեան Գրատան: Հալէպ, 1962, էջ 56: [Երզանհանէ, Պէյրութ:

Ապրի Այնպէս Որ Ձգլըսա - Երաժշտ. Փրօֆ. Մարտիրոս Պուճրգանեանի: Նուէր Յ. Պուշարեպին Կրդ. Յովակիմեանց (Հայերէն և Անգլերէն): Նիւ Եորք. Կրատ. և Նուէր Ամեթիկայի Հայոց Աւաջնորդարանի, 1962, էջ 32:

Նաբ-Դոս - Գ. Յովսէփեան: Նուէր Ա. Օ. Ք. Ս. էն: Երևան, Հայպետհրատ, 1961, էջ
 Հրեղին Զին (Մանկապատանեկան հէքեաթներ): Իսթանպուլ, 1962, էջ 27: [480,
 Հայ-Ասլաւ - Յ. Պապէտեան (Նուիրատու): Լոս-Անճէլըս-Ֆրէզնօ, 1954, էջ 327:
 Ս. Մեսրոպ Մաւցոց (Կենսագրական) - Ներսէս Քչյ. Բարսեբան (Նուիրատու): էջ Է +
 E (Հայերէն և Անգլիերէն), Հոկտ. 1961:
 Ուսումնասիր Տղան (Տրամախօտութիւն) - Ձայնագրից Յակոբ Հ. Պայլերան (Նուիրատու):
 Աթէնք. 1962, էջ 9: [Խանէ, 1962,
 Օժում Հոգեգալստեան Ս. Եկեղեցւոյ - Թրթրօյի, Լիբանան: Նուէր Պարզ և Յովհաննէս-
 Սամսոնի Հայուրեան Տխուր Բաժինը 1915-1918ի Մեծ Եղեռնէն - Օթոն Յ. Հէքիմեան
 (Նուիրատու): Փարիզ, 1961, էջ 142:
 Ա. Օ. Ք. Ս. էն ստացանք Ա. Զեխովի Երկերու Ա. Բ. Գ. Դ. և Ե. Հատորները: Տպ.
 Վիեննայի Միխայիլան Մատենադարանէն ստացանք. — [Երևան, 1961 և 1962,
 ա) Տօնացոյց - 1961: բ) Տօնացոյց - 1962:
 գ) Պանդոկի Գոյր - Հ. Գէորգ Վ. Փանչիկեան:
 զ) Կուսիմանոյ ժամանակագրութիւն եւ Կարողիկէ Հայերը Կուսիմանոյ - Հ. Պ.
 Զօրթեան և Հ. Իգնատիոս Աքեան:
 Կ) Պատմութիւն Հայ Լեզուաբանութեան (Հատոր Ա., Պոլսոյ Մշա-
 կութեան Ընկերութիւնները) - Հ. Եփրեմ Վ. Պողոսեան: [Կողման:
 զ) Կեանք Մը Նուիրած Ասուծոյ եւ Ազգին (1911-1961) - Հ. Մեսրոպ Վ. Հա-
 է) HUNDERTFUNFZIG JAHRE MECHITARISTEN IN WIEN (1811-1961) - Von
 P. Dr. Vahan Inglisyan, CMV. 1961, pp. 198.

(Շարունակելի)

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ Ս. ԱԹՈՒՈՅՍ ՏՊԱՐԱՆԷՆ

ՕՐԱՅՈՅՑ
1963

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻՅ]
 (ԸՍՏ ՇԻՆ ՏՈՍԱՐԻ)
 և
 Բուն Թուականին Հայոց
 ՏՆՄԵ - ՏՆՄՁ = 4455 - 4456
 և
 Տումարական Թուականին Հայոց
 ՌՆԺԲ - ՌՆԺԳ = 1412 - 1413

ՏՊԱՐԱՆ ԵՐԱՆ ՅԱԿՈԲԵԱՆՆ
ԵՐՈՒՍԱԿԵՄ

էջ' 155

Գին' 100 Հիւս

ՍԵՐ ԷՏՈՒՆՆԵ ՈՒԹԵՔԵՐ
 Անգամ Արեւայական Ընկերութեան

ՄԻՋՈՅԸ
 և
ՈՒԴԻՆ

ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԻԵՋԵՐԻԲԻ ՄԱՍԻՆ ԵՒ
 ՓԱՍՏԵՐ ԱՍՏՈՒԾՈՆ ԳՈՅՈՒԹԵԱՆ

ՅԱՐԳԱՆՆԵՆ
 ԵԱԶԷ ՎՐԳ, ԱՃԷՄԵԱՆ

ՅՊԱՐԱՆ ԵՐԱՆ ՅԱԿՈԲԵԱՆՆ
 ԵՐՈՒՍԱԿԵՄ - 1961

էջ' 205

Գին' 300 Հիւս